

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐ

2016թ. հուլիսի 15



ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ

Գիտաժողովի զեկուցումների դրույթներ
2016թ. հունիսի 15

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 94 (479.25):06
ԳՄԴ 63.3 (5Հ)
Հ 282

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հայագիտական
ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական
հիմնադրամի հովանավորությամբ**

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Գ.Ա.Պողոսյան

Հ 282 Հայոց նորագույն պետականության քառորդ դարը. գի-
տաժողովի զեկուցումների դրույթներ. Եր., «Գիտու-
թյուն» հրատ., 2016, 185 էջ:

Գրքում զետեղված են Հայաստանի Հանրապետության
25-ամյա տարելիցին նվիրված հանրապետական գիտաժողովի
(2016 թ. հուլիսի 15) գիտական զեկուցումների դրույթները:

ՀՏԴ 94 (479.25):06
ԳՄԴ 63.3 (5Հ)

ISBN 978-5-8080-1226-4
© ՀՀ «Գիտություն» հրատարակչություն, 2016

**Ի.ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐՎԱ
ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Գևորգ Պողոսյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐԻՆ

Ուղիղ քսանհինգ տարի առաջ՝ 1991թ. օգոստոսին, Հայաստանի Գերագույն խորհրդի նախաձեռնությամբ Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը, անկախության հանրաքվեին ընդառաջ, հանրապետությունում անցկացրել էր հասարակական կարծիքի հարցում: «Համաձայն եք, որ Հայաստանը լինի անկախ ժողովրդավարական պետություն» հարցին բնակչության 64%-ը տվել էր դրական պատասխան: Այդ պահին արդեն ակնհայտ էր, որ մեր բնակչության մեծամասնությունն անկախության հանրաքվեի ժամանակ կտա դրական պատասխան: Մակայն ստացված արդյունքներից երևում էր, որ ավագ սերնդի ներկայացուցիչները (45 և ավելի բարձր) ավելի զգույշ էին այս հարցում, քան երիտասարդները: Պատճառները, ընդհանուր առմամբ, պարզ էին. Արցախի չլուծված խնդիրը, սահմանների անվտանգությամբ պայմանավորված անհանգստությունը, տնտեսական խորը ճգնաժամը, ադետայի երկրաշարժից վնասված բնակավայրերի վերականգնման դանդաղ տեմպերը: Նշենք, որ դրանից մեկ տարի առաջ՝ 1990 թվականի օգոստոսի 23-ին, Հայաստանի Գերագույն խորհուրդն արդեն ընդունել էր մեր անկախության հռչակագիրը:

Նախկին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող հանրապետությունների անջատման գործընթացն այնքան արագ էր տեղի ունենում, որ գրեթե ոչ ոք չէր ուզում լսել նույնիսկ նոր միության կամ դաշինքի ստեղծման մասին: Միաժամանակ նրա մեկ այլ մասը մտավախություն ուներ երկու հարևան երկրների հնարավոր ագրեսիայի կապակցությամբ: Ժամանակը ցույց տվեց, որ երկուսն էլ ճիշտ էին:

Ադրբեջանը դաժան պարտություն կրեց ու մեծ կորուստներ ունեցավ: Հայերն այն ժամանակ ազատագրեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մարզը, այլ նաև հարակից մի շարք շրջաններ: Վերջին մի քանի հարյուրամյակում դա հայերի ամենամեծ ռազմական հաղթանակն էր:

Անկախությունից մի քանի տարի անց մեր ուսումնասիրությունները վկայեցին հասարակության գիտակցության մեջ տեղ գտած նոր տրամադրությունների մասին:

Մեր հանրային գիտակցությունը կարճ ժամանակում ապրեց լուրջ էվոյուցիա՝ նոր կարգերի քաջալերումից մինչև հիասթափություն և քաղաքական ապատիա: Դժգոհություն ու հիասթափություն իշխանություններից, ինչպես նաև ընդդիմությունից, նույնիսկ անկախության՝ դարեր շարունակ փափագած գաղափարից: Ժողովուրդն ապրեց խոր քաղաքական օտարվածություն: Երկարատև գոյապայքարն առաջացրել էր հասարակության սոցիալական հոգնածություն և որպես հետևանք՝ անտարբերություն ամեն ինչի նկատմամբ: Լայն տարածում էին գտել կարոտաբաղձական տրամադրությունները և սոցիալիստական, հավասարեցման գաղափարները:

Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ զանգվածային գիտակցության մեջ «ուժեղ ձեռքի», ուժեղ իշխանության վերադարձի պահանջ կար: Նման իրավիճակի հետագա խորացումն ու զարգացումը հանգեցրին «տոտալիտար կոնվերսիայի» կամ ուժեղ ավտորիտար իշխանության վերականգնման:

Սոցիալական իրավիճակը շարունակում էր մնալ լարված: Բնակչության 85%-ը գտնվում էր աղքատության եզրին: Մոտ 25-30%-ը օգնություն էին ստանում արտասահմանում ապրող բարեկամներից և ընտանիքի՝ արտերկրում աշխատող անդամներից:

1990-1993թթ. տնտեսական բարեփոխումները մեծ թափ ստացան, նկատվեց փոքր բիզնեսի ու մասնավոր առևտրի լուրջ աշխուժացում: Սակայն հետո տեղի ունեցավ անկում՝ շրջափակման, շարունակվող պատերազմի ու վարչական ապարատի վերահսկող մարմիններում վտանգավոր չափերի հասած կոռուպցիայի և կաշառակերության պատճառով: Հայաստանում հաստատվեց շուկայական տնտեսության վատթարագույն՝ ասիական մոդելը: Լիբերալ-բուրժուական հեղաշրջումը Հայաստանում, ինչպես և ԱՊՀ-ի այլ երկրներում, իշխանության բերեց խոշոր բիզնեսի շահերին ծառայող վարչակազմ:

Տեղի ունեցավ հասարակության խիստ բևեռացում: Մի կողմից՝ հարյուր հազարավոր մարդիկ ընկան աղքատության գիրկը, մյուս կողմից՝ առաջ եկան տասնյակ նորաթուխ մեծահարուստներ: Հազարավոր մարդիկ ստիպված արտագաղթի ճանապարհին ընտրեցին: Մեր հարցումներով բնակչության 55%-ը հոգեբանորեն պատրաստ էր երկրից հեռանալու առաջին իսկ հնարավորության դեպքում:

Արևմուտքի դեղատոմսերով իրականացվող դեմոկրատական ռեֆորմը բերեց իրականում ոչ թե ազատ շուկայի ստեղծման, այլ տիպիկ ասիական հարաբերությունների զարգացման, որը բնորոշ է փոքր, քիչ զարգացած «բանանային» հանրապետություններին: Սակայն քաղաքական հարաբերություններում դեմոկրատական նորամուծություններն ավելի խորը սերմանվեցին և առայժմ պահպանվում են: Մամուլի ու խոսքի ազատությունը դրա լավագույն վկայությունն է:

Անկախության ձեռքբերումներից ամենակարևորը, իհարկե, պատերազմական հաղթանակն ու Արցախի անկախացումն

էր, ինչպէս նաև մեր անկախ պետականության հետագա ամրապնդումն ու զարգացման երաշխիքը:

Անցած դարի 90-ական թվականների առաջին տարիների ծանրագույն լարվածությամբ, զրկանքներով, անմարդկային պայմաններին հերոսաբար դիմակայելով՝ հայ ժողովուրդն իր զավակների մարտական սխրագործությունների ու կյանքի գնով նվաճեց Արցախի ազատությունը և հաստատեց իր պետական անկախությունը: Այսօր մեզ համար պարզ է, որ դա մեր նորագույն պատմության հերոսական էջերից է:

Հայ ժողովրդի պատմության մեջ XX դարի հատկապէս վերջին տասնամյակն ապագա պատմաբանները կգնահատեն որպէս «ոսկե դար»: Պատմական հեռադիտակով ուսումնասիրելով այդ ժամանակաշրջանը՝ նրանք կտեսնեն, որ հայերին հաջողվեց նվաճել երեք հսկա, դարաշրջիկ ձեռքբերում. վերականգնել ու պաշտպանել հայոց անկախ պետականությունը, ազատագրել Արցախ աշխարհը և միջազգայնացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը:

Իսկ մնացած բոլոր այն խնդիրները, որ այսօր մեզ հուզում են՝ բնակչության արտագաղթ, սոցիալական բևեռացում, ցածր կենսամակարդակ, կոռուպցիա, պատերազմի վտանգ, օրինականության պակաս, արդարության անկում, բարոյական դեգրադացիա և շատ ու շատ այլ թերություններ, գուցե անխուսափելի մանրուքներ թվան հեռավոր ապագայից դիտարկելիս: Դրանք միգուցե միայն այսօրվա մանրադիտակով են հսկայական թվում:

Հուսանք, որ այդպէս էլ կլինի, և մեր այսօրվա կյանքի կրնճոտ ծալքերն առաջիկա 20 տարիներում կհարթվեն ու կմոռացվեն:

Геворк Погосян
Академик НАН РА,
доктор социологических наук, профессор,
директор Института философии, социологии и права НАН РА

РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 25 ЛЕТ

Ровно четверть века назад армянский народ выбрал путь независимости и, выйдя из состава Советского Союза, восстановил свою утерянную некогда государственность и начал строительство нового демократического государства. В первые годы независимости народ с воодушевлением встретил призыв властей и вновь избранного парламента развивать у себя в стране демократию и установить в экономике либеральные рыночные отношения. Но уже тогда было ясно, что объективные условия войны, экономической блокады, энергетического кризиса и тяжелых последствий катастрофического землетрясения в северных регионах, окажутся серьезным препятствием на пути начатых политических реформ и модернизации страны.

Все это очень скоро отразилось на общественных настроениях, сформировав политическое отчуждение, социальную апатию, растущее обнищание населения, безработицу и потоки мигрантов, покидающих родные города и села. Однако, несмотря на колоссальные трудности, армянскому народу за истекшие четверть века удалось не только сохранить и укрепить свою государственность, но также одержать убедительную победу в неравной борьбе за независимость Нагорного Карабаха, создать второе армянское государство в регионе и гарантировать его безопасность.

Конечно, эти победы и достижения были бы невозможны без содействия дружественных государств и беспрецедентной и решительной поддержки огромной армянской диаспоры зарубежом.

Gevorg Poghosyan
Full Member of the NAS RA,
Doctor of Sociology, Professor,
Director of the Institute of Philosophy, Sociology
and Law NAS RA

25 YEARS OF REPUBLIC OF ARMENIA

Exactly a quarter of a century ago the Armenian people have chosen the path of independence and coming out of the Soviet Union, restored its statehood once lost, and began construction of a new democratic state. In the first years of independence, people are encouraged to call the authorities and have met the newly elected Parliament to develop their own country to establish democracy and liberal economic market relations. But already then it was clear that the objective conditions of war, economic blockade, energy crisis and the severe consequences of catastrophic earthquake in the Northern regions, will be a serious obstacle to the initiated political reforms and modernizing the country.

All this is very soon affected the public mood, forming political alienation, social apathy, the growing impoverishment of the population, unemployment and migration flows, leaving their towns and villages. However, despite tremendous difficulties, the Armenian people during the past quarter of a century managed not only to maintain and strengthen its statehood, but also to win a landslide victory in the unequal struggle for the independence of Nagorno-Karabakh, to create a second Armenian state in the region and to ensure its defence.

Of course, these victories and achievements would have been impossible without the assistance of friendly countries and unprecedented and resolute support of the huge Armenian Diaspora abroad.

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի պատմության պարբերացման խնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է նկատի առնել ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական կարևորագույն նախադրյանների առկայությունը: Պարբերացման հարցում, որպես կանոն, առաջնային նշանակություն են ունենում ազգերի ձևավորման ու պետականության զարգացման գործընթացները, որոնք հաճախ ընթանում են զուգահեռաբար: Պատահական չէ, որ շատ դեպքերում ժողովուրդների պատմության պարբերացման հիմքում ուղղակի ընկնում է պետականության ստեղծման ու զարգացման հայեցակարգը: Այդ իմաստով հայոց պատմության պարբերացումը մեծապես պայմանավորվում է պետականության գոյության կամ դրա գաղափարական դրսևորումների հանգամանքներով: Ավելին՝ հին, միջին, նոր և նորագույն պատմության դարաշրջանները հիմնականում համապատասխանում են պետականության զարգացման շրջափուլերին:

1.Հին հայոց պետականության շրջանն ընդգրկում է վաղնջական ժամանակներից մինչև IV դարի սկիզբն ընկած հատվածը, որն իր հերթին կարելի է տրոհել հետևյալ փուլերի. ա) վաղագույն պետականություններ՝ Ք. ա. III հազարամյակից մինչև Ք.ա. IX դ. (Արատտա, Արմանում, Արմե-Շուբրիա, Հայասա, Դայա, Էթիունի և այլն), բ)միասնական պետականություններ՝ Ք. ա. IX դարից մինչև Ք. հ. IV դ. սկիզբ (Վանի կամ Արարատյան (Բիայինիլի, Ուրարտու) թագավորություն, Երվանդական և Արտաշեսյան տիրակալության շրջան և Արշակունիների գահակալության առաջին փուլ):

2. Միջնադարյան պետականության շրջանը ներառում է IV դարից XVI դարի կեսերը: Առաջին փուլը (վաղմիջնադարյան պետականություն) սկսվում է պետական մակարդակով քրիստոնեության ընդունման իրադարձությամբ և ավարտվում 885 թ. Բագրատունիների թագավորության ստեղծումով: Ընդ որում՝ 428 թ. Արշակունիների անկումով պետականությունը ոչ թե վերանում է, այլ ձեռք է բերում նոր դրսևորում. այն թագավորից անցնում է նախարարական դասին: Արևելյան Հայաստանում պետականության որոշակի հատկանիշների կրողը դառնում են մարզպանական, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապական համակարգերը: Հայկական ինքնատիպ իշխանապետություն է ստեղծվում VII դարի երկրորդ կեսին: Երկրորդ փուլը (զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի պետականություններ) վերաբերում է Բագրատունիների վերելքին և հայկական նոր թագավորությունների (Վասպուրական, Վանանդ, Տաշիր-Ձորագետ, Սյունիք, Զաքարյանների իշխանապետություն, Կիլիկիայի իշխանության շրջան և այլն) ժամանակներին՝ IX դ. կեսերից մինչև XIII դարի առաջին երեսնամյակը: Երրորդ փուլը ներառում է (Կիլիկյան թագավորության և պետականության վերականգնման համար փորձերի շրջան) Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը և նրա անկումից հետո պետականության վերականգնման ուղղությամբ Վասպուրականում և այլուր XV դարում ձեռնարկած քայլերի ժամանակները, այսինքն՝ XIII դարի 30-ական թվականներից մինչև XVI դարի կեսերը:

3. Նոր ժամանակներում պետականության (XVII դար – 1918 թ.) պատմությունն ունի իր առանձնահատկությունները. բացակայում է համահայկական պետականությունը, այն առկայծումներով ու զանազան դրսևորումներով ինքնիշխան կազմավորումների (սղնախներ, մելիքություններ) տեսքով երևան է գալիս միայն Հայաստանի առանձին շրջաններում՝ Մոկսում, Շատախում, Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Կիլիկիայի

լեռնային հատվածներում (Զեյթուն): Այդուհետ շարունակվում են ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր շղթայում պետականության վերականգնման համար քայլերը Սյունիքում ու Արցախում (XVIII դարի 20-40-ական թվականներ), որը պսակվում է Խամսայի մելիքությունների ստեղծումով: Այդ փուլը պայմանականորեն կարելի է անվանել Նոր ժամանակների ազատագրության ու պետականության վերականգնման համար պայքարի սկզբնափուլ:

Նոր ժամանակներում խիստ կարևորվում է XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբին Հայաստանի ազատագրության ծրագրերի մշակումը՝ որպես հայ-հասարակական մտքի պատմության մեջ պետականության վերականգնման համար շարժման յուրահատուկ արտահայտություն: Նոր դարաշրջանը եզրափակվում է 1918 թ. մայիսյան հերոսամարտերով, որոնց բովում վերականգնվում է Հայոց պետականությունը:

4. Հայոց պետականությունը նորագույն ժամանակներում
ներկայանում է երեք հանրապետությունների պատմափուլերով՝ 1918-1920, 1921-1991 և 1991- 2016 թթ.: Թեպետ իրենց քաղաքական համակարգով այդ հանրապետություններն արմատապես տարբերվում են միմյանցից, սակայն նորագույն ժամանակներում դրանք կազմում են մի ընդհանուր շղթա և այդ իմաստով երկրորդ՝ Խորհրդային Հայաստանը ևս բնութագրվում է որպես պետականություն (իհարկե՝ ոչ անկախ)՝ պետությանը բնորոշ իր որոշակի հատկանիշներով, որոնց հիման վրա էլ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ՝ անկախ Հայաստանի Հանրապետությունը:

THE STAGES OF DEVELOPMENT OF ARMENIAN STATEHOOD

Summary

The processes of formation of nations and development of statehood that often are held simultaneously, as a rule, have primary importance in the periodization of history of each country and people. It is not accidental that the periods of Ancient, Medieval, New and Newest History are basically in line with the stages of development of Statehood.

The stage of the Ancient Armenian statehood starts from the primordial times till the beginning of the 4th century. In its turn it can be divided into several periods. The stage of Medieval statehood includes period from the 4th century till the mid of the 16th century. The history of Statehood has its peculiarities in the New stage (the 17th century -1918). There was no Pan -Armenian statehood during that time. It emerged in a form of various sovereign state entities (sghnakhs, melikdoms) only in some regions of Armenia.

The Armenian statehood in the Newest stage is presenting by the historic periods of three Republics – 1918-1920, 1921-1991, and 1991-2016.

Ашот Мелконян

ЭТАПЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Резюме

Процессы формирования наций и развития государственности, которые часто протекают одновременно, как правило, имеют первостепенное значение в периодизации истории каждой страны и

народа. Не случайно, что периоды древней, средневековой, новой и новейшей истории, в основном соответствуют этапам развития государственности.

Этап древней армянской государственности начинается с первобытных времен до начала IV-го века, который в свою очередь, можно разделить на несколько периодов. Этап средневековой государственности включает в себя период с IV-го века до середины XVI-го века. История государственности нового времени (с XVII -го века до 1918г.) имеет свои особенности: не было общеармянской государственности, она возникла в виде различных суверенных государственных образований (схнахов, меликств) только в некоторых регионах Армении.

Армянская государственность новейшего этапа предстает в виде исторических периодов трех республик - 1918-1920гг., 1921-1991гг. и 1991-2016гг.

Էդիկ Մինասյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՄԱՆՀԻՆԳԱՍՅԱ ՈՒՂԻՆ

Անկախ պետականության հաստատումը կամ վերականգնումն ամեն մի ժողովրդի բաղձալի ցանկությունն է, երազանքը: Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում բազմիցս կորցրել ու վերականգնել է իր պետականությունը: Այդպես եղավ նաև XX դարի վերջին, երբ ստեղծվեց Հայաստանի Երրորդ հանրապետությունը: Այն ոչ միայն ստեղծվեց Հայաստանի Առաջին (1918-1920) և Երկրորդ (1920-1991) հանրապե-

տությունների հիմքի վրա, այլև դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը:

1990թ. օգոստոսի 4-ին հանրապետությունում նորընտիր խորհրդարանը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց ՀՀՇ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին: Դրանով վերջ տրվեց կոմկուսի մենիշխանության յոթանասունամյա շրջանին:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան ազգային անկախ պետականության ստեղծմանը: 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը, որով դրվեց անկախացման գործընթացի սկիզբը:

Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներից ու նպատակներից՝ կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու համար, Հայաստանի Գերագույն խորհուրդը նույն թվականի մարտի 1-ին որոշեց 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու վերաբերյալ: 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն՝ 2 մլն 43 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը) «այո» ասաց անկախությանը: Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991թ. սեպտեմբերի 23-ին Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Հայաստանում նախ ստեղծվեց խորհրդարանական հանրապետություն, ապա նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով մտցվեց նախագահական (պրեզիդենտական) կառավարման համակարգ: Արդեն ստեղծված նոր օրենսդրու-

թյամբ 1991թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության առաջին նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Անկախության ուղին բռնած հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասում: Այն փաստորեն կտրվել էր նախկին տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Ադրբեյջանից եկող գազամուղը: Սկսվեց Հայաստանի էներգետիկ շրջափակումը, որն աստիճանաբար ավելի մեծ չափեր ընդունեց: Դադարեցին գործելուց հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները, և ընդհատվեցին պարապմունքներն ուսումնական հաստատություններում, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի շուտով ընդհատվեց նաև երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստօրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը: Տարածաշրջանում լարվածությունը հետզհետե ավելի էր սրվում:

Անկախ պետության հռչակումից և հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ, պետականության կայացման ու ամրապնդման շրջան:

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: 1991թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992թ. մարտի 2-ին ՀՀ-ն դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) լիիրավ անդամ, իսկ 2001թ. հունվարի 25-ին Եվրախորհրդի անդամ: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը:

ՀՀ-ի անկախացումից հետո հրամայական էր դարձել իշխանության նոր մարմինների ձևավորումը: Այդ գործընթացը սկսվել էր դեռևս 1990թ. մայիսին կայացած Գերագույն խորհրդի ընտրություններից հետո: Պետական կառավարման նոր համակարգի ձևավորման համար հանրապետությունում ընդունվեցին մի շարք օրենքներ: Հարկավոր էր ամրապնդել պետական կարգը: ՀՀ «Անկախ պետության հիմնադրույթների մասին» սահմանադրական նոր օրենքով հաստատվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը:

1990թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով, որի վրա դրվեց նոր Սահմանադրության նախագծի մշակման կարևոր խնդիրը: Սահմանադրության մշակված տարբերակը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո՝ 1995թ. հուլիսի 5-ին դրվեց համաժողովրդական հանրաքվեի: ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի Երրորդ հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը, օրհներգը, ՀՀ նախագահին ընձեռված բացառիկ մենաշնորհային լիազորությունների սահմանափակումը, ՀՀ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և այլն:

Նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներից հետո՝ 2005թ. նոյեմբերի 27-ին, ընդունվեց ՀՀ Սահմանադրության բարեփոխված տարբերակը, իսկ 2016թ. դեկտեմբերի 6-ին՝ միանգամայն նորացված սահմանադրությունը, որով կառավարման կիսանախագահական համակարգից անցում է կատարվում խորհրդարանային համակարգի: Հանրապետության շուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 11 մարզեր և քաղաքամայր Երևանը, որը 2009 թվականից վերածվեց առանձին համայնքի: Մարզերը բաժանվեցին համայնքների: Սկսվեց նոր դատական համակարգի կազմավորումը, որը հիմնականում ավարտվեց 1999 թվականին:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանումը, որի երաշխիքը կարող էր լինել միայն մարտունակ բանակը: Իր կարճատև պատմության ընթացքում, հաղթահարելով պատերազմի ու բանակաշինության ծանրագույն փորձությունները, հայոց բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը:

Տնտեսապես արդարացված ու դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհին քիչ չէին բացթողումներն ու չօգտագործված հնարավորությունները, ձախողումներն ու անհաջողությունները: Հայաստանի Հանրապետությունը վերջին քսան տարիներին ունեցել է կտրուկ ելևէջներ: Սպիտակի աղետալի երկրաշարժից դեռ ուշքի չեկած՝ ռազմաքաղաքական հակամարտությունների հետևանքով նորանկախ երկիրը կանգնեց հաղորդակցության ուղիների ու տնտեսական շրջափակման ծանր իրողության առջև: Ավելին, տևական շրջափակման, սեփական էներգակիրների բացակայությամբ պայմանավորված էներգետիկ ճգնաժամի, արտաքին շուկային ինտեգրվելու տնտեսական քաղաքականության ուղենիշներով պարտադրված փոփոխությունների, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման հետևանքով խիստ վատթարացավ հանրապետության առանց այն էլ ծանր կացությունը, որն աստիճանաբար խորացավ սուբյեկտիվ գործոնների ազդեցությամբ:

Նորանկախ հանրապետությունը որդեգրեց տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ ուղղված ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Իրավական-ժողովրդավարական պետություն ստեղծելու նպատակով իրականացվեցին քաղաքական այնպիսի կարևոր բարեփոխումներ, ինչպիսիք են բազմակուսակցության, խոսքի, մամուլի ազատության և քաղաքացիական հասարակությանը բնորոշ այլ ինստիտուտների ստեղծումն ու դրանց հետագա զարգացումը: Տնտեսական

բարեփոխումների արդյունքում ձևավորվել են շուկայական հարաբերություններ, իրականացվել գների, արտաքին առևտրի, ազգային արժույթի կարգավորման ազատականացում, ստեղծվել են շուկայական նոր ինստիտուտներ՝ բանկային համակարգ, խորհրդատվական, աուդիտորական, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի և անշարժ գույքի շուկայում գործող կազմակերպություններ:

Բարեփոխումները փոփոխակի հաջողությամբ իրականացվում են նաև սոցիալական ոլորտում, կրթության և առողջապահության բնագավառներում: Ընտանեկան նպաստի համակարգի ներդրումը, իր թերություններով հանդերձ, կարևոր քայլ էր սոցիալապես անապահով խավերին աջակցելու տեսանկյունից: Զգալի ներդրումներ են կատարվում արտադրական ենթակառույցների ճյուղերում՝ հիմնականում վարկերի և նվիրատվությունների տեսքով:

Անշուշտ, պետք է նշել, որ վերը նշված բարեփոխումները, բազմաթիվ ձեռքբերումների հետ մեկտեղ, ունեցան նաև բացասական հետևանքներ՝ ծնելով աղքատություն և սոցիալական բևեռացում, գործազրկություն և արտագաղթ, կախվածություն արտաքին ֆինանսական և տնտեսական կենտրոններից և այլն: Դրանով հանդերձ, տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանունակության ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառների ձեռքբերումները վկայում են անկախության ուղին ընտրած ժողովրդի անսպառ հնարավորությունների մասին:

Эдик Минасян
Доктор исторических наук, профессор,
декан факультета истории ЕГУ

25-ЛЕТНИЙ ПУТЬ НЕЗАВИСИМОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Независимость Республики Армения приобреталась в тяжелых социально-экономических условиях, отягченных Арцахской войной. Однако, воля народа, выраженная на всенародном референдуме 21 сентября 1991 года, положила начало новому этапу развития и была закреплена принятием Декларации Независимости.

Подводя итоги уже двадцатипятилетней истории, нужно отметить несомненные достижения независимого развития: становление государственности и национальной армии. И, несомненно, трудолюбие армянского народа и его неуклонная воля выведут страну на широкий и перспективный путь развития.

Edik Minasyan
Doctor of Historical Sciences, Professor
Dean of the Faculty of History of YSU

25 YEAR'S WAY OF THE INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

The Independence of the Armenian Republic was gained through hard social and economic conditions, aggravated by the war in Artsakh. However, the will of the people, expressed in a national referendum on September 21, 1991, marked the beginning of a new development stage and was reinforced by the adoption of the Declaration of Independence.

Summing up the results of already twenty five years' history we should point at indisputable achievements of independent development -

the formation of statehood and national army. And, undoubtedly, diligence and steady will of the Armenian people will bring the country to the wide and perspective way of development.

Լևոն Շիրինյան

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՅՑԸ XXI ԴԱՐՈՒՄ

Հետերկրեն աշխարհում քաղաքագիտական խոսույթում առաջին հրատապության հիմնախնդիր դարձավ աշխարհակառույցը՝ զարգացման իր օրինաչափություններով և աստիճանական զարգացման (էվոլյուցիայի) միտումներով: Որոշակի իմաստով, միաբնեռ աշխարհի հաստատումից հետո, դեպի բազմաբնեռ աշխարհ սահմանագիծ դարձան ՌԴ նախագահ Վլ. Պուտինի մյունխենյան (2007 թիվ, 10 փետրվարի) և վալդայան (2014 թիվ, 24 հոկտեմբերի) ճառերը, տարիներ հետո ՌԴ ընդունած ուսմունքը (դոկտրինան) բազմակենտրոն աշխարհի մասին: Դրանով իսկ ՌԴ-ն ազդարարեց աշխարհակարգում իր տեղն ունենալու հավակնության վերաբերյալ՝ մինչ այդ դա հաստատելով հակամարտության տարբեր գոտիներում ծավալված ռազմական գործողություններով՝ Դոնեցկ, Լուգանսկ, Սիրիա և այլուր: Ակնհայտ է, որ աշխարհակառույցի ներքին վերադասավորումներն աշխարհակարգի հաստատմանը հաղորդում են հակասականություն, ընդգծված անկայունություն և անորոշություն:

«Բազմակենտրոն» աշխարհի ստեղծմանն ուղղված ՌԴ գործողությունների հետևողականությունը, Արևմուտքի համապատասխան պատժամիջոցները մեծացնում են նոր աշխարհա-

կարգի կոնֆլիկտայնությունը մասնավորապես որոշակի տարածաշրջաններում: Նկատելի է, որ, որպես այդպիսին, կարելի է դիտել աշխարհագրական իմաստով Թուրքիային հարող տարածքները: Այդ իմաստով այն վերածվել է հակամարտություններ արտահանող միավորի:

Այն, որ հաստատվող բազմաբևեռ աշխարհակարգը «եվրոպական համանվագի» հետ համանմանություն ունի (անալոգիա), տրամաբանական է, որ «խոշոր տերությունների»՝ ԱՄՆ, Եվրամիություն, Չինաստան, Ճապոնիա, Ռուսաստան, Հնդկաստան, ինչպես նաև այլ մակարդակի սուբյեկտների փոխհարաբերությունները կարգավորվում են «ուժերի հաշվեկշռի» շրջանակներում «քաղաքական իրատեսության» համատեքստում: Այս պարագայում է, որ որպես «հավասարակշռության օրենքի» այլակերպություն կարող է հանդես գալ կոմպլեմենտար սկզբունքը, մասնակի պարագաներում, որոշակի պայմաններում, քաղաքականության «ֆինլանդականացումը» Հայաստանի Հանրապետության պարագայում:

Левон Ширинян

Доктор политических наук, профессор,
Институт философии, социологии и права НАН РА

МИРОУСТРОЙСТВО В XXI ВЕКЕ

Мироустройство как вопрос политического дискурса является одним из научных приоритетов наших дней. Очевидно, что миропорядок, в котором делается попытка установить правила многополярной игры, демонстрирует противоречивость, акцентированную нестабильность и неопределенность. Таким образом, знание “закона баланса” связанное с проблематикой “баланса сил” и “политического реализма” выдвигается на первый план, где “комплементарная политика” и “финландизация политики” становятся частными проявлениями.

Levon Shirinyan
Doctor of Political Sciences, Professor
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

THE WORLD ORDER IN THE XXI CENTURY

The world order as a matter of political discourse is one of actual research priorities. It is obvious that the world order, in which an attempt is made to establish rules for a multipolar game, shows inconsistency, accented instability and uncertainty. Thus, the knowledge of "balance of law" related with the issues of "balance of power" and "political realism" becomes a priority, where "Complementary foreign policy" and "Finlandization of the foreign policy" have particular developments.

Юрий Гаспарян
Доктор социологических наук, профессор
заведующий кафедрой социологии и социальной работы
АГПУ им. Х. Абовяна,

Гоар Мкоян
Преподаватель кафедры
социологии и социальной работы
АГПУ им. Х. Абовяна

**ВЗАИМОСВЯЗЬ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ,
ЭКОНОМИЧЕСКОЙ, ПОЛИТИЧЕСКОЙ
И ВЛАСТВУЮЩЕЙ ЭЛИТЫ В ДЕЛЕ
СОВЕРШЕСТВОВАНИЯ ДЕМОКРАТИИ В
СОВРЕМЕННОЙ АРМЕНИИ**

В Армении, после распада советской власти, учёные, преподаватели, врачи многие интеллектуалы оказались в сложной ситуации приспособления к новым условиям жизнедеятельности. В результате многие интеллектуалы разных сфер культуры и промышленности покидают страну и поселяются в других странах. При этом жизнь показывает, что в трансформирующемся обществе интеллектуальному человеку легче покинуть страну, потому что он не всегда способен изменить свои интересы, потребности, мотивы или ценностные ориентации в изменившихся социально-культурных условиях.

В итоге, тяжёлые жизненные условия изменили нравственный мир интеллигента. Кроме того, многие работники культурных учреждений, из-за низкой заработной платы ради выживания, занялись высоко оплачиваемой хозяйственной деятельностью.

Говоря об имеющихся недостатках интеллектуального общества, нельзя забывать, что именно оно является гарантией определения той элиты, которая необходима для формирования демокра-

тических отношений в стране. При этом следует иметь в виду, что по определению В. Парето элита бывает:

интеллектуальная: элита, которая включает в себя прогрессивные идеи общества.

Политическая элита, которая может влиять на массовое сознание и поведение людей.

Экономическая элита, которая при помощи организованной политической системы может изучить потребности населения и принять соответствующие организационные меры с целью их удовлетворения.

Властвующая элита (правящая), которая ради проведения управленческих процессов, может и должна использовать любые средства.

На основании идей В. Парето можно чётко подтвердить, что между интеллектуальной, политической, экономической и властвующей элитой существует такая тесная взаимосвязь, которая позволяет только благодаря внедрению ведущих идей развивать и совершенствовать демократические процессы в преобразующемся обществе.

Такой подход особенно важен, поскольку Армянское государство поставило перед собой задачу сделать современными все политические гражданские и социальные институты, призванные с помощью сохранения социально-культурных ценностей создать такую элиту, у которой будут все возможности эффективного внедрения демократических процессов. Государственные деятели, политологи предпринимают все необходимые шаги для создания интеллектуальной элиты, включая образование и науку.

Анализируя существующие особенности развития интеллектуальной, политической экономической элиты, а также трудности и сложности властвующей элиты в республике Армения, мы смело можем подтвердить что интеллектуальный, экономический и политический потенциал страны полностью в состоянии решать все

проблемы социально-экономического, социально-политического и нравственно-психологического характера общества, которые необходимы для внедрения демократических отношений во все сферы общественной жизни населения республики.

Յուրի Գասպարյան

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Գոհար Մկոյան

սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՇԽՈՂ ՎԵՐՆԱԽԱՎԻ
ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՋ**

ՀՀ-ում ժողովրդավարություն իրականացնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է համապատասխան իրավական դաշտ, որի իրագործման համար հարկավոր են այնպիսի մեխանիզմներ, որոնց աշխատանքները կկատարեն ինտելեկտուալ բարձր մակարդակ ունեցող մասնագետները՝ տնտեսագետները, իրավաբանները, քաղաքական գործիչները:

Yuri Gasparyan
Doctor of Sociology, Professor,
Chair of Sociology and Social work
Kh. Abovyan Armenian State Pedagogical University
Gohar Mkoyan
Lecturer at Chair of Sociology and Social work
Kh. Abovyan Armenian State Pedagogical University

**RELATIONSHIP OF INTELLECTUAL, ECONOMIC,
POLITICAL, AND THE RULING ELITE IN
DEVELOPMENT OF DEMOCRACY IN IN MODERN
ARMENIA**

The implementation of relevant legal framework is necessary for the realization of democracy in RA. More over, the implementation must be performed by the mechanisms, which will be accomplished by experts with high intelligence specialist, such as economists, lawyers and politicians.

Էդվարդ Կյուրեղյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԱՆՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

Մարդկությունը թևակոխել է նոր հազարամյակ ոչ միայն ուղղակի ժամանակագրական իմաստով: Այն նախանշում է ճանաչողության սահմանների աննախադեպ խորացում և ընդլայնում, աշխարհակարգի, աշխարհաքաղաքական հարաբերությունների, տնտեսակարգի արմատական վերանայման անհրաժեշտություն: Նման հիմնահարցերի մեջ առանցքային տեղերից

մեկը զբաղեցնում է ազգապահպանության խնդիրը: Այն դուրս է եկել զուտ տվյալ ազգի շրջանակներից և դարձել է մարդկության գոյատևման հարց: Փորձագետների գերակշիռ մասը տվյալ հարցի լուծումն էապես կապում է ազգային պետության պահպանման ու զարգացման հետ: Խորհրդային կոմունիզմի վերջնական փլուզման գլխավոր գործոններից մեկը համարվում է ազգային անկախության ձգտումը: Ավելին, նոր դարաշրջանում ազգային գործոնի աննախընթաց զարթոնքը թույլ է տալիս փորձագետներին հակադրվել արևմտյան սոցիոլոգիայում իշխող այն տեսակետներից մեկին, ըստ որի բարդ, ռացիոնալ, նպատակաուղղված անդրազգային կազմակերպությունների զարգացումը նշանակում է նախասկզբնական ուժերի թուլացում: Այդ ուժերից մեկն էլ հենց ազգայինն է՝ որպես հոգևոր-մշակութային և համատեղ գոյակցության սուբստանց: Այն, ինչ կատարվեց Խորհրդային Միությունում և Արևելյան Եվրոպայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ինչ կատարվում է մեր օրերում գրեթե ողջ աշխարհում, որակվում է որպես հասարակության մեջ նախասկզբնականի անսանձելիություն: Մյուս կողմից ազգային պետականության պահպանման և զարգացման կարևորությունը փորձագետները գնահատում են մարդկությանը սպառնացող այնպիսի վտանգի վերացման տեսանկյունից, ինչպիսին ժամանակակից ահաբեկչությունն է:

Աշխարհայացքային իդեալում որքան պետությունը պատասխանատու է ազգի, անհատի ու մարդկության գոյատևման ու զարգացման համար, այդքան էլ մնացած տարրերն են պատասխանատու մյուսների համար: Եթե մարդկությունը «բավարար պատասխանատվություն» չի ստանձնում ազգի գոյատևման համար, ուրեմն նրա ամենակարևոր որակը՝ բանականությունը, այն աստիճան զարգացած չէ, որպեսզի այդ բանականության «որոշակի դրսևորումները» միջավայրում կարողանա ապահովել «սեփական տարրերի» ներդաշնակ գոյությունը: Նույն կերպ ցանկացած անհատ, անկախ հանրության մեջ զբաղեցրած դիրքից,

յուրովի պատասխանատու է ինչպես սեփական ազգի, այնպես էլ պետության ու մարդկության գոյատևման ու զարգացման համար: Բազմաթիվ իրադրություններում, որոնցից ամենացայտունը Արցախյան գոյամարտում առանձին անհատների, շարքային քաղաքացիների անօրինակ սխրանքներն են, ականա համոզվում ենք, որ պետք է գոյություն ունենան ոչ միայն խառնվածքի ու բնավորության ժառանգական որակներ, այլև սոցիալ-բարոյական որոշակի ժառանգելիության նմանակ: Եվ եթե ժամանակակից գիտությունը դեռ չի հայտնագործել այդ ժառանգականության տարրերը, դա բոլորովին չի նշանակում, թե այն գոյություն չունի: Այլապես անըմբռնելի ու աներևակայելի կմնան բազմաթիվ այն փաստերը, երբ աշխարհիկ կրթությունից գրեթե զուրկ, գիտական գիտելիքներով չառաջնորդվող հովիվներն ու բանվորները, հողի սովորական մշակները ինչպես կարող են դրսևորել առասպելական պատասխանատվություն սեփական երկրի, պետության հանդեպ:

Պատասխանատվության նման ընկալումը, կարծում ենք, հասարակական ու անհատական կյանքի զարգացման ծանրության կենտրոնը տեղափոխում է ճանաչումից ինքնաճանաչում, կրթությունից ինքնակրթություն՝ առանց թերագնահատելու առաջինների արժեքն ու կարևորությունը: Այլ խոսքով մեր օրերում նոր և արդարացվող իմաստ է ստանում «Առաջ, դեպի մեր արմատները» կարգախոսը՝ որպես ոչ միայն ազգապետական բարգավաճմանն ուղղված համամարդկային արժեք, այլև անհատական կյանքի երջանկացման իմաստ, որտեղ հրաժարումն ու բանական-բարոյական ինքնագոհաբերումն ընկալվում են որպես արժանի վարքի բնական դրսևորում:

Դիպուկ է ասված՝ մենք՝ հայերս, միևնույնն է, կգոյատևենք այս կամ այն կերպ: Հարցն այն է, թե նման գոյատևման փաստը արդյո՞ք այն արժեքն է, հանուն որի պետք է պայքարել: Թե, այդուհանդերձ, հայերն ունեն առաքելություն, հանուն որի պետք է գոյատևեն:

Эдвард Кюрегян
Кандидат философских наук, доцент,
Институт философии, социологии и права НАН РА

МИРОВОЗЗРЕНЧЕСКОЕ САМООБРАЗОВАНИЕ КАК ФАКТОР УКРЕПЛЕНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Масштабные изменения в познании, геополитике, экономическом строе конца 20-го и начала 21-го века затрагивают основы мировоззрения. В частности, это относится к происхождению и миссии человечества, его естественно-исторического продукта – нации. Рассмотрение связи в системе «человечество-нация-государство-индивид (личность)» доказывает, что этнокультурные единицы являются атрибутом существования и развития человека, а государственность – оптимальным средством саморазвития нации. Поэтому, ответственность каждого человека за судьбу всей системы получает актуальное и повседневное значение. Такая ответственность осознается и становится регулятором деятельности личности при ее непрерывном мировоззренческом самообразовании.

Edward Kyureghyan
Candidate of Philosophical Sciences
Institute of Philosophy, Sociology
and Law NAS RA

WORLDVIEW SELF-EDUCATION AS A FACTOR OF STRENGTHENING OF THE ARMENIAN STATEHOOD

Large-scale changes in knowledge, geopolitics, economic system of the late 20th and early 21st century affect the foundations of worldview. In particular, it relates to the origin and mission of humankind, its natural history origin: the nation. The consideration of

communication in the system of humanity - a nation-state-the individual (the person) proves that ethno-cultural units are the attribute of existence and of human development and statehood: the best means of self-development of the nation. Therefore, the responsibility of each person "for the fate of" the entire system gets the latest and daily value. Such liability is recognized and becomes a regulator of the activity of personality with its continuous ideological self-education.

Հարություն Մարության

Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ հնագիտության և

ազգագրության ինստիտուտ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (1988-1990) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Զեկուցմամբ համառոտ անդրադարձ է կատարվում այն խնդրին, թե ինչ փոփոխություններ տեղ գտան խորհրդահայ քաղաքացիների ինքնության մեջ Ղարաբաղյան շարժման ընթացքում (1988 փետրվար-1990 օգոստոս), որոնք էլ մեկ տարի անց բերեցին անկախության կերտման գաղափարի անհրաժեշտության գիտակցմանը:

Նշված փոփոխությունների դիտարկման աղբյուրները բազմապիսի են՝ Օպերայի հրապարակում և այլուր հնչող ելույթներ, հարցազրույցներ, պաշտոնական և ինքնահրատ մամուլի հրապարակումներ, թուղթիկներ, կոչեր, տարաբնույթ փաստաթղթեր, պաշտոնական գնահատականներ և այլն: Զեկուցման մեջ հիմնական շեշտադրումը կատարվելու է շարժման պատկերագրության՝ քաղաքացիների մտքի ու ձեռքի արդյունք ցուցապաստառների (տրանսպարանտներ և պլակատներ) վերլուծությանը:

Բանն այն է, որ պատկերներն ու գրավոր բանաձևերն ազգային ինքնության խոսուն դրսևորումներից մեկն են, որոնք, իբրև կանոն, մեծ թվով ի հայտ են գալիս հասարակության համար ճգնաժամային պահերին, այն է՝ ուղեկցում են հեղափոխություններին, ժողովրդական զանգվածային ելույթներին, երկրի կյանքում տեղ գտած արմատական փոփոխությունների՝ երբեմն տարիներ տևող գործընթացներին և այլն: Հաճախ լինելով ժողովրդական տրամադրությունների չմիջնորդավորված ցուցիչներ, իսկ որոշ դեպքերում էլ ստեղծվելով քաղաքական ուժերի կողմից՝ ցուցապաստառները հսկայական տեղեկատվություն են պարունակում իրենց ժամանակաշրջանի մասին, օգնում այն ավելի լավ հասկանալուն: Դրանք ինքնության յուրահատուկ հանգույցներ են, դեպի ուր ձգվում են և որտեղ կենտրոնացած են բազմաթիվ և տարբեր թելեր: Այդ հանգույցների՝ յուրահատուկ միկրոկոսմոսների բացումը թույլ է տալիս դիտարկել մակրոկոսմիկ բնույթի երևույթներ: Ցուցապաստառները՝ հասարակական գործընթացների պատկերագիր «վկաները», սովորաբար անմիջապես արձագանքում են իրադրության փոփոխություններին, ուստի և դրանցով շատ հարմար է լինում հետևել հասարակական զարգացումների փուլերին, իսկ դրանց բովանդակային փոփոխությունների վերլուծության միջոցով՝ քաղաքական կողմնորոշումների և ինքնության ձևափոխմանը:

Ղարաբաղյան շարժման տարիներին (1988-1990) ստեղծված ցուցապաստառները բազմաբանակությամբ (մեզ հաջողվել է արձանագրել, բանավոր և գրավոր աղբյուրներից հավաքել շուրջ 1000 միավոր), բովանդակային բազմազանությամբ (առանձնացվում է շուրջ 20 թեմատիկ խումբ), դրանցում արտահայտված ժողովրդական մտածողության հարստությամբ ուսումնասիրության առատ և ծավալուն նյութ են պարունակում: Պետք է նշել, որ տարբեր թեմատիկ խմբերը երբեմն «իրար ծածկում են», ինչը զարմանալի չէ, քանի որ ցուցապաստառները հաճախ բազմաշերտ են և հավասար հաջողությամբ կարող են վերաբերել ինչ-

պես մեկ, այնպես էլ մյուս խմբին: Այնուամենայնիվ, ամբողջությամբ վերցրած, այդ խմբերը հստակորեն տարբերակվում են:

Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների մեջ առանձնանում են հետևյալ թեմատիկ խմբերը, որ ստորև ներկայացվում են ըստ միավոր-ցուցապաստառների մոտավոր քանակության՝ ա) հայերի ցեղասպանությունը, սումգայիթյան ոճրագործությունը և դրանց հետ կապված զարգացումները (370), բ) հայ ժողովուրդ (այդ թվում՝ հայոց լեզու, հայկական դպրոցներ) (86), գ) վերաբերմունքը Կենտրոնի՝ ԽՍՀՄ դեկլարության (այդ թվում՝ Ռուսաստանի և ռուսների) և խորհրդային կարգերի նկատմամբ (72), դ) վերաբերմունքը վերակառուցման, հրապարակայնության ու դեմոկրատացման քաղաքականության նկատմամբ, բյուրոկրատիայի քննադատություն (66), ե) Ղարաբաղը՝ Հայաստանի մաս (63), զ) վերաբերմունքը ԽՄԿԿ-ի ու նրա քաղաքականության նկատմամբ (55), է) վերաբերմունքը խորհրդային զորամիավորումների՝ տարածաշրջանում խաղացած դերի նկատմամբ (52), ը) «Ղարաբաղ» կոմիտե, «Կոունկ», Պ. Հայրիկյան (41), թ) ազգերի ինքնորոշման իրավունքը և ԽՍՀՄ սահմանադրությունը (37), ժ) Ղարաբաղի խնդիրը վերակառուցման, հրապարակայնության, դեմոկրատացման քաղաքականության և արդարության լույսի ներքո (36), ժա) Հայաստանի անկախությունը (30), ժբ) պանիսլամիզմ և պանթուրքիզմ (22), ժգ) Ադրբեջան և ադրբեջանցիներ (17), ժդ) բնապահպանական խնդիրներ (15), ժե) վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի դեկլարության նկատմամբ (15), ժզ) վերաբերմունքը Գերագույն խորհրդի նստաշրջանների և պատգամավորների նկատմամբ (13) և այլն:

«Հայ ժողովուրդ» պայմանականորեն առանձնացվող թեմայի մեջ ընդգրկված ցուցապաստառների տեքստերի վերլուծությունը թույլ է տալիս հետևել հարցի շուրջ տեղ գտած վերաբերմունքի և ընկալումների փոփոխություններին: Թեմայի մեջ առանձնանում են մի քանի «կարմիր թելեր»՝ զորակցություն Ղարաբաղին («Մենք քեզ հետ ենք, Ղարաբաղ», «Не оставим вас в

беде, карабахцы»), հայ ժողովրդի միասնության գիտակցությունն իբրև փրկության նախապայման և Արցախի հարցի լուծման գրավական («Հայ ժողովրդի ուժը նրա միասնության մեջ է», «Հույսներս մեզ վրա, հայեր» և «Մեր միակ պաշտպանը մենք ենք», «Հայնք բոլոր երկրների, միացե՛ք», «Հայ ժողովրդի միասնությունը Արցախի հարցի լուծման գրավականն է»), խորհրդային ռազմոժի դիտարկումը՝ իբրև վտանգ ժողովրդական շարժմանը, Հայաստանի «գերված» լինելու («Գերված ենք մենք, ոչ ստրուկ. Վ. Տերյան») և ազատության համար ազգովին պայքարելու անհրաժեշտության գիտակցումը («Պայքար մինչև վերջ», «Պայքար հանուն ապագայի, պայքար մինչև վերջ», «Հերիք է լռել, պետք է գործել», «Ոչ լացել է պետք, ոչ հուսահատվել, հայի պայքարը կա և կլինի»), հայության շահերի կապակցումը Եվրոպայի և աշխարհի հետ («Հայ ազգի թիկունքին աշխարհն է, վրացիների թիկունքին՝ հայերը», «Աշխարհի օգնությունը մեզ՝ մեր 9-ամսյա պայքարի արդյունքն է», «Միջազգային ճանաչում Հայկական հարցին»), Միացյալ Հայաստանի գաղափարի արձարծումը («Միացյալ Հայաստանն ըստ Սևրի պայմանագրի»): Այս նույն թեմայի մեջ կարելի է դիտարկել նաև հայոց լեզվի ու հայկական դպրոցի հարցերի արձարծումը, երբ խնդիր է դրվում «Հայ երեխային-հայ դպրոց» և «Հայ ենք, խոսենք հայերեն», ռուսական դպրոցների հետագա գոյության խնդիրը դրվում էր հարցականի տակ («Մենք պահանջում ենք ավելացնել ռուսական դպրոցներում հայոց լեզվի ժամերը», «Ռուսական դպրոցը հայության գերեզմանն է»):

Կենտրոնի՝ ԽՍՀՄ դեկավարության (այդ թվում՝ Ռուսաստանի և ռուսների) և խորհրդային կարգերի նկատմամբ վերաբերմունքի մեջ երևում են հետևյալ ուղղությունները. «Կենտրոնը»/Մոսկվան դիտվում էր որպես ճշմարտության պարտակիչ («Москва!!! ... где Правда»), շատ երևույթների վրա աչք փակող, տեսնել չցանկացող («Մոսկվա, ինչու՞ ես փակել աչքերդ»), հայության նկատմամբ նրա գործելակերպը որակվում էր որպես ծաղր («Прекратить издевательство над целым народом») և

պայմանավորվում էր ադրբեջանցիների կողմից գնված, կաշառված լինելու հանգամանքով, Կենտրոնից եկող քաղաքական որոշումները համարվում էին կործանարար («Հուլիսի 18-ի որոշումը մեր ժողովրդի կործանումն է»), նրա Հայաստանից և Կովկասից հեռանալու խնդիրն էր բարձրացվում («Մոսկվայի ամենամեծ օգնությունը մեր երկրից հեռանալն է», «Մոսկվա, դուրս մեր տնից», «Մոսկվան Կովկասի դահիճն է»), Հայաստանում իրականացվող բռնությունները համեմատվում էին ստալինիզմի հետ («Репрессии в Армении шаг к сталинизму»), ծանակվում էր ադետի գոտովերականգնման գործընթացը, շեշտվում էր Հայաստանի շրջափակման մեջ Կենտրոնի դերակատարությունը, ուղղակիորեն նշվում էր լոկ ռազմական ուժի միջոցով խորհրդային հանրապետություններին մեկ միության մեջ միավորելու հանգամանքը («Сильный центр, сильные республики»), քննադատվում էր ազգային քաղաքականությունը («Ленинская национальная политика – свободное кровоизлияние народов»):

Վերակառուցման, հրապարակայնության ու դեմոկրատացման քաղաքականության նկատմամբ վերաբերմունքի մեջ (ներառյալ նաև բյուրոկրատիայի քննադատությունը) առանձնանում են հետևյալ մոտեցումները՝ խորհրդային կենտրոնական մամուլի օրգանները, կենտրոնական հեռուստատեսությունը որակվում է որպես ստախոս («Правда? Неправда!», «Нет места лжи в “Правде”!»), «Хватит дезинформировать советский народ», «ТВ. Время назад»), անվանապես քննադատվում են հակահայկական ուղղվածության հրապարակումների հեղինակները («Разыскивается особо опасный преступник Овчаренко враг перестройки и гласности»), անձնավորվում են վերակառուցման թշնամիները («Здравствуйте, враги перестройки», «Арзуманян или гласность»), նրանց վրա է բարդվում սուսգայիթյան հանցագործությունների մեղավորությունը («Враги перестройки – организаторы Сумгаита»), խորհրդային ժողովրդավարությունը նույնացվում է պատիժի հետ («Демократия»), նշվում է, որ առկա են ճնշումներ մամուլի

վրա, և որ կենտրոնական մամուլի օրգանները կաշառված են ադրբեջանցիների կողմից, մատնանշվում է, որ Շարժման պահանջներն այս կամ այն կերպ ուղղված են նաև բյուրոկրատների ու պաշտոնամուլների դեմ («Արցախի ազատագրումը բյուրոկրատիայի մահվան սկիզբն է»):

Арутюн Марутян

Доктор исторических наук,
Институт археологии и этнографии НАН РА

КАРАБАХСКОЕ ДВИЖЕНИЕ (1988-1990) И ФОРМИРОВАНИЕ ТРЕТЬЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ

В докладе рассматриваются те основные изменения в идентичности советских армянских граждан, которые имели место во время Карабахского движения (февраль 1988 – август 1990) и которые именно привели к осознанию необходимости провозглашения независимости Армении.

Источники для фиксации подобных изменений многочисленны – это выступления на Оперной площади и в других местах, интервью, публикации в официальной прессе и самиздате, листовки, воззвания, различного рода документы, официальные оценки и т.п. В докладе основной упор будет сделан на анализ иконографии Движения – плакаты и транспаранты, которые являются результатом мысли и творчества людей.

Дело в том, что образы и письменные формулировки являются красноречивыми проявлениями национальной идентичности; они, как правило, появляются в кризисные для общества периоды, а именно сопровождают революции, массовые народные выступления, процессы коренного преобразования в жизни страны и иногда продолжают существовать годами. Будучи часто показателями

народных настроений без посредников, а иногда и создаваемые политическими силами – транспаранты и плакаты носят в себе огромную информацию о своем времени, помогают лучше его понять. Они являются своеобразными узлами идентичности, куда ведут и где сосредоточены многочисленные и различные нити. Раскрытие этих узлов – своеобразных микрокосмов, позволяет рассматривать явления макрокосмического характера. Транспаранты и плакаты – иконографические «свидетели» общественных процессов, как правило, сразу же отзываются на изменения ситуации, и поэтому очень удобно с их помощью следить за этапами развития общества, а с анализом их содержательных изменений – за трансформацией политических ориентаций и идентичности.

В массе плакатов и транспаратов Карабахского движения выделяются следующие тематические группы, которые ниже представлены по примерному количеству единиц-транспарантов/плакатов.

Harutyun Marutyan
Doctor of Historical Sciences
Institute of Archeology and Ethnography NAS RA

THE KARABAGH MOVEMENT (1988-1990) AND THE CREATION OF THE THIRD REPUBLIC OF ARMENIA

The report is devoted to the issue, if what changes took place in the identity of the Soviet Armenian citizens during the period of the Karabagh Movement (February 1988 – August 1990), which led to the independence a year later.

The field survey materials include anthropological observations, the recording of opinions expressed by Movement participants, and in certain cases, their speeches, as well as the photographing and filming of rallies and marches. In the report a special focus has been on the

consideration and analysis of the iconographical materials of the Movement—the posters and banners. This focus has developed through a number of factors.

Thus images and written formulas are a vivid manifestation of national identity and tend to appear in abundant quantities in times of societal crises. For example, they accompany revolutions, mass demonstrations, and radical changes in the life of a country, which can sometimes last for years. Often firsthand indicators of the moods of the people, sometimes created by political forces, posters contain colossal amounts of information about the times they represent, thus helping to better understand it. They are kind of “nodes” of identity that center numerous and various threads. The revelation of the specific microcosms of these nodes helps to consider phenomena of a macrocosmic nature.

Posters are like iconographic “witnesses” of social processes, and they usually respond to changes of situation, thus making it helpful to follow the stages of social development through them, while a study of changes in their content might be useful for tracing political trends to identity changes.

Մանուկ Հարությունյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ /ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ/

Օտարվածության ֆենոմենն ընդգրկել է ողջ հայ հասարակությունը, ինչի մասին վկայում են ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, ակադեմիկոս Գևորգ Պողոսյանի ղեկավարությամբ 2001թ. ի վեր պարբերաբար անցկացվող սոցիոլոգիական հարցումների ար-

դյունքները: Զանգվածային հայր չի վստահում քաղաքական համակարգի գրեթե բոլոր ինստիտուտներին, ընդ որում նվազելու փոխարեն անվստահությունն ավելի է ուժեղանում: Ավելին, ձեռք է բերել հիրավի համակարգային բնույթ: Դրա մասին ակնառու կերպով վկայում են նաև հայ փիլիսոփա-սոցիոլոգ Վլադիմիր Օսիպովի կողմից անցկացված հետազոտությունների տվյալները: Հարցված հայերի մեծամասնությունը /74 տոկոսը/ չի վստահում օրենսդիր իշխանությանը, 76 տոկոսը՝ դատական համակարգին, իսկ 73,6 տոկոսը՝ կառավարությանը: Շարքային հայերի կողմից ապրվող քաղաքական օտարվածության վիճակն արտահայտվում է առանձնահատուկ եղանակով: Դա օտարվածություն է ոչ միայն կառավարող վերնախավից, այլև կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից: Նույն հարցումների տվյալներով հարցվածների 67,6 տոկոսը չի վստահում կուսակցություններին, իսկ դրանց 42,8 տոկոսը՝ հասարակական կազմակերպություններին: Դրա բնորոշ հետևանքներից են քաղաքական անտարբերությունը (ապատիան) և համակերպվողականությունը:

Հաճախ կարելի է լսել, թե իբր «հայ ժողովուրդը դարձել է համակ անտարբեր և լուռ զանգված» կամ «չդատող և համակերպվող մարդկանց հասարակություն»: Որ հայ հասարակությունը «անտարբերությամբ» շարունակում է լռել, դա փաստ է: Սակայն դա ամենևին «դատարկ», «բուր» լռություն չէ, հույզերի և տրամադրությունների յուրօրինակ «պլազմային» վիճակ, որը գտնվում է մշտական խմորման, եռման, փոփոխման և կերպափոխման մեջ: Դրա բյուրեղացումն էապես խոչընդոտում է հայ հասարակության տարբեր խմբերի շահերի ներկայացուցչության քաղաքական մեխանիզմի հիմնախախտվածությունը, ինչը հանգեցրել է կուսակցությունների, որոշ իմաստով, «ապասոցիալականացմանը»: Մտահոգիչ է նաև կուսակցությունների բյուրոկրատացման կամ, որ նույնն է, ինքնօտարման՝ կուսակցական շարքերից կամ հիմնական զանգվածից կուսապարտի օտար-

ման աճի փաստը: Պատգամավորները, որոնք առերևույթ ներկայանում են որպես որոշակի սոցիալական խմբերի շահերի ներկայացուցիչներ, իրականում վերածվել են կուսապարատի ներկայացուցիչների՝ կյանքի կոչելով «կուսապարատի ներկայացուցիչների ներկայացուցչության» հոռի ֆենոմենը: Դրա հետևանքով կուսակցական բյուրոկրատիան վերածվել է իր իսկ նեղ շահերը սպասարկող «ընտրամեքենայի»:

Քաղաքական օտարվածության գծերը ներհատուկ են նաև Հայաստանի ընտրական համակարգին: Նախ, թե ով կղաճառ ԱԺ-ի պատգամավոր, հիմնականում կանխորոշված է: Անտարակույս, ընտրությունները մեզանում կամարտահայտություն են, սակայն ունեն առանձնահատուկ բնույթ, որը բանաձևելուց հետո ստանում է հետևյալ տեսքը. ձեր փոխարեն մենք ընտրել ենք, իսկ դուք՝ հայ ընտրողներ, պետք է ընդամենը այն հաստատեք: Իրական այլընտրանքը, որոշ վերապահումներով, բացակայում է: Երկրորդ, մեզանում գոյություն ունի այսպես կոչված փակ ցուցակների պրակտիկա, երբ ընտրողը քվեարկում է պատգամավորության թեկնածուների ողջ ցուցակի համար, որն առաջադրվել է կուսակցությունների կողմից: Կարելի է քվեարկել միայն ողջ ցուցակի համար: Արդյունքում պատգամավորության թեկնածուների մեծամասնությունն անհայտ է մնում շարքային հայ ընտրողին: Թեկնածուները հասկանում են, որ իրենք փաստորեն ներկայացնում են ոչ թե ժողովրդին, այլ կուսապարատին: Հետևաբար, նորընտիր պատգամավորները չունեն իսկական քաղաքական լեգիտիմություն, որն անհրաժեշտ է կուսակցական բյուրոկրատիային հակազդելու համար: Երրորդ, հաճախ իսկական ժողովրդավարական ընտրության փոխարեն ներկայացվում են միանգամվա զավեշտալի քաղաքական շոու և թեկնածուների կեղծ ընտրություն, նորաձև արտահայտությամբ՝ «քաստինգ»: Իսկական ընտրությունը ստվերվում է անդրկուլիսային գործարքներում, որոնք ոչ մի ընտրողի հետ չեն քննարկվում:

Ներկայիս ընտրահամակարգը զանգվածային հայի ընտ-

րաիրավունքը ձևականորեն ընդունելու քողի տակ փաստորեն հաստատում է նրա օտարումը սեփական «ընտրաձայնից», ինչպես նաև ընտրական գործընթացներից:

Քաղաքական օտարման առավել զարգացած տեսակը քաղաքական կոռուպցիան է, որը գործառում է նախ որպես ռեսուրսների, ռենտայի և սոցիալական դիրքերի վերաբաշխման մեխանիզմ ոչ միայն իշխանության և բիզնեսի, այլև տարբեր սոցիալական խմբերի միջև: Երկրորդ, Հայաստանում կոռուպցիան վերածվել է երկրի «քաղաքական դասակարգի», կառավարող ընտրանու մեջ մտնող ազդեցիկ խմբերի հարաբերությունները պարզելու յուրօրինակ ասպարեզի: Վերջապես, չմոռանանք, որ մեզանում քաղաքական կոռուպցիան նաև Հայաստանում գոյություն ունեցող յուրահատուկ ոչ ձևական (ֆորմալ) հասարակական դաշինքի կարևոր տարրերից է:

Քաղաքական օտարման մեղմացման բանալին կամ եղանակը անցումն է խորհրդարանական ձևին (մոդելին), որն ամբողջովին կողմնորոշված պետք է լինի դեպի ժողովրդավարության, սոցիալական արդարության և հայրենասիրության արժեքները: Հենց դա է մեզ թույլ տալիս կառավարման խորհրդարանական ձևին անցման նախագիծն անվանել Հայաստանի քաղաքական-իրավական համակարգի վերարդիականացման փորձ:

Իրավաքաղաքական ոլորտում օտարման մեղմացումը կամ աստիճանական հաղթահարումը, նախևառաջ, պահանջում է. 1. ամրապնդել զսպումների և հակակշիռների համակարգը պետական իշխանության ճյուղերի միջև, բարձրացնել դրանց օրգանական փոխգործակցության արդյունավետությունը, 2. ապահովել օրենքի գերակայությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից, ցանկացած անձնավորությունից, և որ օրենքի մեկնաբանությունը տրվում է միայն անկախ դատարանի կողմից: Առհասարակ անցումը խորհրդարանական ձևին պահանջում է էապես վերափոխել իրավակիրառական

պրակտիկան, ամրապնդել ժողովրդավարական իրավակարգը, 3. որակապես ընդլայնել իշխանության ներկայացուցչական մարմինների լիազորությունները, 4. ձևավորել գործադիր իշխանության նոր նմուշօրինակ՝ պետական որոշումների մշակման գործընթացին քաղաքացիական հասարակության վերահսկողության նոր մեխանիզմների ապահովման նպատակով, 5. ստեղծել պայմաններ՝ միջկուսակցական մրցակցության մակարդակի որակական բարձրացման համար: Կուսակցությունները պետք է իրական հնարավորություն ունենան պայքարելու քաղաքական իշխանության իրավունքը նվաճելու համար՝ հասարակությանն առաջադրելով համազգային ծրագրեր և առաջնորդներ՝ հանրային պաշտոններ զբաղեցնելու համար, 6. կատարելագործել իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների անցկացման մեխանիզմները: Ընտրություններն ազատ են ճանաչվում ոչ միայն այն պատճառով, որ ձայների անմիջական հաշվարկի ժամանակ չեն եղել մեքենայություններ, այլև այն բանի շնորհիվ, որ իշխանության գլուխ կանգնած ուժերն իրապես զրկված են իրենց դիրքն օգտագործելու հնարավորությունից, 7. մշակել պետական կառավարման նոր ձև՝ արդյունավետության, թափանցիկության, հասարակությանը պարբերական հաշվետվության ժողովրդավարական սկզբունքներով և մեխանիզմներով:

Կառավարման խորհրդարանական համակարգին անցման պայմաններում իշխանություն-հասարակություն փոխօտարման մեղմացման վերլուծության արդիականությունը մեծանում է, քանի որ առանց իշխանության լեգիտիմության ամրապնդման հնարավոր չէ այդ անցումը:

Манук Арутюнян
Доктор философских наук,
Институт философии, социологии и права НАН РА

ПОЛИТИЧЕСКОЕ ОТЧУЖДЕНИЕ И ПУТИ ЕГО ПРЕОДОЛЕНИЯ (НА ПРИМЕРЕ АРМЕНИИ)

Статья посвящена проблеме политического отчуждения в современном армянском обществе. В ней раскрываются формы и механизмы функционирования политического отчуждения. Автор считает, что без постепенного преодоления системного отчуждения власти от гражданского общества невозможно становление и развитие парламентской формы правления в Армении.

Manuk Harutyunyan
Doctor of Philosophical Sciences,
Institute of Philosophy, Sociology
and Law NAS RA

POLITICAL ALIENATION AND WAYS FOR OVERCOMING IT (ARMENIA CASE STUDY)

The article is devoted to the issue of political alienation in the present-day Armenian society. It explores the forms and mechanisms of operation of political alienation. The author contends that consolidation and further evolution of the parliamentary system of government in Armenia is impossible without gradual elimination of systemic alienation of powers that be from civil society.

**ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ -
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ
ՔԱՅԼԵՐԸ 1980-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Վերլուծել հայոց Երրորդ հանրապետության 25-ամյա պետականության կերտման պատմությունը նշանակում է գնահատել և ներկայացնել անկախությանը նախորդած ժամանակաշրջանը, Խորհրդային Միության կառավարման այն համակարգը, որը, ի տարբերություն ամենօրյա քարոզչության, կառուցված էր այնպիսի սկզբունքների և արժեքների վրա, որոնք կաշկանդում էին մարդ-անհատին ազատորեն ներկայացնելու իր կարծիքը, պաշտպանելու իր իրավունքները, դրսևորելու տարբեր կարգի նախաձեռնություններ, որոնք կարող էին հակադրվել երկրում գործող համակարգին: Նման քայլերը խստորեն հետապնդվում և պատժվում էին, որքան էլ որ դրանով երկիրը կանգնեցնում էին փակուղու առաջ:

Չէ՞ որ վերջին հաշվով առանց արմատական փոփոխությունների Խորհրդային Միությունը չէր կարող լինել մրցունակ և դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Նման փորձ էլ կատարեց Խորհրդային Միության վերջին ղեկավար Մ.Ս.Գորբաչովը՝ իրականացնելով պատմությանը հայտնի «վերակառուցման» քաղաքականությունը, քաղաքականություն, որն ավելի շատ բացահայտեց երկրի արատները, արագացրեց Խորհրդային Միության փլուզումը և նորանկախ պետությունների, այդ թվում նաև հայոց նոր պետականության կայացումը:

Այդ իմաստով ներկա ժամանակաշրջանի հայ պատմագրության թերևս ամենակարևոր թեմաներից մեկը Հայաստանի Երրորդ հանրապետության ձևավորման, կայացման, նրա զար-

զացման 25-ամյա պատմության ուսումնասիրումն է, պատմական անցյալից դասեր քաղելը և ճիշտ հետևություններ անելը, երկրի զարգացման համար բնականոն պայմանների ապահովումը, ժողովուրդ-իշխանություն փոխհարաբերությունների ամրապնդումը, հուսալի հենարանի ձևավորումը և բազմաթիվ այլ խնդիրների արդյունավետ լուծումը:

Թվարկված խնդիրներն ամենևին էլ միանգամից չեն իրականանում: Այստեղ միահյուսվում են բազմաթիվ հարցեր, ներքին և արտաքին քաղաքականության նորանոր գործոններ, որոնց վերհանումը, իրական դիրքերից լուսաբանումն ունեն գիտատեսական և գիտագործնական կարևոր նշանակություն: Եվ որքան էլ հայ ժողովուրդը պատմության տարբեր ժամանակներում, հաճախ նաև դարեր շարունակ պետականությունը կորցնելով, կրկին ձգտել է վերականգնել այն, որը հաճախ բախվում է նաև կոշտ իրականությանը՝ հետին պլան մղելով այդ ցանկությունը, միևնույն է, այդ ձգտումը չէր մարել հայ ժողովրդի ոգումեջ, որն էլ նոր ուժով կրկին դրսևորվեց XX դարի ավարտին՝ նպատակին հասցնելով այդ երազանքը: Այն ավելի շոշափելի դարձավ 1980-90-ական թվականներին:

Եվ այդ իմաստով ներկայացնել այդ շրջանը նշանակում է նաև ցույց տալ այն գործընթացները, որոնք նախորդել էին երկրում սկսված վերակառուցմանը, ցույց տալ հայ իրականության մեջ ընդհատակում գործող այն ուժերի, այսպես կոչված ոչ էական (ֆորմալ) կազմակերպությունների գործունեությունը, որոնք սկսեցին ավելի ակտիվ բնույթ կրել 1980-1990-ական թվականներին: Դա ժամանակաշրջան էր, երբ պատմությունն սկսեց ավելի արագ ընթանալ, երբ մարդկանց քաղաքական միտքը, գործողություններն առաջ էին ընկնում՝ բախվելով երկրում գործող քարացած սկզբունքներին, իրենց դարն ապրած կարծրատիպերին, կուսակցական նոմենկլատուրայի վարքագծին՝ ստեղծելով անդունդ ժողովրդի և իշխանության միջև:

Բայց անկախ այդ ամենից, կյանքը նոր լուծումներ էր պահանջում, որոնք Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում տարբեր ընթացք ունեցան: Խորհրդային Հայաստանում դա կապված էր Արցախյան շարժման, նրա անկախության, մայր հայրենիքի հետ վերամիավորման, պատմական ճշմարտության վերականգնման պայքարի հետ:

Դա ժամանակաշրջան էր, երբ միության գրեթե բոլոր ժողովուրդները ոտքի էին կանգնել՝ սեփական կյանքը և ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու համար: Նման մեծ գործընթացներում իր ուրույն տեղն ունի հայ ժողովուրդը, որի մի հատվածը՝ Լեռնային Ղարաբաղը, ոչ արդարացի որոշմամբ տրվել էր Խորհրդային Ադրբեջանին և այժմ ստեղծված նոր պայմաններում ոտքի էին կանգնել շտկելու պատմական սխալը և միանալու մայր հայրենիքին:

Դժվար չէ կոահել՝ տվյալ ժամանակ անհնարին թվացող հարցի լուծումը հնարավոր էր իրականացնել նոր ուժերի կողմից, ուժեր, որոնք պետք է կազմակերպեին հայ ժողովրդի անկախության համար պայքարը, քանզի հանրապետության կուսակցական, պետական ղեկավարությունը, հատկապես նրա առաջին ղեմքերը, չկանգնեցին և երբեք չէին կարող կանգնել ժողովրդի կողքին և որպես մեկ միասնություն հարցը բարձրացնել ավելի բարձր աստիճանների առաջ:

Մյուս կողմից էլ միգուցե այսօր քառորդարյա բարձունքից ավելի հեշտ է նման դատողություններ անելը, նման պահանջներ ներկայացնելը հանրապետության առաջին ղեմքերին՝ Կարեն Դեմիրճյանին, Սուրեն Հարությունյանին և նրանց հետ նաև նրանց համախոհներին, երևի այնքան էլ հերոսություն չէ, որքան էլ որ, ի պատիվ Հայաստանի կոմկուսի շատ անդամների, ինչու չէ նաև որոշ չափով որոշակի դիրք ունեցող շատ կոմունիստների, անցան ժողովրդի կողմը, կանգնեցին նրա կողքին, պաշտպանեցին նրա արդար պահանջը, որն էլ շարժումը դարձրեց համաժողովրդական և օրօրի ներառեց հայ ժողովրդի բոլոր

խավերին՝ բանվոր թե գյուղացի, մտավորական թե գիտնական, ուսանող թե մեծ ու փոքր: Բայց որպեսզի այն դուրս չգար ավերից և դառնար անկառավարելի, անհրաժեշտ էր, որ կառավարվեր որոշակի ուժերի կողմից:

Հայ իրականության մեջ դա կապված է մինչև համաժողովրդական դառնալը մի շարք ընդհատակյա, ինչպես նաև ավելի վաղ և այդ օրերին ձևավորվող ոչ ֆորմալ կազմակերպությունների հետ: Դրանց շարքում հատկապես առանձնանում են մի քանիսը: 1960-ական թվականների կեսերին սկսված ազգային զարթոնքի, Եղեռնի 50-րդ տարելիցի առթիվ կազմակերպված պաշտոնական և ոչ պաշտոնական արարողությունների, ցույցերի կազմակերպիչների ձեռքակալությունները հանգեցրին Երևանի թիվ 1 բանտում հիմք դնելու «Ազգային միաբանություն կուսակցությանը» (ԱՄԿ), որի ղեկավարությունը ստանձնեց 48-ամյա նկարիչ Հայկազ Խաչատրյանը, որի խմբագրությամբ էլ կազմվեցին կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը և երդումը: Կարճ ժամանակամիջոցում ԱՄԿ-ի հետ միավորվեցին հայրենասիրական այլ խմբեր, և 1967թ. կուսակցությունը ի լուր համայն հայության «Փարոս» թերթի միջոցով ազդարարեց մայր հայրենիքում ազգային ոգու վերածննդի մասին:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացումը կապված է Արցախյան շարժման, «Ղարաբաղ» կոմիտեի և նրա հիմքի վրա ձևավորված՝ Հայոց համագլխի շարժման (ՀՀԾ) հետ, որն էլ հայ ժողովրդի պայքարի այդ փուլում մյուս ուժերի հետ միասին գլխավորեց համաժողովրդական շարժումը: Իսկ արդեն 1990թ. Գերագույն խորհրդի ընտրություններում գալով իշխանության՝ հայ ժողովրդի պատմության մեջ սկսվեց մի նոր փուլ՝ Հայաստանի Երրորդ հանրապետության փուլը, որը կանգնեց նոր մարտահրավերների, նոր փորձությունների առջև՝ պայքարել ձեռք բերված անկախությունը կայացնելու, ամրապնդելու և զարգացնելու համար: Այդ պայքարն ավելի քան քառորդ դար է՝ շարունակվում է, իհարկե նաև իր

շեղումներով, սխալներով, բայց նաև ժողովրդի հետ միասին նոր ուժերի կողմից: Պատմական այդ փորձն անցած ճանապարհն ուսումնասիրելը, գնահատելը և հաջորդ սերունդներին ներկայացնելը ներկա սերնդի գործն է, որի վկայություններից մեկը նաև ներկա համահայկական գիտաժողովն է:

Генрих Абрамян

Доктор исторических наук, профессор

НЕЗАВИСИМОСТЬ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ЕЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ В 1980- 1990-Х ГОДАХ

В статье показаны те процессы, которые произошли в СССР во время горбачевской «перестройки». Перестройка одновременно выявила неконкурентоспособность советской политической, экономической системы. Вместе с тем она способствовала активизации общественно-политической жизни республик, которые боролись за независимость. В Армении эта борьба связана с Карабахским движением и приобретением независимости.

Henrik Abrahamyan

Professor of History

INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA AND SOCIAL-POLITICAL LIFE IN 1980-1990

Gorbachev's «Perestroika» and processes which took place in USSR during this policy were discussing within the article. «Perestroika» revealed uncompetitiveness of soviet political, economical system. Social and political life was activated in the soviet republics, which were struggling for their independence. In Armenia this process was linked with the Karabakh movement and Armenian independence.

Էմիլ Օրդուխանյան
Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Խորհրդային Միության լուծարումը հիմք դրեց մի նոր հասարակական-քաղաքական գործընթացի, որը հայտնի է որպես հետխորհրդային ձևափոխություն (տրանսֆորմացիա): Այդ խնդրի վերաբերյալ վերջին քսան տարիների հետազոտությունները վեր հանեցին բազմաթիվ առանձնահատկություններ ցույց տալով, որ հետխորհրդային կերպարանափոխությունը խրթին և բազմավեկտոր գործընթաց է՝ իր յուրօրինակ դրսևորումներով: Հայտնի է, որ նախկին խորհրդային բոլոր երկրները հայտարարեցին ժողովրդավարական արժեքների և ուղու որդեգրման մասին, սակայն մինչ օրս այդ երկրներից շատ քչերին է հաջողվել հասնել ժողովրդավարության նպատակադրված շեմին: Հարկ է նկատել, որ այն երկրները, որտեղ ժողովրդավարության մակարդակը համեմատաբար ավելի բարձր է, հիմնականում եվրախնդեգրման ուղին որդեգրած նախկին միութենական պետություններն են: Մինչդեռ մյուս հետխորհրդային պետությունները, որոնք նախընտրեցին պահպանել արտաքին քաղաքական որոշակի ինքնուրույնություն կամ գնացին եվրասիական ինտեգրման ճանապարհով, դեռևս չեն կարողանում հասնել ժողովրդավարության իրենց նախընտրելի մակարդակին, և այդ արժեքները մնում են, թերևս, վերացականության դաշտում: Այս մասին են վկայում բազմաթիվ փորձագիտական և վիճակագրական հետազոտությունների արդյունքները, որոնք միաժամանակ նաև

փաստում են, որ այդ երկրներում ժողովրդավարության մարտահրավերները դեռ հեռու են հաղթահարելի դառնալուց՝ իհարկե, չնչին տարբերություններով, եթե համեմատենք եվրաինտեգրման ուղին չորդեզրած կամ դրանից շեղված նախկին միութենական երկրները:

Հետխորհրդային տարածքի երկատման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցան երկրաքաղաքական զարգացումները Արևմուտք-Ռուսաստան հավասարակշռության որոնման համատեքստում, որոնք մեծապես ազդեցին նախկին միութենական պետությունների արտաքին քաղաքական կողմնորոշման ճշգրտման վրա: Այդպիսի քաղաքական գործընթացները յուրովի ազդեցին նաև ժողովրդավարացման վրա՝ անուղղակիորեն պայմանավորելով այդ ամենը նաև տվյալ երկրների քաղաքակրթական, մշակութային, ավանդական, էթնիկ, կրոնական և այլ տարասեռ գործոններով: Հետևապես ինտեգրման գործընթացները պայմանավորվեցին ոչ միայն վերը թվարկված գործոններով, այլև տվյալ երկրների անվտանգության ապահովման գործոնով, որի վրա մեծ ազդեցություն թողեցին արևմտյան հավակնությունները և ռուսական՝ իր նախկին տարածքներում (արեալում) ազդեցության վերականգնման և ընդլայնման ձգտումները: Արդյունքում ինտեգրման գործընթացներն անվտանգության անհրաժեշտության գիտակցումով նորանոր մարտահրավերներ ստեղծեցին ժողովրդավարության համար այն երկրներում, որոնք նախընտրեցին ոչ եվրոպական ուղին: Մակայն հարկ է նկատել, որ այդ երկրների շարքում Հայաստանի Հանրապետությունը, լինելով եվրասիական ինտեգրման գոտում, միակն է իր հասարակության ժողովրդավարացման ներուժով, որը հնարավորության դեպքում կարող է օրինակ ծառայել մյուսների համար, եթե իսկապես նրանց ժողովրդավարության ձգտումները կեղծ չեն: Իսկ քանի որ այդ երկրների գերակշիռ մասը հասարակության կառուցվածքով համասեռ չեն, ապա նրանց ժողովրդավարացումը հնարավոր է միայն կոնսոցիատիվ

մոդելի միջոցով, որը, որպես փորձված մոդել, կարող է իրատեսական հիմքեր ստեղծել նույնիսկ եվրասիական ուղին ընտրած կամ հարաբերական արտաքին ինքնուրույնության ձգտող որոշ պետությունների ժողովրդավարացման համար:

Эмиль Ордуханян

Кандидат политических наук,
Институт философии, социологии и права НАН РА

ИНТЕГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ И ВЫЗОВЫ ДЛЯ ДЕМОКРАТИИ В ПОСТСОВЕТСКИХ СТРАНАХ

С помощью сравнительного анализа в статье изучается вопрос об интеграции и вызовы для демократии в постсоветских странах.

После распада Советского Союза начался новый процесс трансформации. Результаты исследований, проведенных в течение двух десятилетий, выявили ряд особенностей, которые доказали, что постсоветская трансформация является чрезвычайно сложным и многовекторным процессом. Все постсоветские страны объявили о демократических ценностях в качестве первоочередной задачи, но на самом деле только часть из этих стран успела построить демократические режимы. Это особенно те страны, которые выбрали путь европейской интеграции. В то же время, в других постсоветских странах, которые предпочли евразийскую интеграцию или остались на стороне, существуют еще много проблем, которые им необходимо преодолеть.

В рамках данного исследования также рассматриваются геополитические развития, вопросы национальной безопасности, различия между цивилизацией и культурой, а также другие факторы, которые глубоко влияют на процесс демократизации в постсоветских странах. И, в конце, мы приходим к выводу, что консоциальная

модель демократии может стать полезным инструментом для демократизации некоторых постсоветских стран.

Emil Ordukhanyan

Candidate of Political Science,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

INTEGRATION PROCESSES AND CHALLENGES TO DEMOCRACY IN POST- SOVIET COUNTRIES

Using a comparative analysis in the paper I explore the issue of integration and challenges to democracy in post-soviet countries.

After the collapse of Soviet Union a new process of transformation has started. Recent research has shown that during two decades several peculiarities have proved that post-soviet transformation is exceptionally complex and multi-vector process. All these countries declared democracy values as a top priority but actually only a part of them was able to build a democratic regimes, especially those which have chosen the way of European integration. Meanwhile, in other post-soviet countries which have preferred Eurasian integration or stayed apart there are still many challenges to democracy they need to overcome.

In the framework of research the paper also explores geopolitical developments, national security issues, distinctions between civilization and culture, and other factors which deeply influence democratization in post-communist countries. Finally, we conclude that consociational democracy model can be a useful tool to democratization for some of Post- soviet countries.

Հայկ Սուքիասյան
Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԱԶՄԱԿԱԶՄ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժամանակակից հասարակությունների, այդ թվում՝ հետ-խորհրդային, մեծ մասը բազմակազմ է, նրանց համար բնութագրական են «հատվածական տարբերություններ», որոնք կարող են ունենալ լեզվական, էթնիկական, կրոնական, ռասայական, մշակութաքաղաքակրթական, տարածաշրջանային ծագում: Բնակչության խմբերը, որոնք առանձնացվում են այդ տարբերությունների կամ նրանց համախմբի հիման վրա, համարվում են բազմակազմ հասարակության հատվածներ (սեգմենտներ): Նման հասարակության համար հատկանշական խնդիր է քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև ներդաշնակության սահմանման և հավասարակշռության ապահովումը: Հավասարակշռության խախտումը որևէ էթնիկ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է էթնոկրատիայի (նացիոկրատիայի), այսինքն՝ մի էթնիկ խմբի (ազգի) գերիշխանության հաստատմանը մյուսների նկատմամբ՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Բազմակազմ հասարակություններում որևէ էթնիկ մեծամասնության գերիշխանությունից՝ էթնոկրատիայից/նացիոկրատիայից խուսափելու ձևերից մեկը կոնսոցիատիվ ժողովրդավարությունն է՝ որպես համաձայնության և ներդաշնակության ժողովրդավարություն, որպես պետության կառավարման, վարչակարգի և նրա կառուցվածքի առավել արդյունավետ ձև:

Խորհրդային Միության փլուզումից հետո փոքրամասնությունները անկախության շրջանի փոփոխությունների ընթացքում մնացին մեն-մենակ մեծամասնության առջև և պարտություն կրեցին: Նրանք նաև կարծես «վրիպեցին» միջազգային հանրության ուշադրությունից, իսկ Վրաստանի և Ադրբեջանի իշխանություններին ձեռնտու չէր միջազգային ներգրավվածությունը՝ էթնիկական պահանջների ամրապնդման վախից ելնելով: Հիմնախնդիրն իր առանձնահատուկ դրսևորումը գտավ չքացած ԽՍՀՄ ազդեցության գոտում և նրա նախկին տարածքում, որ հիմնականում նախկին Ռուսական կայսրության տարածման վիթխարի շրջանն է: Տվյալ առանձնահատկությունը պայմանավորվեց մեծ չափով Արևմուտքի կողմնակալ և «տարօրինակ» վարքագծով. Արևմուտքն իր դավանած արժեքների համակարգից ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառելի (հետևապես՝ լեգիտիմ) համարելով նախկին միութենական հանրապետությունների (և ո՛չ ժողովուրդների), այդ թվում՝ ազգային պետությունների քողի տակ էթնոկրատիա ստեղծող գաճաճ կայսրությունների (Ադրբեջան, Վրաստան և այլն) հանդեպ, մերժեց բառիս բուն իմաստով գոյապայքար մղող ավտոխտոն (անդրենածին) ժողովուրդներին (հայությանն Արցախում, լեզգիներին, թալիշներին, աբխազներին, օսերին և ուրշներին), ինչը վկայությունն էր ու արտահայտությունը «հին ու բարի ժամանակների» գաղութարարության և դասական իմպերիալիզմի: Բնական էր հիշյալ և այլ ժողովուրդների ահռելի հիասթափությունը, կոնկրետ, Արևմուտքից և թերևս նրա գովազդած արժեքներից: Քանզի նույն Արևմուտքը կամա-ակամա կլլեց իր կողմից արհամարհված և տասնամյակներով անարդար դիտված «չարիքի կայսրության» մտահղացումների խայծը:

Փոխակերպվող հասարակությունների կառավարությունների համար, որոնք գործում են ձգձգված (հետաձգված) հակամարտությունների առկայության կամ դրա վտանգի պայմաններում, խնդրի լուծման առավել արդյունավետ միջոցը կոնսո-

ցիատիվ ժողովրդավարության ինստիտուցիոնալացումն է: Կոնսոցիատիվ ժողովրդավարության ինստիտուտները վարչական ներկայացուցչականության համամասնականությունը, տարածքային ինքնավարությունը, փոխադարձ վետոն խոչընդոտում են քաղաքական իշխանության ապակոնսոլիդացիան քաղաքական ծայրահեղականության նկատմամբ արդյունավետ պետական կառավարման պայմաններում:

Айк Сукиасян

Кандидат политических наук,
Институт философии, социологии и права НАН РА

КОНСОЦИАТИВНАЯ ДЕМОКРАТИЯ В ПОСТСОВЕТСКИХ МНОГОСОСТАВНЫХ ОБЩЕСТВАХ

Большинство обществ, в том числе и большинство постсоветских обществ являются многосоставными, которым характерны “сегментарные различия”. Эти различия могут иметь религиозные, идейные, языковые, расовые или этнические характеры. Нарушение баланса в пользу одного из этнических групп неизбежно приводит к этнократии/нациократии - к доминированию одной этнической группы над другими этническими группами. В многосоставных обществах существуют два пути для политической стабильности и обеспечения баланса между различными сегментами общества: первый - это федерализм, а второй - консоциативная демократия Арендта Лейпхарта. Консоциативная демократия гораздо более эффективна, чем вестминстерская модель. Те многосоставные общества, где лидеры или партии, представляющие различные этнические или религиозные сегменты, вовлечены в процесс управления, являются более стабильными и бесконфликтными.

Hayk Sukiasyan
Candidate of Political Science,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

CONSOCIATIONAL DEMOCRACY IN POST-SOVIET PLURIAL SOCIETIES

Most societies, including most post-Soviet societies, are plural, and they are characterized by “segment differences”. These differences may be religious, ideological, lingual regional, racial or ethnic characters. The imbalance in favor of one of the ethnic groups inevitably leads to ethnocracy/ natiocracy i.e. to the domination of one ethnic group over other ethnic groups. In plural societies there are two ways for political stability and for balance between different segments of society: the first is federalism, and the second is consociational democracy of Arendt Lijphart. Consociational democracy is much more effective than the Westminster model. Those plural societies where leaders or parties representing various ethnic or religious segments involved in the management process, are more stable and peaceful.

Գուրգեն Մխնյան
Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

ՈՒԺԵՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2016 թվականի ապրիլյան իրադարձությունները հաստատեցին, որ միջազգային դիվանագիտության կարևոր բաղկացուցիչներից մեկը եղել և մնում է ուժի քաղաքականությունը:

Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական ագրեսիան ցույց տվեց, որ Հարավային Կովկասի անվտանգության համակարգը սպառել է իր կենսունակությունը: Տարածաշրջանում գործառնվող քաղաքականությունն այլևս ընդունակ չէ պահպանելու ուժերի հավասարակշռությունը և կայուն խաղաղությունը:

Քառօրյա պատերազմին հաջորդած դեպքերը բեկումնային էին համաշխարհային հայկականության աշխարհընկալման կերպափոխման գործընթացում. իրենց նշանակությունը կորցրին կարծրատիպեր, որոնք արմատացած էին ազգի հավաքական գիտակցության մեջ: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր հայ ազգն ուներ մի շարք չպարզաբանված ընկալումներ և ակնկալիքներ, որոնց պատրանքային բնույթը պիտի ապացուցվեր տասնամյակների ընթացքում: Ակնհայտ է՝ ապրիլի 2-ից ի վեր մենք ապրում ենք այլ իրականության մեջ, որը երկփեղկել է մեր անկախության պատմությունը: Հայտնի է, որ ժամանակը կերպափոխում է մարդկության աշխարհընկալումը: Զուգահեռ փոխվում են հետաքրքրություններն ու շահերը, դրանց բավարարման համար նախատեսված մեթոդներն ու տեխնոլոգիաները: Քանի որ ազգ-պետություններին սպառնացող արտաքին և ներքին մարտահրավերները շարունակաբար կրում են քանակական և որակական փոփոխություններ, անհրաժեշտ է անընդհատ վերաիմաստավորել և արդիականացնել ազգային անվտանգության պահպանման ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ մեխանիզմները:

Նոր սերնդի մարտահրավերները ստիպում են նորովի դիտարկել պետական կառավարման արդյունավետության հիմնախնդիրները, քաղաքական ընտրանու իրազեկության (կոմպետենտության) և կառավարչական հմտությունների չափորոշիչները, տնտեսության ստվերի և ձևավորված կոռուպցիոն ցանցի վտանգավորության աստիճանն ու քաղաքացիական հասարակության ներուժի ուղղորդման անհրաժեշտությունը: Հավատա-

րիմ մնալով պետական կառավարման ժողովրդավարական ար-
ժեհամակարգին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հայկական պետու-
թյունների զարգացման և ուժեղ պետության կայացման կարևո-
րագույն գործոնը պետական կառավարման գործընթացում
հանրային մասնակցության բարձր մակարդակի ապահովումն է:
Վերոգրյալը ենթադրում է, որ ընտրանին պետք է ձևավորվի
բազմիշխանության սկզբունքներին համահունչ՝ յուրաքանչյուր
քաղաքացուն ընձեռելով հավասար ելակետային հնարավորու-
թյուններ: Պառլամենտարիզմի արմատավորման համար, ան-
շուշտ, անհրաժեշտ է բարձրացնել հանրության քաղաքական
գիտակցությունը: Շահային խմբերի միջև առողջ մրցակցային և
համագործակցային հարաբերությունների ձևավորումը թույլ
կտա արդիականացնել կուսակցական համակարգը՝ անցում կա-
տարելով անձակենտրոն կուսակցությունից գաղափարահենք
կուսակցության: Վերոգրյալի խոր ուսումնասիրությունը և կի-
րառելիության ապահովումը պարարտ հող կստեղծեն ազգային
ինստիտուտների արդիականացման և հզորացման համար:

Гурген Симонян

Кандидат политических наук,
Институт философии, социологии и права НАН РА

СТАНОВЛЕНИЕ СИЛЬНОГО ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ НАЦИОНАЛЬНЫХ ИНТЕРЕСОВ

Апрельские события 2016 года утвердили, что силовая политика была и остаётся одним из самых важнейших факторов в мировой политике. Широкомасштабная военная агрессия со стороны Азербайджана показала, что система безопасности Южного Кавказа недееспособна. Применяемая региональная политика более не способна обеспечить равновесие сил и продолжительность мира в целом.

Последующие дни четырёхдневной войны коренным образом повлияли на переосмысление мировоззренческих основ мирового армянства: потеряли былое значение архетипы, которые давно укоренились в массовом сознании нации.

Gurgen Simonyan

Candidate of Political Science,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

ESTABLISHMENT OF STRONG STATE IN THE CONTEXT OF THE MODERNIZATION OF NATIONAL INTEREST

The April events in 2016 confirmed, that the power policy was and is one of the most important factors in world politics. The large scale military aggression unleashed by Azerbaijan indicated, that South Caucasus security system is dysfunctional. Applicable regional policy is not able to provide balance of power and the duration of the peace. After four days war the worldview foundations of world Armenians radically have been changed. Some archetypes, which have long been entrenched in the mass consciousness of the nation, lost its former importance.

Владимир Осипов

Кандидат философских наук
Институт Философии, социологии и права НАН РА

ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ДОСТИЖЕНИЮ ГЕНДЕРНОГО РАВЕНСТВА: ЭВОЛЮЦИЯ И ПЕРСПЕКТИВЫ

Внимание проблематике гендерного равенства правительство Армении стало уделять только с середины 1990-х гг. - в связи с

принятием на себя международных обязательств, а впоследствии еще и с тем, что европейская интеграция стала одним из главнейших приоритетов страны, а гендерное равенство и принцип недискриминации, в том числе и по признаку половой принадлежности, являются ключевыми европейскими ценностями. Опираясь на основные международные документы по вопросам гендерного равенства, Армения разработала ряд национальных документов по обеспечению гендерного равенства, на базе которых была разработана и стала проводиться в жизнь гендерная политика. Основные национальные документы опираются на Конституцию РА, которая запрещает дискриминацию по половому признаку и подчеркивает равенство прав женщин и мужчин.

Одной из первых попыток разработать государственную политику в сфере обеспечения равенства женщин и мужчин и приступить к ее реализации явилась “Национальная программа по улучшению положения женщин и повышению их роли в обществе в 1998-2000 гг. в Республике Армения”. Основная цель программы заключалась в усилении гарантий прав и основных свобод женщин, расширении представленности женщин в органах власти на уровне принятия решений, укреплении мер по охране материнства и борьбе с насилием в отношении женщин, проведении гендерных исследований, а также гендерной экспертизы законодательства, сборе статистических данных дезаггегированных по полу и т.д.

Поскольку в целом Программа осталась незавершенной, ее опыт был учтен при разработке Национальной программы по улучшению положения женщин и повышению их роли в обществе в Республике Армения на 2004-2010 гг. В ней были изложены принципы, приоритеты и основные направления государственной политики по решению женских проблем в рамках международных обязательств Армении. В Программе была однозначно сформулирована цель обеспечения не только равных прав, но и равных возможностей женщин и мужчин на уровне принятия решений,

особенно в общественной и политической сфере, а также были определены задачи и конкретные меры по улучшению женского здоровья и социально-экономического положения женщин, по искоренению насилия (в том числе траффкинга) в отношении женщин и по внедрению новых подходов в сфере образования, культуры и СМИ.

Если вначале основной упор ставился на улучшение положения женщин и усиления их роли в обществе, то постепенно центр тяжести смещается на новую парадигму - гендерного равенства (равенство прав и возможностей женщин и мужчин, не только де-юре, но субстантивное равенство), в рамках которой были разработаны и приняты основополагающие для государственной гендерной политики документы.

“Концепция государственной гендерной политики РА” (утверждена Правительством РА 11 февраля 2011 г.) является первым всеобъемлющим государственным документом, в котором последовательно и систематизировано изложены основные принципы, цели и задачи гендерной политики, а также инструменты и стратегия ее реализации. В Концепции подробно рассмотрены 6 сфер: государственное управление, социально-экономическая сфера, образование, здравоохранение, культура и СМИ, а также борьба с гендерным насилием и траффкингом. По каждой сфере приводится ситуационный анализ, выявлены приоритетные проблемы, основные цели, задачи, основные направления и стратегия реализации гендерной политики.

“Закон об обеспечении равных прав и равных возможностей женщин и мужчин” (принят 20 мая 2013 г.) основной целью объявляет обеспечение гендерного равенства во всех сферах общественной жизни и правовой защиты женщин и мужчин от дискриминации по признаку пола и определяет гарантии обеспечения равных прав и равных возможностей для женщин и мужчин в политической, социальной, экономической, культурной и других

сферах общественной жизни. Закон впервые дает определение дискриминации по признаку пола и формам такой дискриминации, санкционирует применение временных специальных (компенсационных) мер, приводит их типологию с указанием сфер, параметров, пределов и сроков их применения, нацелен на формирование культуры гендерного равенства, толерантности и плюрализма и преодоление патриархальных стереотипов, культуры господства и насилия, предписывает интеграцию гендерного измерения в государственные, региональные и общинные программы развития.

“Стратегическая программа гендерной политики РА на 2011-2015 гг.” (принята 20 мая 2011 г.) явилась дорожной картой для государственной гендерной политики, определив ее приоритетные направления в 6 сферах: управления, социально-экономической, образования, здравоохранения, культуры и общественной информации, а также предотвращения гендерного насилия и эксплуатации (траффикинга) людей. Ее основные цели заключались в ликвидации дискриминации по признаку пола, в достижении фактического равенства женщин и мужчин, в создании равных условий и равных возможностей для обоих полов и в интеграции гендерного компонента в программы и планы развития.

Также была разработана и 17 июня 2011 г. принята “Национальная программа РА против гендерного насилия на 2011-2015 гг.”, основной целью которой являлось сокращение масштабов этого насилия в стране. Для достижения этой цели были сформулированы задачи и определены мероприятия в трех основных сферах: предотвращение гендерного насилия, предоставление всестороннего содействия и защиты жертвам насилия и преследование лиц, совершивших акты насилия.

На основе как Стратегической программы, так и Национальной программы разрабатывались годовые планы с указанием конкретных мероприятий, о выполнении которых отчитывались министерства и ведомства, а также региональные власти.

Экспертами ООН был сделан вывод, что реализация этих программ представляет собой важный шаг вперед на пути к достижению гендерного равенства и что позитивную динамику следует укрепить последующими действиями в этой сфере.

Тем не менее, гендерное неравенство и дискриминация еще не преодолены в Армении. Сейчас, когда разрабатывается новая программа гендерной политики РА на 2017-2021 гг., необходимо четко и конкретно обозначить основные приоритеты государственной политики с учетом Целей устойчивого развития и задач улучшения показателей и рейтинга страны по важнейшим международным индексам, с тем, чтобы преодолеть гендерный дисбаланс и асимметрию во всех сферах общественной жизни.

Vladimir Osipov
Candidate of Philosophy,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

REPUBLIC OF ARMENIA'S POLICY OF ACHIEVING GENDER EQUALITY: EVOLUTION AND PROSPECTS

Since mid-1990's, the Republic of Armenia started formulating and implementing policies regarding women's issues. By 2010, a paradigm shift occurred with a focus shifting to gender equality issues. The major policy documents (4 national programmes, the Gender Policy Concept Paper and the Law on equal rights and opportunities for women and men) are analyzed and recommendations are made for the new national programme that is being drawn up by the Armenian Government.

Վլադիմիր Օսիպով
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԵԼՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

1990թթ. կեսերից Հայաստանի Հանրապետությունը սկսել է ձևավորել և իրականացնել կանանց խնդիրներին վերաբերող քաղաքականություն: Հետագայում՝ 2010թ.-ին, անցում կատարվեց դեպի նոր՝ գենդերային հավասարության հարացույցը: Գենդերային քաղաքականության կարևորագույն փաստաթղթերը (4 ազգային ծրագրերը, գենդերային քաղաքականության հայեցակարգը, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը) վերլուծվում են, և առաջարկություններ են արվում նոր ազգային ծրագրի համար, որը ներկայումս մշակվում է ՀՀ կառավարության կողմից:

Ирина Аракелян
Кандидат экономических наук,
Институт Философии, социологии и права НАН РА

**МИГРАЦИЯ НАСЕЛЕНИЯ АРМЕНИИ В
ПОСТСОВЕТСКИЙ ПЕРИОД**

В Армении, в отличие от других республик постсоветского пространства, активные миграционные процессы начались еще в конце 1980-х гг., и носили отчасти вынужденный характер. Так, землетрясение 1988г. привело к всплеску миграционной активности:

люди перебирались из районов бедствия в крупные города СССР. На этот процесс наложился новый миграционный поток, возникший всего через несколько лет, в 1991-1993 гг., когда на фоне распада СССР и активизации конфликта в Нагорном Карабахе поднялась еще одна волна эмиграции. Спецификой миграционных процессов в республике, оказавшейся в экстремальной ситуации, является то, что в этом случае объектом воздействия на перемещение выступает не миграция сама по себе, а ситуация той региональной системы, в рамках которой совершается этот процесс. Эта система включает территориальное состояние рабочих мест с учетом их качества и структуры, состояние социально-бытовой инфраструктуры, региональные особенности природно-географической среды обитания.

Диапазон причин, вызывающих миграционные намерения, чрезвычайно широк. К тому же на миграцию часто влияют не один, а целый комплекс факторов; они влияют в совокупности, и интенсивность их различна для разных социально-демографических групп мигрантов. Нынешняя миграционная ситуация Армении обусловлена комплексом причин социально-экономического, политического, психологического характера. Среди причин эмиграции две основные проблемы, с которыми столкнулось население Армении, – это безработица и тяжелые экономические условия. Обе эти проблемы, точнее группы проблем, тесно связаны между собой и, более того, влияют друг на друга. В стране назрела непростая ситуация, связанная с существованием значительной доли трудоспособного населения, не имеющего законных, т.е. трудовых источников дохода и средств жизни. Оставшиеся без работы и на грани нищеты многие рабочие, служащие, интеллигенция видят в миграции единственный выход из ситуации.

Рассматривая масштабы и наиболее общие демографические и социальные особенности структуры мигрантов, обнаруживаем, что активное развитие эмиграции из Армении началось с развалом СССР, и только за 1991-1995 гг. за пределы республики пересели-

лись 800-900 тыс. человек, что составляло примерно треть населения республики. Потоки мигрантов из Армении в основном направлялись в Россию, Украину, Белоруссию, в США и в Западную Европу. Итак, трудовая детерминанта – основная среди стимулирующих факторов, как в интенсивности, так и в результативности миграций в условиях современного рынка труда Армении. Наиболее сильным фактором, дифференцирующим структуру трудовых мигрантов, является возраст. Повышенной миграционной подвижностью обладают лица трудоспособных возрастов, а среди них наибольшая доля приходится на молодых, наиболее активных лиц с высоким образовательным уровнем. Специфической чертой мигрантов является также гендерный дисбаланс – преобладание в их составе мужчин – 66%. В первом потоке переселенцев преобладали не бедняки и не богатые, а люди с более или менее средним достатком. Отток трудовых кадров из республики протекал по двум направлениям: в ближнее зарубежье (в постсоветские республики) и в дальнее зарубежье. Причем в обоих случаях этот процесс осуществляется двояко: как просто эмиграция населения (бегство от экономического кризиса) и как широкое перемещение трудовых кадров в поисках работы. Особенность сегодняшнего положения в том, что миграция обрела невиданные ранее размеры и вот уже десятилетия существенно не уменьшается даже в периоды относительного оживления экономики. К концу 90-х гг. прошлого столетия Армению покинули около 1 млн. человек. К настоящему времени эта цифра, по оценкам экспертов, возросла до 1,5 млн.

В условиях глобализации и нестабильности среди потенциально неблагоприятных факторов воздействия международной миграции особую озабоченность в Армении вызывает эмиграция высококвалифицированных кадров, особенно если она касается работников интеллектуального труда. Если в общей структуре миграционных потоков выделить лишь интеллектуальных мигрантов, то в этом случае, к сожалению, Армения включается в процессы

международной миграции, преимущественно лишь как страна-донор высокообразованных и квалифицированных кадров. Пик эмиграции армянских ученых приходится на начало 1990-х, когда распался Советский Союз и конец 1990 – начало 2000-х, когда страна столкнулась с последствиями особенно острого экономического кризиса. Именно в этом потоке, как отмечают исследователи, были “специалисты высокой квалификации, стремившиеся найти работу в “дальнем зарубежье” или заняться предпринимательством в “ближнем зарубежье”, а также оказавшиеся в социально-дискомфортной ситуации представители бывшей номенклатуры (утечка мозгов и капитала), а также русскоязычное население...”. Одной из причин интеллектуальной миграции в Армении следует назвать затянувшийся кризис отечественной науки, который своими корнями уходит в советское прошлое, и в котором прочно укрепилась государственная недооценка роли и значения интеллектуального труда и в целом духовной сферы общественного производства. Среди всех уехавших из Армении ученые, преподаватели, инженеры и специалисты составляют порядка 30%. Это превышает средний показатель по стране. Наибольший по масштабам отток наблюдается из главного центра науки – Национальной Академии Наук Армении. Численность академических работников сократилась с 7 тысяч до 3.5 тысяч.

Постановка задач, связанных с необходимостью ответа на вызовы, которые ставит перед Арменией миграция, существенно актуализировалась с вступлением Армении в ЕАЭС. Присоединение Армении к Евразийскому Союзу изменит принципы управления миграцией в регионе и увеличит приток легальных мигрантов в Россию. Создание общего рынка труда будет означать радикальное изменение подхода к управлению иммиграцией в регионе. Россия не только лишится возможности устанавливать какие-либо институциональные ограничения на иммиграцию, но и возьмет на себя обязательство обеспечивать равные права на трудоустройство,

оплату труда и другие социально-правовые гарантии гражданам стран-членов. Таким образом, поток миграции из Армении не только не прекратится после вступления республики в ЕАЭС, а в первые годы еще более усилится, поскольку либерализация визового режима в ЕАЭС приведет к росту высококвалифицированной рабочей миграции и миграции студентов. А это говорит о том, что страну покидает востребованный человеческий капитал, который направляется на развитие экономики других государств, в то время как при наличии соответствующей политики армянских властей он мог бы способствовать развитию экономики Армении.

Irina Arakelyan

Candidate of Economic Sciences,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

THE MIGRATION OF THE ARMENIAN POPULATION IN THE POST-SOVIET PERIOD

The active migration processes in Armenia began in late 1980s and particularly were of forced nature. The migration situation of Armenia is connected with the social- economic, political, psychological reasons.

The labor determinant – is the main among the stimulating factors as in intensiveness as well as in the effectiveness of migration in the conditions of modern labor Armenian market. The characteristics of today's situation is that the migration has retrieved in unprecedented volumes and already is not being decreased for decade even in periods of comparatively economic recovery.

Իրինա Առաքելյան
Տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանում ակտիվ միգրացիոն գործընթացները սկսվեցին դեռևս 1980-ականների վերջին և կրում էին մասամբ պարտադրողական բնույթ: Հայաստանի միգրացիոն իրավիճակը պայմանավորված է սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգեբանական բնույթի պատճառների համալիրով: Աշխատանքային դետերմինանտը հիմնականն է Հայաստանի ժամանակակից աշխատաշուկայի պայմաններում միգրացիաները խթանող գործոններից՝ ինչպես ինտենսիվության, այնպես էլ արդյունավետության տեսանկյունից:

Այսօրվա դրության առանձնահատկությունն այն է, որ միգրացիան ձեռք է բերել նախկինում չտեսնված չափեր և արդեն տասնամյակներ էապես չի նվազում նույնիսկ տնտեսության հարաբերական աշխուժացման ժամանակահատվածներում:

Քնարիկ Պետրոսյան
Երևանի պետական համալսարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1991թ. Հայաստանի անկախացումը նոր փուլ սկզբնավորեց Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում, որոնք ծավալվեցին բոլոր ուղղություններով՝ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային: Հայրենիքում իրենց գրասենյակ-

ները բացեցին և ակտիվ գործունեություն սկսեցին տարիներ շարունակ Սփյուռքում գործող հայ ազգային ավանդական քաղաքական կուսակցությունները՝ Հայ յեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ), Հայաստանի ռամկավար-ազատական (ՌԱԿ) և սոցիալ-դեմոկրատական հնչակյան (ՄԴՀԿ), որոնք ոչ միայն մասնակցեցին երկրի հասարակական-քաղաքական կյանքին, այլև 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի հետևանքների վերացմանը, մարդասիրական օգնության հատկացմանը, օտար երկրներում ազգային հիմնախնդիրների արծարծմանն ու իրենց կից կառույցների միջոցով լոբբինգային ու իրազեկման աշխատանքների իրականացմանը:

Սփյուռքը միահամուռ պաշտպանեց Արցախյան ազգային-ազատագրական շարժումը՝ հանդես գալով ԼՂ ինքնորոշման իրավունքի օգտին, շարունակեց պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ՝ այդ նպատակով ստեղծելով նոր կառույցներ ու կիրառելով մարտավարության նոր եղանակներ, հանդես եկավ անկախ Հայաստանի Հանրապետության հզորացման և բարգավաճման օգտին: Այդ աշխատանքներում ազգային կուսակցություններից գատ աչքի ընկան Հայ դատի հանձնախումբը, Ամերիկայի հայկական համագումարը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Ռուսաստանի հայերի միությունը, Համաշխարհային հայկական կոնգրեսը, Ուկրաինայի հայերի միությունը և այլ կառույցներ:

Անգնահատելի էր Սփյուռքի մասնակցությունը երկրաշարժի, Արցախյան պատերազմի և շրջափակման հետևանքով ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում հայտնված Հայրենիքին աջակցելու գործում: 1988թ. ադետից անմիջապես հետո ստեղծվեցին մի շարք հիմնադրամներ, որոնց միջոցով Սփյուռքը միլիոնավոր դոլարներ և մարդասիրական մեծ օգնություն ուղղորդեց Հայրենիք: Այդ կառույցներից աչքի ընկան հատկապես «Հայաստան» համահայկական, Լինսի, «Գաֆեաճեան ընտանիք»

հիմնադրամները, Միացյալ հայկական ֆոնդը, «Հովարդ Կարագյոզյան» հաստատությունը, «Գալուստ Կյուլպենկյան» բարեսիրական ու գիտամշակութային հիմնարկությունը, «Ջինիշյան հիշատակի ծրագիրը», «SOS Արմենի», «Ազնավուրը Հայաստանին», «Հույս Հայաստանին» կազմակերպությունները, ՀԲԸՄ-ն, Հայ օգնության միությունը, Հայ օգնության ֆոնդը և մի շարք այլ հիմնադրամներ ու կազմակերպություններ, որոնք, Հայաստանում և Արցախում իրականացնելով լայնածավալ մարդասիրական ծրագրեր, աստիճանաբար ավելի կատարելագործեցին իրենց գործունեության ձևերը՝ անցում կատարելով հեռանկարային զարգացման ծրագրերի:

Ցավոք, ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ այն իրողությունը, որ Մփյուռքը ՀՀ պետական իշխանությունների կողմից հիմնականում ընկալվում էր որպես Հայաստանին ֆինանսական օգնություն հատկացնող աղբյուր: Այդ իրավիճակը շտկելու, Հայրենիք-Մփյուռք հարաբերություններում ի հայտ եկած բացերն ու թերությունները վերացնելու, ինչպես նաև համահայկական տարողության հարցերի շուրջ միասնական մոտեցումներ որդեգրելու նպատակով 1999թ.-ից սկիզբ առավ Հայաստան-Մփյուռք խորհրդածոցովների գործընթացը, որոնք Մայր հայրենիքում, համախմբելով համայն հայության գրեթե բոլոր ներկայացուցիչներին, դարձան Հայաստան-Մփյուռք գործակցության յուրօրինակ հարթակ: Մինչ օրս տեղի են ունեցել Հայաստան-Մփյուռք թվով հինգ խորհրդածոցով ու համաժողով (1999, 2002, 2006, 2011 և 2014), որոնցում քննարկման առարկա են դարձել համազգային այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը, Հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը և հետևանքների վերացումը, Հայաստանի Հանրապետության զորացումը, համահայկական առաջնահերթությունների սահմանումն ու լուծման ուղիների մշակումը:

2008թ. Հայաստան-Մփյուռք առնչությունները բարձրաց-

վեցին պետական մակարդակի ՀՀ կառավարության կազմում ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծման միջոցով, որի գործունեության հիմքում դրված են Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականության մշակումն ու իրականացումը, հայ ժողովրդի հոգևոր միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը, Հայոց աշխարհի բարգավաճմանը նպաստող պայմանների ստեղծումը:

Кнарик Петросян

Ереванский Государственный Университет

ТРЕТЬЯ АРМЯНСКАЯ РЕСПУБЛИКА И ВЗАИМООТНОШЕНИЯ РОДИНА-ДИАСПОРА

В 1991 г., после провозглашения независимости Армении начался новый этап во взаимоотношениях Родина-Дiaspora, которые имели место во всех направлениях: в общественно-политической, социально-экономической и культурной. В общенациональных вопросах Армянская diaspora совместно с Родиной продолжает борьбу за признание, осуждение и ликвидацию последствий Геноцида армян, выступает за самоопределение Нагорного Карабаха, а также за развитие и процветание Армении.

Knarik Petrosyan

Yerevan State University

THIRD ARMENIAN REPUBLIC AND ARMENIA- DIASPORA RELATIONS

1991 Armenia's independence started a new stage in Armenia-Diaspora relations, which have developed in all directions, socio-

political, socio-economic and cultural. Together with the national priorities Armenian Diaspora with the Homeland continues to struggle for Armenian Genocide recognition, condemnation and elimination of consequences of acts, self-determination of Nagorno Karabakh, as well as the benefit of Armenia's empowerment and prosperity.

Մարինե Գևորգյան

Երևանի պետական համալսարան

ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2000 ԹԹ.

Մարդու կենսագործունեության և հասարակական հարաբերությունների մեջ, կենսական այլ բարիքների համեմատությամբ, հողը գրավում է առանձնահատուկ տեղ՝ իր սոցիալական նշանակության, սննդամթերք արտադրելու, բնական ռեսուրս ու անշարժ գույք լինելու հատկությամբ, ինչպես նաև ցանկացած պետության պարենային անվտանգության հիմք ու ազգային հարստություն հանդիսանալով, քանի որ այն տարածք է, որի վրա ապրում են ժողովուրդները: Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ նախկին տարածքում առաջինն իրականացրեց հողի սեփականաշնորհումը, ընդ որում այն սկսվեց դեռևս ԽՍՀՄ-ի օրոք՝ վերջինիս պաշտոնական լուծարումից մեկ տարի առաջ: Այդ ամենը կատարվեց <<Սեփականության մասին>> (հոկտեմբեր, 1990) և <<Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին>> ՀՀ օրենքների և ՀՀ հողային օրենսգրքի (հունվար, 1991) ընդունումով ու կիրառումով: Այդ օրենքներում մանրամասն նշվում էր հողային օրենսդրության ընդունման կարևորությունը մասնավոր հողատիրության զարգացման համար, սահմանվում էին գյուղացիական և գյուղա-

ցիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության տնտեսական, կազմակերպչական, սոցիալական պայմաններն ու իրավական հիմքերը: Հայաստանի Հանրապետությունում հողային վերափոխումները ներառում էին հետևյալ ուղղությունները.

ա. հողի սեփականության նկատմամբ պետական մենիշխանության վերացում և դրա հետ կապված ողջ համակարգի վերափոխում,

բ. հողի սեփականության իրավունքի տրամադրում հանրապետության քաղաքացիներին և նրանց կոլեկտիվներին,

գ. պետության սեփականության իրավունքը պահպանել միայն այն հողերի նկատմամբ, որոնց օգտագործումն ունի համապետական հատուկ նշանակություն,

դ. կարգավորված ֆինանսական ու հարկային համակարգի ձևավորում, որը կհամապատասխանի նորաստեղծ գյուղատնտեսության համակարգին,

ե. գյուղերի աշխատունակ բնակչության զբաղվածության աճի ապահովում և աշխատանքային ռեսուրսների նպատակահարմար օգտագործում,

զ. ագրարային հատվածի կառավարման մեխանիզմների կատարելագործում,

է. ագրարային շուկայի ձևավորում և զարգացում,

ը. հողի շուկայի ձևավորում և զարգացում և այլն:

ՀՀ Նախարարների խորհրդի՝ 1991թ. հունվարի 22-ի №43 որոշմամբ ստեղծվել էր ՀՀ Նախարարների խորհրդի հողային վերափոխման և սեփականաշնորհման պետական հանձնաժողով, որի հիմնական կազմում էին 37 պաշտոնյաներ: Հանձնաժողովի նախագահն էր ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը, ով ուներ 4 տեղակալ: 1991թ. հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

1. հողը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով առկա ընտանիքների քանակից և գյուղի հողային ռեսուրս-

ներից: Այստեղ նկատենք, որ խոսքը մշակելի հողատարածությունների մասին է, հետևաբար պարզ է դառնում, որ մեկ հողաբաժնի չափը յուրաքանչյուր գյուղի համար տարբեր մեծություն կարող էր ունենալ: Հայաստանի յուրաքանչյուր գյուղական ընտանիք սեփականաշնորհման արդյունքում ստացավ միջին հաշվով 1,5 հեկտար գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում՝ 1,1 հեկտար վարելահող:

2. Հողամասերի բաժանումը կատարվեց վիճակահանության սկզբունքով՝ ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ծխերի քանակից: Ցանկության դեպքում մի քանի ընտանիք կարող էին հող ստանալ միևնույն դաշտից, որը հետագայում կոլյուրացներ նրանց համատեղ աշխատանքների կազմակերպումը:

3. Հողը տրվեց գյուղացուն վճարովի, փոխհատուցումը սահմանվեց երկու տարում, այսպես կոչված կադաստրային գուտ եկամտի 70%-ի չափով, որը հաշվարկված էր ըստ հողերի տեսակների (ոռոգելի, անջրդի, այգի և այլն):

4. Գյուղատնտեսական մշակովի հողերի 20%-ը միջին հաշվով չսեփականաշնորհվեց՝ նկատի ունենալով գյուղի հետագա զարգացումը: Այդ տարածքները կարող էին տրվել վարձակալությանը օգտագործելու կամ այլ հանրային կարիքների համար: Շուկայական հարաբերությունների պայմաններում այդ հողերի արդյունավետ օգտագործումը պահանջում էր աճուրդային սկզբունքով դրանց վարձակալում:

5. Նոր օրենսդրությունը թույլատրում է սեփականաշնորհված հողի ազատ տնօրինում նրա տիրոջ կողմից, այդ թվում՝ օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալությամբ տալ կամ վերցնել, օրինական այլ գործարքներ կատարել, որոնք նախկինում արգելված էին:

Վերջապես, օրենքով նախատեսվում է տեղական իշխանության կողմից հողը հետ վերցնելու իրավունք, հատկապես այն դեպքում, երբ մի քանի տարվա ընթացքում այն չի օգտագործ-

վում, կամ նրա տերը չի վճարում օրենքով սահմանված հողային հարկը: Այս կապակցությամբ նշենք, որ իրականում այս դրույթը չի գործում, քանի որ գյուղացիների մեծ մասն անվճարունակ է, չի վճարում հարկը:

Հողի սեփականաշնորհման ընթացքում տեղ են գտել թերություններ և կոպիտ սխալներ, մասնավորապես.

1. մեր երկրում հողի սեփականաշնորհումը կատարվել է ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով, ընդ որում բոլոր վայրերում այն կատարվել է միևնույն ձևով՝ առանց հաշվի առնելու տարբեր գոտիների առանձնահատկությունները:

2. Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ էլ ընդհանրապես մասնակցություն չեն ունեցել դրանց ստեղծմանը: Դա ըստ էության «նումենկլատուրային» սեփականաշնորհում էր:

3. Երրորդ թերությունը հողակտորների մանրացումն էր:

4. Հանրապետության առևտրային (կոմերցիոն) բանկերի մեծ մասը ռեսուրսների բացակայության պատճառով գյուղացիական տնտեսություններին վարկեր չէին տրամադրել:

5. Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումներն ու դրանց դիմաց մթերքների ստացումը տարաժամանակյա բնույթ ունեին, կտրված էին միմյանցից: Ծախսերը կատարվում են ամբողջ տարում, մինչդեռ մթերքների մեծ մասը ստացվում էր տարեկան մեկ անգամ:

ПРИВАТИЗАЦИЯ ЗЕМЛИ В РА В ПЕРИОД 1991-1993 ГГ

Приватизация земли в РА была осуществлена в очень короткий период времени в 1991–1993 гг., что и послужило причиной того, что власти не успели подготовить соответствующее развитое правовое поле, направленное на закрепление права на приватизацию, рациональное использование земли и так далее. В результате сельское хозяйство РА разбилось на множество мелких индивидуальных хозяйств, которые не развивались. Влияние приватизации земли было положительным только в том смысле, что оно способствовало преодолению массовой бедности в сельской местности, однако для сельскохозяйственного производства, для повышения продуктивности сбыта сельхозпродукции государство должно было осуществить последующие преобразования. Однако в этой области было много упущений.

Marina Gevorkyan
Yerevan State University

LAND PRIVATIZATION IN RA DURING 1991-1993

In the Republic of Armenia the land privatization was carried out in a very short period; from 1991 to 1993 which was the reason for authorities not manage to develop an appropriate legislative framework aimed at the confirmation of land ownership, the rational use of land and so on. As a result, the agriculture in Armenia was partitioned into many small individual farms which remained undeveloped. The impact of land privatization was positive only in the sense that contributed to the reduction of mass poverty in rural areas, but for

increasing the efficiency of agricultural production and sales of agricultural products the state should conduct further reforms. However, the drawbacks were quite a lot in that field.

Կարեն Մկրտչյան

Երևանի պետական համալսարան

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՆԿԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Իրանի հայ համայնքը կանգնած է 1990-ական թթ. սկզբներին ձևավորված և զարգացման ուղին բռնած ՀՀ-ԻԻՀ միջպետական, քաղաքական-դիվանագիտական, առևտրատնտեսական, գիտակրթական և հոգևոր-մշակութային համագործակցության հիմքերում: Այդ համագործակցությունը պարբերաբար եղել է նաև երկու երկրների նախագահների ուշադրության կենտրոնում: Ավելին, համագործակցությունը ներառում է երկկողմ պետական շահագրգռություն Իրանի հայ համայնքի մասնակցության տեսակետից:

XX դարի պատմաքաղաքական դժվարին պայմաններում Իրանը դարձել է այդ երկրում ապաստան գտած հազարավոր հայերի համար ապահով վայր: Իրանի հայ համայնքը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների կենսունակ համայնքներից է: Իրանական հասարակական և պետական շրջանակները հայ համայնքի նկատմամբ դրսևորում են դրական վերաբերմունք:

Իրանը Հայաստանի հարևաններից միակն է, որի հետ Առաջին հանրապետության, Խորհրդային հանրապետության և Երրորդ հանրապետության տարիներին տարածքային և այլ կարգի վեճեր չեն եղել: Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին Իրանի Իսլամական Հանրապետությունը հայ

համայնքի համար խոչընդոտներ չի ստեղծել ՀՀ-ին օգնություն ցույց տալու հարցում:

Իրանի հայ համայնքը յուրօրինակ կամուրջ է ԻԻՀ-ՀՀ հարաբերություններում: Իրանի հայ համայնքը իսլամական միջավայրում քրիստոնեական յուրօրինակ օազիս է: Իրանական պետության կողմից հոգևոր-մշակութային ժառանգության հուշակոթողները պետական հոգածությամբ պահպանելը վկայում է այդ երկրի որդեգրած սկզբունքային քաղաքականության մասին: ԻԻՀ-ՀՀ միջպետական հարաբերությունների հաստատման ակունքներում որոշակի դեր ունեն իրանահայ գործիչները: Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին իրանական կողմը թույլ չի տվել որևէ բախում Իրանի հայ համայնքի և երկրի թուրքախոս զանգվածի միջև:

Իրանի հայ համայնքում մշակութային կյանքը զարգանում է բնականոն հունով:

1990-ական թթ. սկզբներին պատերազմի և շրջափակման մեջ գտնվող ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեին Իրանի հայ համայնքային կառույցների կողմից ուղարկված սննդամթերքը և նավթամթերքը: Իրանի հայ համայնքն ակտիվորեն ներգրավված էր նորանկախ ՀՀ-ի մշակութային կյանք:

Карен Мкртчян

Ереванский Государственный Университет

ПОДДЕРЖКА АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ИРАНА НОВОГО НЕЗАВИСИМОГО ГОСУДАРСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В данной статье обсуждаются инвестиции армянской общины Ирана в межгосударственные, политические, дипломатические, торговые, экономические и культурные связи между РА и ИРИ.

**THE SUPPORT OF ARMENIAN COMMUNITY OF IRAN
NEWLY INDEPENDENT STATE OF THE REPUBLIC OF
ARMENIA.**

The article discusses investments of Armenian community of Iran to interstate, political, diplomatic, trade, economic and cultural relations between the RA and IRI.

Անահիտ Զիջյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Ռոմիկ Քոչարյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Մատենադարան, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

**ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆՈՐԵՆ
ՆՇԱՆԱԿԱԼԻ ԿԱՐԻՔԸ**

Պետության բուն կոչումն է և ըստ այդմ՝ անհրաժեշտ ու նախընտրելի իսկությունը՝ ստեղծել ու գործառնել ի պատասխան ու հոգածություն սոցիալականորեն ու քաղաքակրթորեն նշանակալի կարիքի: Պետությունը ներկայանում ու հասկացվում է որպես ազգերի, ժողովուրդների համատեղ կամքի դրսևորում՝ ի լուծում համակենսական կարիքային հիմնախնդիրների, որոնցում անհրաժեշտ է ողջ հասարակության քաղաքակրթականորեն նշանակալի համագործունեության ու ձեռքբերումների հա-

մատեղում: Եվ պետությունների որպես այդպիսին գոյության իսկությունն իրենց բուն կոչումի կատարելությանը սկզբնավորող ու ներկատարելագործվող վերընթացությունն է՝ իրենց իդեայի դիտավորությամբ, կերպարանմամբ ու կատարումով հասկացվել, ստեղծվել ու կայանալ որպես ներկարգավոր կառույց՝ ի հոգացություն մարդկային համակեցության ընդհանուր կենսակարգի բարեկարգության, որ և ներկայանում է որպես սոցիալականորեն ու քաղաքակրթորեն նշանակալի կարիք: Իսկ կարիքը անձի, խմբի, հանրության, ազգի, ողջ հասարակության առկա կեցությունում բարեկարգի համեմատ և դրան հասնելու համար անհրաժեշտ ու նախընտրելի ներքինի և արտաքինի՝ հոգևոր առաքինությունների, գիտելիքների, կարողունակությունների և կարելություն ընձեռող պայմանների պակասն է, որոնց իսկ ձեռքբերումը կարող է էականորեն նպաստել, հասանելի դարձնել և հենց էացնել կեցության բարեկարգությունը: Եվ արդ՝ կարելի է ամրագրել, որ մարդկության կյանքում ամենայն բարենշանակ հաստատություններ՝ պետական (քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական, ներքին ու արտաքին անվտանգության՝ ռազմական, ոստիկանական, առողջապահական...), հասարակական կառույցներ ու նաև հենց սոցիալական գիտություններ կյանքի են կոչվում մարդկային կյանքի բարեկարգության կարիքով և դիտավորությամբ: Մարդկանց համատեղ կյանքում այդ իսկ համատեղության՝ որոշակի կարգով գոյակցության, և հենց այդ դիտավորության՝ մարդկանց, պատմությունից հայտնի այս կամ այն ըմբռնմամբ ազգերի, ժողովուրդների ինքնության գոյության արտաքին և ներքին պայմանների ապահովման անհրաժեշտ պիտոյականությամբ ստեղծվում է «պետություն» կառուցվածքը՝ պատմականորեն տարբեր իր դրսևորումներով: Սոցիալականորեն և ընդհանրապես քաղաքակրթորեն նշանակալի կարիքի, այն է՝ հոգևոր-քաղաքակրթական մարդկային ինքնության, ընդհանուր կենսակարգի ու անձնավորյալ կենսակերպի ներքին ու արտաքին անվտանգության, առողջապահության, կրթության,

մշակույթի ու գիտության, տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքի ներկատարելագործվող ընթացքով բարեկարգման դիտավորությունը սկզբունքորեն և սակայն իր տարբեր դրսևորումներով և ոչ միշտ լիովին ու բացորոշությամբ օրենսդրորեն ձևակերպվում է որպես պարտք, որի իրականացմանն է կոչված ստեղծվող կամ բարենորոգվող պետություն-կառույցը, և այդ պարտքից բխեցվում ու օրենսդրությամբ ամրագրվում են պետական կառույցների հոգաճուական պարտականությունները մարդկային կյանքի տարբեր ոլորտներում: Հիրավի, պետության կառույցը ստեղծված է՝ կոչված լինելով մարդկանց, խմբերի և հենց մարդկային ինքնության բարեկարգ համակեցության համար նպաստավոր՝ անհրաժեշտ ու նախընտրելի պայմանների ապահովմանը, ինչը և պետք է դիտել որպես պետության հիմնադիր պարտք ու պարտավորություն՝ սահմանադրության մեջ ամրագրմամբ: Եվ սակայն ամենուր ու նաև Հայաստանում պետական գործունեությունը նախկինում իրականացել և իր հիմնական գծերով այժմ նույնպես իրականանում է ոչ ամենևին պետություն-կառույցի համար որպես հիմնադիր նկատելի այդ սկզբունքի համաձայն: Ստեղծվելով և կայանալով որպես հասարակական հարաբերությունների կայունությունը և անվտանգությունն ապահովող հատուկ կառույց՝ պետությունը հաճախ հայտնվում է իր անխկական գոյության մեջ՝ սկսելով գործառնել իր իսկ «սեփական» շահերի բավարարման ուղղվածությամբ, դրանով կտրվելով թե՛ սեփական ժողովրդից, թե՛ իր բուն կոչումից: Փոփոխությունների իրականացման այս բոլոր տարիներին առավել հետևողական է նկատվում պետական կառուցվածքների կողմից նախկինից փոխանցված պարտականություններից առավելապես հրաժարման և ավելին՝ ոչ մի նոր, հավելյալ պարտականություն ստանձնելու գործելակերպը: Այնինչ պետության համար հիմնարար և առաջնային այդ պարտքի գրանցումից հետո միայն, որպես ածանցյալ, մարդիկ այդպիսի պետությունը, լավագույն դեպքում՝ պետության կողմից իրենց ընձեռնվող ազա-

տականության հնարատրության պարագայում, ճանաչում են որպես «սեփական պետություն» և արդեն այդ դեպքում կամովին հանձն առնում ու համաձայնում դիտվել որպես «քաղաքացի» այդպիսի՝ (իր պարտքը գիտակցող) պետության, ուստի և օրենսդրորեն սահմանվածությամբ ունենալ որոշակի իրավունքներ ու ստանձնել պարտականություններ նրա նկատմամբ: Այս բոլորը «ազգ, ժողովուրդ-պետություն» և «պետություն-քաղաքացի» հարաբերությունների կարգավորման խնդրի վերաբերյալ դիտելի են որպես նախընտրելի պիտոյականություն՝ պետության գոյության ինչպեսը բարեկարգելու առումով: Իսկ ինչ վերաբերում է ինչ պետություն ունենալու արդեն բովանդակային հարցին, ապա պետք է նկատել, որ պետության «ինչպեսը» պետք է «լցնել» մարդասիրությամբ, որից և բխող ու մշտապես ներկատարելագործվող արդարությամբ, ունենալու համար նախընտրելի «ինչ» պետությունը՝ ի տարբերություն նախկին ու նաև ներկայում գոյություն ունեցող պետական կարգերի ու ողջ կառույցի: Հարցը, այսպիսով, այն է, թե ինչպես է մտածելի վերոնշյալ՝ մարդասիրությամբ «լցնելի» նախընտրելի «ինչ»-ությունը պետության: Այդ ուր պետությունն է ճանաչելի որպես պիտոյաբար իր պարտքին «գիտակից» և հարազատորեն հոգաձու անհրաժեշտ ու նախընտրելի մարդկային ինքնության ու բազմաբովանդակ կենցաղավարության հնարավորման, բարենպաստման ու ապահովման համար: Ինչպես նկատում ենք, խնդիրը նորից հանգում է մարդկային ինքնության ճանաչմանը, նրա բնության և ըստ այդմ՝ անհրաժեշտ ու նախընտրելի գոյության ճշմարտության բացահայտմանը, որը և լույս կարող էր սփռել ու նկատելի դարձնել ինքնությունների գոյակցության կամ մարդկանց միմյանց հետ համակեցության գերակա բաղադրիչն ու իմաստը:

Анаит Джиджян
Кандидат философских наук, доцент,
АГПИ им. Х. Абовяна

Ромик Кочарян
Кандидат философских наук, доцент,
Матенадаран, Институт
древних рукописей им. Месропа Маштоца

ГОСУДАРСТВО И СОЦИАЛЬНО-ЗНАЧИМАЯ НУЖДА

Авторами представлена взаимосвязь и взаимоотношение истинного бытия государства как структуры, адекватно обеспечивающей социально- и цивилизационно-значимые нужды общества.

Anahit Jijyan
Candidate of Philosophy, Associate Professor,
Kh. Abovyan Armenian State Pedagogical University

Romik Kocharyan
Candidate of Philosophy, Associate Professor,
Matenadaran Research Institute of Ancient Manuscripts (named after
Mesrop Mashtots)

THE STATE AND THE SOCIAL SIGNIFICANT NEED

The authors present the interconnection and interrelation of the true being of the state as of a structure, that ensures adequate socially and civilizationally significant needs of society.

Արտաշես Բոյաջյան
Պատմական գիտությունների թեկնածու,
ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ
XXI դ. ՄԿՋԲԻՆ**

Շիրակի ժամանակակից տնտեսության հիմքերը դրվել են 1990-ական թվականներին: Վերջին տասնամյակների ընթացքում մարզի սոցիալ-տնտեսական փոփոխություններն առաջացրել են այնպիսի հիմնախնդիրներ, որոնք նպաստում են բնակչության արտագաղթին և խոչընդոտում տնտեսության կայուն զարգացումը: Շիրակի մարզը, մասնավորապես Գյումրին, մինչև 1988թ. Սպիտակի աղետալի երկրաշարժը խոշոր արդյունաբերական տարածաշրջան էր: Շիրակի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված ապրանքային արտադրության ծավալը 1985թ. կազմել է հանրապետությունում թողարկված ընդհանուր ծավալի 13,4%-ը, իսկ 1997թ.՝ միայն 3,2%-ը, 2003թ.՝ 2,7%-ը և 2014թ.՝ 3,8%-ը: Եթե 1980-ական թվականներին Շիրակն արդյունաբերական արտադրության ծավալով հանրապետությունում զիջում էր միայն Երևանին, ապա այժմ ոչ միայն Երևանին, այլև Արարատի, Սյունիքի, Արմավիրի և Կոտայքի մարզերի արդյունաբերական արտադրության ծավալներին:

Մինչև 1988թ. երկրաշարժը մարզում զբաղվածություն ունեցող մարդկանց թիվը 139,3 հազար էր, իսկ Գյումրիում՝ 75,2 հազար, 2001թ. համապատասխանաբար՝ 79,4 և 29,8 հազար և 2014թ.՝ 103,5 ու 34,1 հազար մարդ: Բնակչության զբաղվածության շեշտակի անկում գրանցվել է հիմնականում արդյունաբերական ոլորտում: Վերջին 28 տարիներին մարզի զբաղվածություն ունեցող բնակչության թիվը պակասել է 35,8 հազարով, Գյումրիում՝

40,3 հազարով: Հաշվի առնելով XXդ. վերջին և XXIդ. սկզբին Շիրակի մարզում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները՝ կարելի է ժամանակահատվածները պայմանականորեն բաժանել հետևյալ հաջորդական փուլերի.

1985-1989թթ. - նախաաղետյան փուլ,

1989-1992թթ. - հետաղետյան փուլ,

1993-2000թթ. - համատարած սեփականաշնորհման և բնակչության առաջին զանգվածային արտագաղթի փուլ,

2001-2008թթ. - սոցիալ-տնտեսական վերելքի և կայունացման փուլ,

2009թ. մինչ օրս - սոցիալ-տնտեսական ճգնաժամի և բնակչության երկրորդ զանգվածային արտագաղթի փուլ:

Երկրաշարժը ծանր հարված հասցրեց տնտեսությանը: Նյութական վնասները գնահատվել են 13-14 մլրդ ռուբլի, որի հիմնական մասը բաժին է ընկել Գյումրուն: Տարածքային առումով մարզի բնակչության զբաղվածությունը նախաաղետյան տարիներին կենտրոնացված էր քաղաքային բնակավայրերում, մասնավորապես արդյունաբերական ձեռնարկություններում, իսկ 1990-ական թվականներից՝ գյուղատնտեսության մեջ և սպասարկման ոլորտում (կրթություն, առևտուր, առողջապահություն և այլն): Մինչև երկրաշարժը մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը 50231 մարդ էր, որից 37877-ը կամ 75,5%-ը բաժին է ընկել Գյումրի քաղաքին: 1993-2000 թթ. արդյունաբերական ձեռնարկություններում գրանցվել է գործազրկության շեշտակի աճ: Այսպես, եթե 1991թ. հուլիսի տվյալներով քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թիվը կազմել է 22 հազար մարդ, 2000թ.՝ 5,2 հազար, ապա 2015թ., ըստ Շիրակի մարզպետարանի տվյալների, շուրջ 3 հազար: Աշխատատեղերի թվի անկում է գրանցվել տեքստիլ արդյունաբերական և մեքենաշինական ձեռնարկություններում: 2001-2008թթ. սոցիալ-տնտեսական կայունացման և աճի

տարիներին արդյունաբերական ձեռնարկություններում գրանցվել է աշխատողների թվի աճ: 2008թ. տնտեսական ճգնաժամը մեծ հարված հասցրեց մարզի սոցիալ-տնտեսական աճին:

Վերջին 27 տարիների ընթացքում Շիրակն արդյունաբերականից վերածվեց էքստենսիվ գյուղատնտեսական շրջանի: Եթե 1987թ. տնտեսության համախառն արդյունքի 70%-ից ավելին բաժին է ընկել արդյունաբերությանը, 20%-ը՝ գյուղատնտեսությանը, ապա 2014թ. նույն ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 25% և 57%: Անկասկած, մարզի սոցիալ-տնտեսական հետագա առաջընթացը և հիմնախնդիրների լուծումը նախ և առաջ պայմանավորված են արտադրատնտեսական ոլորտի և մասնավորապես արդյունաբերության զարգացումով:

Арташес Бояджян

Кандидат исторических наук,
Ширакский центр арменоведческих
исследований НАН РА

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ ШИРАКСКОГО МАРЗА В КОНЦЕ XX В. И В НАЧАЛЕ XXI В.

На протяжении последних десятилетий социально-экономические изменения в Ширакском марзе породили такие проблемы, которые способствуют миграции населения и препятствуют стабильному развитию экономики.

В 1980-х гг. по объему промышленного производства Ширак в республике уступал только Еревану, а сейчас уступает не только Еревану, но и таким марзам как Арарат, Сюник, Армавир и Котайк. Если в конце XX в. Ширак являлся регионом с развитой промышленностью, то сейчас он превратился в регион с экстенсивным сельским хозяйством.

Artashes Boyajyan
Candidate of Historical Sciences,
Shirak Center of Armenian Studies NAS RA

SOCIAL AND ECONOMIC CHANGES IN SHIRAK REGION AT THE END OF THE XX AND THE BEGINNING OF THE XXI CENTURIES

During the recent decade social and economic changes in Shirak region have proposed such issues that contribute to the emigration and make obstacles for the stable development of the economy.

In the 1980-s Shirak in production volume yielded only to Yerevan in the republic, but now it yields also to the regions of Ararat, Syunik, Armavir and Kotayq. If at the end of the XX century Shirak was a developed industrial area, now it has turned to an extensive agricultural one.

Ներսես Քոչարյան

Խ. Արմավյանի անվան ՀՊՄՀ-ի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրոնը հնագույն ժամանակներից ի վեր կարևոր գործոն է անձի սոցիալականացման գործընթացում: Լուսավորչականությունից սկսած և XXդ. ընթացքում մարդկության զարգացումը հիմնականում ընթանում է ռացիոնալ մտածողության բարձրագույն դրսևորման՝ գիտության ազդեցության ներքո, այնուամենայնիվ, Մերձավոր Արևելքի վերջին իրադարձությունները, արմատական իսլամի կողմնակիցների աճը հետխորհրդային ու արևմտեվրոպական կենսատարածքում ստիպում են մեկ անգամ ևս անդրադարձ կատարել կրոնական իրավիճակի հիմնախնդիրներին և ազդեցությանը ժամանակակից հասարակության

քաղաքակրթական ինքնության ու կենսակարգի ներկա կատարելագործվող ընթացքի կայունությանն ու բարեկարգությանը:

Կրոնական իրավիճակը բնութագրվում է կրոնական դրսևորումների ինտենսիվությամբ, զարգացման ուղղվածությամբ, հասարակության վրա ազդեցության բնույթով ու աստիճանով: Աստ՝ կրոնական իրավիճակի վերլուծությունն իրականացվել է համացանցային առավել բարձր հաճախումներ ունեցող կայքերի սոցիոլոգիական հետազոտության հիման վրա:

Վերլուծելով կրոնական իրավիճակը Հայաստանում մենք առանձնացնում ենք նրա ձևավորմանը նպաստող ներքին գործոններ՝ հասարակական կյանքում եկեղեցու գործունեության շրջանակների ընդլայնումը՝ ազգային եկեղեցու սպասավորների թվի աճը, հատկապես ամուսնացած քահանաների, որոնք անմիջականորեն առնչվում են մարդկային տարաբնույթ խնդիրներին, կրթական ոլորտում երեխաների ու երիտասարդների քրիստոնեական դաստիարակության և արդյունավետ սոցիալականացման գործընթացում՝ հայ եկեղեցու պատմության առարկայի ընդգրկումը, կիրակնօրյա դպրոցների բացումը, Հայորդաց տների բազմակողմանի գործունեությունը, լրատվական միջոցների և ծրագրերի շրջանակներում մշակութային, կրթական, հասարակական, քաղաքական և այլ տարաբնույթ հարցերի քննարկմանը ներգրավումը, արտաքին գործոններ՝ տնտեսական շրջափակումը, բնակչության ընդհանուր կենսամակարդակի անկումը, արտագաղթի բարձր տեմպերը (որոնք աստիճանաբար վերածվում են «depopulation»-ի), «վերակառուցման» շրջանից ի վեր և ապա հայկական պետականության կայացմանը զուգորդող «խոսքի» ազատությունը:

«Անկախությունը ըմբռնվում է երկակի՝ որպես կախվածությունից հրաժարում կամ ստիպողական ու անհրաժեշտ տարաբնույթ կախվածությունների համատեքստում՝ այդ կախվածությունների համակցության կարգի ընտրության մեջ ինքնուրույնություն»:

Անկախության այդ կերպ ընկալումը, սակայն, չի զուգորդվում սեփական, իսկական ազգային ինքնության գաղափարախոսության ձևավորմամբ և, որպես հետևանք, վերածվում է «քննական» վերլուծության ազգային արժեքների և նշանակալի սոցիալական ինստիտուտների (ընտանիքի, եկեղեցու, կրթության) գործառնության նկատմամբ: Այդ ամենը հանգեցնում է մի կողմից՝ ավանդական քրիստոնեական արժեքների քայքայման և բարոյականության անկման, մյուս կողմից՝ բազմաթիվ կրոնական կազմակերպությունների առաջացման, գրանցման ու տարածման:

Վերջինիս վառ ապացույցն են «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» 1991թ. հունիսին ՀՀ-ի օրենքի ընդունումից հետո երկրում այլադավան կրոնական կազմակերպությունների ու կրոնական համայնքների կտրուկ աճը: Հայաստանի Հանրապետությունում գրանցված են 67 կրոնական կազմակերպություններ, այդ թվում՝ ավանդական կրոնների ներկայացուցիչներ՝ Հայ առաքելական, Հայ կաթոլիկ, Ռուս ուղղափառ եկեղեցիները՝ իրենց ընդհանուր առմամբ 8 կազմակերպություններով, բողոքական կրոնական ուղղություններ (ավետարանչական, ավետարանական-մկրտական, ադվենտիստական, հոգեգալստական) – 29, ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններ (եզդիներ, հրեաներ, ասորիներ) – 4 և այլ կրոնական շարժումներ (խարիզմատիկներ, Եհովայի վկաներ, Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցի) – 15: 2011թ. մարդահամարի տվյալներով (բնակչության 98%-ը) Հայ առաքելական եկեղեցու հավատացյալների թվի աճի հետ մեկտեղ, ըստ այլ աղբյուրների, ադանդավորների թիվը Հայաստանում կազմում է 300-350 հազար մարդ՝ բնակչության 10%-ը, ինչը ցուցանում է ազգային ինքնության պահպանման անվտանգության հիմնախնդիր:

Խոսքի ազատությունը, տարբեր կրոնական ուղղությունների առկայությունը, ՋԼՄ-ների կողմից տարվող «ազատ» եվրոպական արժեքների գովազդումը և մոլուցքային ձգտումը բարե-

կեցության միայն նյութական արտահայտվածությամբ՝ որպես «ունենալ», «տիրել», «իշխել», հանգեցնում է մարդու իսկական ինքնության՝ Աստծո պատկերով և նմանությամբ արարվածի, որպես այդպիսին կայացման խարխւմանը: Ավանդական կրոնը անձի սոցիալականացման գործառույթն իրականացնելիս կոչված է ձևավորելու ազգային պատկանելության, օտարի, տկարի, մեծերի նկատմամբ հարգանքի, սիրո և հոգածության նշանակալի արժեքներ, ինչպես նաև հասարակության մեջ ընդունված ու խրախուսվող վարքային նորմեր: Հայ առաքելական եկեղեցու և հեթանոսների կամ ժամանակակից «նոր» կրոնական ուղղությունների միջև համեմատական վերլուծությունները՝ ուղղված հասարակական գիտակցության ձևավորմանը, բնավ կոչված չեն բարելավելու արդյունավետ սոցիալականացման գործընթացը, այլ անխուսափելիորեն հանգեցնում են քրիստոնեական իմաստների ու արժեքների նկատմամբ երիտասարդության վերաբերմունքի կազմաքանդման, բարոյականության անկման, ազգային ինքնության պահպանման և հասարակության կայունության խարխւման:

Нерсес Кочарян

Аспирант Армянского Государственного
Педагогического Университета им. Х. Абовяна

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОЙ СИТУАЦИИ В АРМЕНИИ

В статье представлены некоторые проявления религиозной ситуации в РА, воздействующие на ее внешние и внутренние факторы, а также некоторые частные последствия закона о свободе совести и религиозных организаций.

Nerses Kocharyan
Phd student of Armenian State Pedagogical
University after Kh. Abovyan

SOME SPECIFIC FEATURES OF RELIGIOUS SITUATION IN ARMENIA

This paper presents some features of religious situation in RA which affect its outer and inner factors and examines also some particular consequences of the Law on Freedom of Conscience and Religious Organizations.

**II. ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐՎԱ
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՊԵՏԱԴՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Արմինե Զախարյան

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

**ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Անկախության 25 տարիների ընթացքում ՀՀ-ում իրականացվեցին բազմաթիվ բարեփոխումներ, որոնց հիմնական նպատակը ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումն ու հասարակության զարգացումն էր:

Անշուշտ, կենսամակարդակի բարելավման գործում մեծապես կարևորվում է պետության դերը, հատկապես զբաղվածության ապահովման առումով: Զբաղվածության պետական կարգավորման ակտիվ քաղաքականության ներկայիս կարևորագույն ուղղություններից է աշխատատեղերի պահպանման և նորերի ստեղծման միջոցառումների համալիր ծրագրերի մշակումը՝ հիմնված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության և նպատակային կանխատեսումների վրա:

Այդպիսի ծրագրերի մշակումը նախատեսում է.

– Աշխատատեղերի կազմակերպման գլխավոր նախագծի ստեղծում՝ ելնելով երկրի սոցիալ-տնտեսական ներուժից, զբաղվածության ամենաբարենպաստ կառուցվածքից և տնտեսական զարգացման հիմնական ուղղվածությունից, որը կանխատեսում է աշխատատեղերի արդյունավետ ձևավորում և պահպանում:

-Հեռանկարային աշխատատեղերի պահպանում և նոր աշխատատեղերի ստեղծման համար նորմատիվային իրավական բազայի նախապատրաստում:

-Ֆինանսավորման մեխանիզմի և տեղեկատվության ապահովման կարգավորում:

-Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի պարտադիր գիտափորձնական ուսումնասիրությունների անցկացման կարգի մշակում, որը թույլ կտա գնահատել դրանց ազդեցության աստիճանը զբաղվածության ոլորտի վրա:

-Սոցիալական համագործակցության ընդլայնում՝ աշխատատեղերի ստեղծմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների հարցերը բոլոր տեսակի կոլեկտիվ պայմանագրերում ներառելու նպատակով:

Ուսումնասիրելով զբաղվածության ոլորտում պետության կողմից իրականացվող ակտիվ քաղաքականության նպատակները և խնդիրները՝ կարող ենք ներկայացնել այն բոլոր ուղղությունները և միջոցառումների համակարգը, որը պետությունը պետք է իրականացնի՝ երկրի մասշտաբով աշխատուժի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար:

-Աշխատանքի շուկայի վերլուծություն՝ ազատ աշխատատեղերի հաշվառում, աշխատանքի տեղավորման հարցերով դիմած քաղաքացիների հաշվառում, գործազուրկների գրանցում և հաշվառում, վճարվող աշխատանքներում քաղաքացիների պահանջարկի վերլուծություն, զբաղվածության հիմնահարցերի և դժվարությունների կանխատեսում ու իրավիճակների զարգացում, կանանց, երիտասարդների և այլ սոցիալական խմբերի զբաղվածության աստիճանի վերլուծություն:

-Զբաղվածության ծրագրերի մշակում՝ տեղային ծրագրերի մշակում, տարածքային ծրագրերի մշակում, ազգային ծրագրերի մշակում:

-Բնակչության մասնագիտական կողմնորոշում՝ անհատական խորհրդատվություն, խորհրդատուների պատրաստում և

որակավորման բարձրացում, ծրագրերի, մեթոդների և թեստերի ներդաշնակեցում:

- Տեղեկատվական ապահովում՝ տեղեկատվություն բնակչությանը, ծրագրային ապահովում, շփումներ ձեռնարկությունների հետ:

- Զբաղված բնակչության մասնագիտական պատրաստում՝ չգրադվածների վերապատրաստում, աշխատանքային ռեսուրսների պատրաստման մասնագիտական կառուցվածքի որոշում, ուսումնական հաստատությունների հետ պայմանագրերի կնքում, ուսումնական տեղերի ամրագրում, մասնագիտական դպրոցների, ուսումնարանների, մեծահասակների վերապատրաստման կենտրոնների ստեղծում:

Բնակչության աշխատանքի տեղավորում՝ աշխատանքի փնտրում և առաջարկում, աշխարհագրական միգրացիա:

Բնակչության սոցիալական պաշտպանություն՝ սոցիալական պաշտպանության կարիք ունեցողների համար նվազագույն քանակի աշխատատեղերի ստեղծում, սոցիալական պաշտպանության կարիք ունեցողներին աշխատանքի ընդունելու համար ձեռնարկություններին հարկային լրացուցիչ արտոնությունների տրամադրում, սոցիալական պաշտպանության կարիք ունեցողների համար ձեռնարկությունների կողմից իրականացվող միջոցառումների կատարման հսկում, աշխատանքը կորցնելու վտանգի առջև կանգնած անձանց օգնություն, գործազուրկներին օգնության տրամադրում, երիտասարդների, հաշմանդամների, երեխաներ ունեցող կանանց և տարեցների սոցիալական պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացում:

Ֆինանսական ապահովում՝ զբաղված բնակչության ուսուցման և վերապատրաստման ֆինանսավորում, գործազրկության նպաստների վճարում, գաղթականների նպաստների վճարում, հասարակական աշխատանքների կազմակերպում, զբաղվածության ծառայությունների կենտրոնների պահպանում:

Զբաղվածության միջազգային կարգավորում՝ արտասահմանյան աշխատուժի ընդգրկում համատեղ ձեռնարկություններ, միջնորդավորում արտասահմանում աշխատանքային պայմանագրերի կնքման ժամանակ, աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորման ծրագրերի մշակում:

Վերը նշված բոլոր ուղղություններն ու միջոցառումները պետք է նախատեսվեն պետության կողմից զբաղվածության ոլորտի տնտեսական քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս: Այն երկրները, որոնք վարում են զբաղվածության կարգավորման ակտիվ քաղաքականություն, զգալի ֆինանսական միջոցներ են տրամադրում նախատեսված միջոցառումների իրականացման համար: Ֆինանսական միջոցները հիմնականում հատկացվում են պետական բյուջեից և ՀՆԱ-ի ծավալում կազմում են մոտ 1-2%, իսկ առանձին դեպքերում՝ ավելին:

Այժմ փորձենք ներկայացնել ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները:

2015թ. 2010թ. համեմատությամբ ՀՀ-ում կենսամակարդակի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները ենթարկվել են որոշակի փոփոխությունների, մասնավորապես միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 184441 դրամ, նվազագույն աշխատավարձը՝ 55 000 դրամ, միջին ամսական կենսաթոշակը՝ 41008 դրամ, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 2436 դոլար և նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը մեկ շնչի հաշվով՝ 56214.9 դրամ: Ինչպես տեսնում ենք, հիմնականում տեղի են ունեցել դրական տեղաշարժեր, սակայն դեռ բավականին անելիքներ կան՝ ցանկալի վիճակի հասնելու համար:

Անշուշտ, հասարակության բարեկեցությունը ենթադրում է անձի և քաղաքացու պահանջմունքների ու շահերի առավելագույն բավարարման հնարավորությունների առկայություն: Այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ են հասարակական համապատասխան ինստիտուտներ ու մեխանիզմներ: Քաղաքակրթության զարգացման ներկա փուլում բարեկեցիկ կյանքի

ապահովման, մարդու շահերի արտահայտման ու իրականացման առավել կատարյալ մոդելը պետք է փնտրել քաղաքացիական հասարակության գաղափարի շրջանակներում: Վերջինս նոր չէ սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական մտքի պատմության համար: Այն երկար ճանապարհ է անցել Արիստոտելից մինչև Թ.Հոբս և Ալ. Թոկվիլ: Համաձայն Թ. Հոբսի՝ քաղաքացիական կեցությունն ու հասարակությունը կենսակերպի, իրավունքների տնօրինման առավել քաղաքակիրթ և երաշխավորված հնարավորություններ ընձեռող ձև է:

Քաղաքացիական հասարակության մեջ մտնող միավորումները հետապնդում են մարդկանց տնտեսական, ընտանեկան, իրավական, մշակութային և զանազան այլ շահեր և ստեղծվում են այդ շահերի բավարարման նպատակով: Կազմակերպությունները ձևավորվում են ոչ թե պետության, այլ քաղաքացիների նախաձեռնությամբ և նրանց կամավոր մասնակցությամբ, գոյություն ունեն և գործում են ինքնուրույն՝ գործող օրենքների շրջանակներում: Դրանք, կազմավորվելով մարդկանց տարբեր խմբերի շահերի ընդհանրության հենքի վրա, կարող են գործել ինչպես կարճ ժամանակահատվածում, այնպես էլ, առաջադրելով հեռահար նպատակներ, ունենալ տևական բնույթ՝ ժամանակի ընթացքում մեծացնելով իրենց ազդեցությունն ու հեղինակությունը հասարակության մեջ:

Այսպիսով, ազգաբնակչության կենսամակարդակի բարելավումը ՀՀ-ի կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է, որը հնարավոր է հաղթահարել գործարար միջավայրի բարելավման, ինովացիոն և ներդրումային գործունեության խթանման, նոր աշխատատեղերի ստեղծման, աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման, սոցիալական ներդրումների խթանման և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման միջոցով:

Армине Захарян
Кандидат экономических наук,
Институт экономики им. М. Котаняна НАН РА

ПРОБЛЕМЫ УЛУЧШЕНИЯ УРОВНЯ ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тезис посвящен проблеме улучшения уровня жизни населения посредством стимулирования занятости. Учитывая наличие проблемы обеспечения занятости населения, в тезисе представлены основные направления и мероприятия государственной политики занятости, которые могут способствовать улучшению социального положения населения. Особое внимание уделено необходимости обеспечения эффективного функционирования соответствующих общественных институтов и механизмов. Поскольку формирование гражданского общества имеет важное стратегическое значение для улучшения уровня жизни населения, то оно должно постоянно находиться в центре внимания членов общества и государства.

Armine Zakharyan
Candidate of Economic Sciences,
M.Kotanyan Institute of Economics NAS RA

THE ISSUES ON IMPROVING OF LIVING STANDARDS OF POPULATION IN RA

The thesis presents the issues on increasing the welfare of the population by creating more employment opportunities in the Republic of Armenia. By taking into account the issues of ensuring employment opportunities for the population in the Republic of Armenia the thesis presents the main directions and measures of the state employment policy that could lead to increase in welfare of the population. A special attention is paid to the need of ensuring effective performance of

respective public institutions and implementation of mechanisms. Since building a strong civil society is of strategic importance to increasing the wellbeing of the population it needs to be closely watched and monitored by the members of the society and the government.

Կարեն Սարգսյան

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

**ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

1990-ական թվականներից ՀՀ-ն որդեգրել է տնտեսակարգի փոփոխության քաղաքականություն՝ նպատակաուղղված տնտեսական հարաբերությունների ազատականացմանը, որն ընդունակ կլինի ապահովել կայուն զարգացում, բարեկեցություն և ազգաբնակչության բարձր կենսամակարդակ:

Պետք է փաստենք, որ Հայաստանի անցումը կենտրոնացված պլանային տնտեսությունից դեպի շուկայական տնտեսության հարթ չի ընթացել, և մեր հանրապետությունն այդ ընթացքում ապրել է տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն թողած մի շարք վայրիվերումներ: Այդուհանդերձ, սկսած 1990-ական թվականների կեսերից Հայաստանը եղել է արագ զարգացող անցումային երկրներից մեկը: Շուկայական ուղղվածություն ունեցող բարեփոխումների հետևողական իրականացման արդյունքում 1994–2001թթ. ընթացքում գրանցվել է համեստ, բայց կայուն տնտեսական աճ (միջինում՝ տարեկան 5%), իսկ արդեն 2002 թվականից ՀՀ տնտեսությունը թևակոխել էր տնտեսական աննախադեպ վերելքի փուլ՝ գրանցելով երկնիշ տնտեսական աճ (միջինում շուրջ 13%): Սակայն, 2008 թվականի հա-

մաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում տնտեսական աճը մեր հանրապետությունում կտրուկ նվազեց՝ 2008թ. հասնելով 6.9%-ի, իսկ 2009թ.-ին գրանցվեց կտրուկ անկում (14.4%): Հետագա, ավելի խորը տնտեսական անկումից խուսափելու համար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ ընդլայնողական մակրոտնտեսական քաղաքականության իրականացմանը՝ ինչպես դրամավարկային, այնպես էլ հարկաբյուջետային ուղղություններով: ՀՀ կառավարության հակաճգնաժամային քաղաքականությունն ընթացավ հետևյալ ուղղություններով.

- ենթակառուցվածքային նախագծերի իրականացում, ինչն անմիջապես նպաստելու էր ներքին պահանջարկին՝ հետևաբար և տնտեսական աճին ու նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- հասցեական օժանդակություն՝ ժամանակավոր ֆինանսական դժվարություններ ունեցող ձեռնարկություններին,
- գործարար միջավայրի բարելավման և գործունեության համար անհրաժեշտ առկա խոչընդոտների վերացման միջոցով՝ օժանդակություն փոքր ու միջին բիզնեսին,
- սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջեի ծախսերի հետևողական իրականացում՝ թուլացնելու սոցիալական ճնշումները և հասարակության հոռետեսական սպասումները:

ՀՀ-ում պետական հակաճգնաժամային կարգավորման դրական և ուժեղ կողմը կարելի է համարել ազգաբնակչության սոցիալական աջակցությունը, ձեռնարկությունների համար ճգնաժամի ազդեցություններից կորուստների նվազեցումը, ազգաբնակչության համար վարկային ռեսուրսների մատչելիության ապահովումը, ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորումը, ինչպես նաև տնտեսության ֆինանսական և իրական հատվածներում անկանախատեսելի զարգացումների կանխումը: Ինչ վերաբերում է բացասական կողմերին, ապա առանձնա-

հատուկ կերպով կարելի է նշել վերջիններին ոչ ռազմավարական լինելը, սելեկտիվ միջոցառումների գերակշռումը, իրականացված միջոցառումների հրապարակայնության և թափանցիկության պակասը, կոռուպցիոն ռիսկերի առկայությունը և այլն:

Դիտարկելով ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան հետձգնաժամային հատվածում տեսնում ենք, որ ՀՀ-ում մակրոտնտեսական ցուցանիշները նույնիսկ 2014 թվականի դրությամբ դեռևս չեն հասել մինչճգնաժամային մակարդակին: Ընդ որում, ճգնաժամից հետո իրական ՀՆԱ-ի աճի գծով դրական ցուցանիշ արձանագրվեց միայն 2010թ.-ին՝ 2.2%: 2011 թվականին իրական ՀՆԱ-ի աճը կազմեց 7,13%, ինչը բարձր էր 2008 թվականին արձանագրված մակարդակից, սակայն զգալիորեն զիջում էր 2007 թվականի մինչճգնաժամային 13.74% ցուցանիշը: Հարկ է նշել, որ իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը կրկին նվազել են 2013 և 2014 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար՝ 3.53% և 3.43%:

Հանրապետությունում ցավոտ հիմնախնդիր է մնում գործազրկությունը, որի մակարդակը ճգնաժամից հետո չի նվազել: Հետճգնաժամային ժամանակահատվածում գործազրկության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2010թ.-ին՝ 19%: 2011-2014թթ. ժամանակահատվածում՝ ըստ տարիների այն փոքր-ինչ նվազել է, կազմելով համապատասխանաբար 18,39%, 17,30%, 16,20%, 17.1%:

Մեր հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունները վերջնականապես հաղթահարելու, ազգաբնակչության զբաղվածության մակարդակը բարձրացնելու և կայուն տնտեսական աճ ապահովելու հիմնական ելքերից մեկը, կարծում ենք, անհրաժեշտ ծավալով օտարերկրյա ներդրումների ներգրավումն է: Այս առումով ևս լուրջ խնդիրներ կան ծառացած ՀՀ կառա-

վարության առջև, ինչի մասին է վկայում հետզգնաժամային տարիներին օտարերկրյա ներդրումների ծավալների դինամիկան:

Համեմատության համար նշենք, որ 2008 թվականին օտարերկրյա համախառն ներդրումները մեր հանրապետությունում կազմել են 1257643.1 հազ.ԱՄՆ դոլար, որոնցից ուղղակի ներդրումները՝ 1000911.2 հազ. ԱՄՆ դոլար: Ինչպես երևում է ներկայացված տվյալներից՝ ներդրումների ծավալը 2008 թվականից հետո նվազման միտումներ է ունեցել, չնայած մի շարք տարիներին արձանագրել է որոշակի աճ՝ սակայն, դեռևս չհասնելով նույնիսկ 2009 թվականի մակարդակին:

Ակներև է, որ նման պարագայում ներդրումների ներգրավման աջակցությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության առանցքային ուղղություններից մեկը, որը նպատակաուղղված է ներդրումներին խոչընդոտող գործոնների թուլացմանը կամ վերացմանը, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, ինչպես նաև վերոհիշյալ նպատակների իրականացմանը նպաստող շուկայական ենթակառուցվածքների զարգացմանը:

Ներդրումների խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության մոտեցումները, կարծում ենք, պետք է լինեն հետևյալը.

- ներդրողների համար ստեղծել բարենպաստ միջավայր տնտեսության բոլոր ոլորտներում՝ ապահովելով կայուն և կանխատեսելի պայմաններ գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության համար,
- նվազեցնել ներքին ներդրումների ոհակը՝ վերացնելով հարկային և մյուս կարգավորող և վարչական սահմանափակումները,
- տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ դիվերսիֆիկացնել տնտեսության կառուցվածքը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ ներդրումային քաղաքականության իրականացումը կլուծի մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսության արդիականացումը և դիվերսիֆիկացումը՝ կարևոր նախադրյալներ ստեղծելով կայուն տրնտեսական աճի համար:

Карен Саргсян

Кандидат экономических наук,
Институт экономики им. М. Котаняна НАН РА

ПРОБЛЕМЫ УСТОЙЧИВОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РА

Тезис посвящен проблемам экономического роста и безработицы в РА в посткризисный период, в связи с этим, уделяя особое внимание вопросам привлечения иностранных инвестиций. Как вывод, можно сказать, что реализация эффективной инвестиционной политики в Республике Армения решит ряд важных проблем, таких как сокращение безработицы, модернизация и диверсификация экономики, тем самым создавая основы для устойчивого экономического роста.

Karen Sargsyan

Candidate of Economic Sciences,
M.Kotanyan Institute of Economics NAS RA

THE ISSUES ON SUSTAINABLE ECONOMIC GROWTH IN RA

The thesis referred to the economic growth and unemployment problems in post-crisis period in RA, in this regard paying special attention to the issues of attracting foreign investment. As the conclusion, we can say, that the implementation of the effective investment policy in

Republic of Armenia will solve a number of important issues, such as reduction of unemployment, modernization and diversification of the economy, creating the foundations for sustainable economic growth.

Քրիստինե Բաղդասարյան,
Տնտեսագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ, ՄՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Այսօր շատ է խոսվում հանրապետությունում տնտեսության զարգացման անհրաժեշտության մասին, սակայն որոշ չափով անուշադրության են մատնվել տնտեսական խթանները: Չպետք է կարծել, թե տնտեսության անհամամասնական զարգացումն ունի միայն օբյեկտիվ պատճառներ, և դրանով պայմանավորված՝ բացառել տնտեսական նոր մոտեցումների առաջարկումը: Մեր կարծիքով, հանրապետության տնտեսական զարգացումը խոչընդոտվելու է այնքան ժամանակ, քանի դեռ սկզբունքային միջոցառումներ չեն ձեռնարկվել ստվերային եկամուտների առաջացման վրա ազդող գործոնների բացահայտման, գնահատման և վերլուծության ուղղությամբ: Հարցն, իհարկե, չունի միարժեք լուծում՝ մանավանդ երկրում առկա տարբեր ռիսկերի անկանխատեսելիության, դրանց գնահատման նվազեցման գործընթացի բարդության պայմաններում, մինչդեռ, փորձ է արվել բացահայտել, գնահատել և վերլուծել ստվերային եկամուտների կրճատման և դրանց օրինականացման հիմնական գործընթացների վրա ազդող տնտեսական և սոցիալական գործիքների իրական ազդեցությունը:

ՀՀ տնտեսությունում արտադրողականության բարձրաց-

ման արագ տեմպերը պահպանելու համար հրատապ խնդիրներից է բարեփոխումների նոր հնարավորություններից օգտվելը, որոնք ուղղված են մրցակցային միջավայրի զարգացմանը, կապիտալի միջազգային շուկաների հետ ավելի սերտ ինտեգրմանը, ֆինանսական շուկաների խորացման և բարձր տեխնոլոգիաների ներդրման նպատակով նոր գիտելիքների յուրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Ընդ որում, կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների բուն նպատակը հանդիսանում է այն պայմանների ձևավորումը, որոնք, վերջին հաշվով, նպաստում են բարենպաստ բիզնես-միջավայրի ձևավորմանը՝ միևնույն ժամանակ կրճատելով ստվերային եկամուտների առաջացման հնարավորությունները: Ավելին, վերջին տարիներին գրանցված երկնիշ թվերով տնտեսական աճի ապահովման գործում գնալով մեծանում է ստվերից տնտեսավարող սուբյեկտների «արտամղման» քաղաքականության ներդրման անհրաժեշտությունը:

Հարկման ընդհանուր մակարդակի ցածր արդյունավետության, ստվերային մեծ չափերի հասնող տնտեսության, եկամուտների ծայրահեղ անհավասարաչափ բաշխվածության պայմաններում էականորեն ցածր են մնացել բնակչության կենսամակարդակի հիմնական ցուցանիշները: Ավելին, եկամուտների և գույքի գերակշիռ մասը սակավաթիվ անձանց ձեռքերում կենտրոնացված լինելու պայմաններում պետությունը կիրառում է առավել մեղմ հարկային ռեժիմ և, բնականաբար, քիչ հնարավորություններ է ունենում բարձրացնելու բնակչության կենսամակարդակը, և մյուս կողմից բնակչությանը «տրամադրված» չնչին եկամուտները նրանից զանձում է ապրանքների և ծառայությունների գներում ներառված անուղղակի հարկերի ձևով՝ ծանրացնելով վերջիններիս բաժին հասնող հարկային բեռը: Այդ առումով, պետք է նշել, որ հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելուն նպաստող՝ տնտեսավարող սուբյեկտների մոտեցումները բերում են ստվերային տնտեսության

ահագնացող ծավալների ընդլայնմանը և տարածմանը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Իհարկե, դրանց վրա ազդում են տարբեր գործոններ:

Բացի այդ, հարկային օրենքները խախտելու և հարկերը վճարելուց խուսափելու համար հարկային քաղաքականության մեջ առանցքային դեր է կատարում նաև հարկային ստուգումների համակարգը: Ստվերային եկամուտները չեզոքացնելու և դրանք վերացնելու համար, գտնում ենք, որ հարկային եկամուտների կամավորության, ինքնահայտարարագրման համակարգը կնպաստի հարկային վարչարարության բարելավմանը, տնտեսվարող սուբյեկտների կողմից հայտարարագրվող եկամուտների իրական պատկերի ներկայացմանն ու հարկային ծառայողների կատարողականների բարձրացմանը օրինական դաշտում:

Այդ առումով, ահագնացող խնդիրներից են հարկային բարեփոխումները, որոնք նաև ներառվել են հարկային նոր օրենսդրությունում: Հարկային բարեփոխումների ընթացքում հիմնական շեշտը պետք է դրվի հարկային բեռի թեթևացման և ստվերային տնտեսության ծավալների կրճատման վրա: Հարկային թույլ վարչարարության պայմաններում հարկային բեռի թեթևացումը պետք է ուղեկցվի հարկային համակարգի պարզեցմամբ, ինչը հնարավորություն կտա ուժեղացնել հարկային վերահսկողությունը: Հարկային եկամուտների կառուցվածքում պետք է փոխվի նաև պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Աստիճանաբար պետք է բարձրացնել ուղղակի հարկերի տեսակարար կշիռը ի հաշիվ անուղղակի հարկերի:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում կարող է քննարկման առարկա դառնալ հետագայում հարկային բեռն աստիճանաբար տնտեսվարող սուբյեկտներից անձնական եկամուտների և գույքի վրա տեղափոխման հարցը: Դա, մի կողմից կխթանի այդ սուբյեկտների տնտեսական գործունեության ընդլայնմանը, մյուս կողմից՝ կնպաստի հար-

կային համակարգի սոցիալական ֆունկցիայի առավել լիարժեք իրացմանը: Այդ ուղղությամբ առաջին քայլը կարող է հանդիսանալ որոշ հարկատեսակների, նախ և առաջ ԱԱՀ-ի դրույրաչափի իջեցումը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքատեսակների ցանկի ընդլայնումը, ինչը թույլ կտա բյուջետային մուտքերի մակարդակի պահպանման պայմաններում իջեցնել արտադրության ծախսերը:

Кристина Багдасарян

Кандидат экономических наук,
Институт экономики им. М. Котаняна НАН РА

НАЛОГОВЫЕ РЕФОРМЫ, ТЕНЕВАЯ ЭКОНОМИКА, ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ

В работе, представлены факторы, которые способствуют или препятствуют экономическому развитию, особое внимание было уделено вопросам, связанным с распределением теневой экономики, экономической реформам, налогового бремени для хозяйствующих субъектов и уклонения от уплаты налогов. В заключении, можно сказать, что низкая эффективность налогообложения, растущая теневая экономика в различных отраслях экономики, неравномерное распределение доходов негативно влияют на уровень жизни населения.

Christina Baghdasaryan

Candidate of Economic Sciences,
M.Kotanyan Institute of Economics NAS RA

TAX REFORMS, SHADOW ECONOMY, ECONOMY DEVELOPMENT

In work presented at the factors that facilitate or impede economic development, special attention was paid to issues related to the

distribution of the shadow economy, economic reform, the tax burden for economic operators and tax evasion. As the conclusion, we can say, that the low efficiency of taxation, the shadow economy in the various sectors of the economy, the unequal distribution of incomes of the population made to decrease the main indexes of living standards.

Գառնիկ Սաֆարյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Իրավունքը որպես սոցիալական նորմատիվ կարգավորիչ՝ Հայաստանում սկսել է ձևավորվել «ցեղային միությունների», «ցեղատիրության», «վաղ պետականության» կամ «վաղ պետական կազմավորումների» ժամանակաշրջանում (մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից մինչև մ.թ.ա. առաջին հազարամյակի սկիզբն ընկած ժամանակահատվածը):

Որոշակի պայմանականությամբ, նույնը կարելի է դիտարկել նաև հայ իրավունքի և իրավական համակարգի զարգացման վերաբերյալ:

Հայաստանում վաղ պետական կազմավորումների՝ Արատտա աստվածապետական (կրոնապետական կամ թեոկրատական)՝ մ.թ.ա. XXVIII-XXVII դդ., Միտաննի թագավորության՝ մ.թ.ա. XVI-XIII դդ., Հայասա թագավորության՝ մ.թ.ա. XV-XIII դդ., Նաիրյան «երկրները»՝ մ.թ.ա. XIII-IX դդ., ինչպես նաև կենտրոնական Վանի (Արարատյան, Ուրարտուի) թագավորության՝ մ.թ.ա. IX-VI դդ., Հայկազունիների թագավորություն (մ.թ.ա. 612-մ.թ.ա. 331թ.) ժամանակաշրջաններում Հայաստանում ավարտ-

ված էր հասարակության դասային շերտավորումը, և հասարակական հարաբերությունների նորմատիվ հիմնական կարգավորիչը՝ սովորության իրավունքն էր: Թագավորական իշխանության օրենսդրական գործունեության հիմնական աղբյուրը նույնպես սովորության իրավունքն էր:

Միջնադարյան հայ իրավունքի կարևորագույն աղբյուրներից է նաև կրոնական (եկեղեցական) իրավունքը, այսինքն կանոնական սահմանումներն ու որոշումները (Ս գիրք, Առաքելական կանոններ, տիեզերական և տեղական եկեղեցական ժողովների որոշումներ, հայ ազգային եկեղեցական ժողովների որոշումներ, եկեղեցու՝ հայ և օտարազգի սուրբ հայերի կանոնախմբեր):

Հայ կանոնական իրավունքը կարգավորում էր ոչ միայն եկեղեցուն և հոգևորականությանը վերաբերող հարցերը, այլև քաղաքացիական, ժառանգական, քրեական իրավունքի (օրինակ՝ սպանության, առևանգման և տարբեր տեսակի հակաբարոյական արարքների) բնագավառի որոշակի հարաբերությունները: Անհրաժեշտ է նշել, որ հայ կանոնական իրավունքը գրեթե ամբողջությամբ կարգավորել է ամուսնաընտանեկան հարաբերությունները:

Չնայած պետության և աշխարհիկ օրենսդրության անխզելի կապին, քանզի աշխարհիկ իրավունքը ձևավորվում և զարգանում է պետության իրավաստեղծ գործունեության շնորհիվ, այդուհանդերձ, հայ աշխարհիկ իրավական համակարգն ունի զարգացման որոշակի առանձնահատկություններ: Հայ աշխարհիկ օրենսդրությունը հատկապես զարգացավ այն ժամանակշրջանում, երբ բացակայում էր ազգային պետականությունը (օրինակ՝ Դավիթ Ալավկաորդու կանոնական օրինադրությունները և Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագիրքը»):

Միջնադարյան հայ իրավունքի ամենանշանավոր իրավական հուշարձանը Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է, որի ստեղծումը պայմանավորված էր դարաշրջանի հրամայականով՝

իրավական հող նախապատրաստել վերականգնվելիք հայոց պետականության համար:

Միջնադարյան ժամանակաշրջանի հայ իրավական մյուս նշանավոր հուշարձանը Սմբատ Սպարապետի (գունդստաբլի) Դատաստանագիրքն է, որի հիմնական գրավոր աղբյուրն է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը:

Եթե Մխիթար Գոշը բնական ազատության և հավասարության կողմնակից էր, ապա Սմբատ Սպարապետը ոչ միայն չի ընդունում ի սկզբանե մարդկանց ազատության և հավասարության գաղափարը, այլև անազատությունը, անհավասարությունը համարում է բնական, արդարացի և հավերժական:

Հայ իրավական միտքը մինչև 18-րդ դարը զարգացում չապրեց և միայն 18-րդ դարի երկրորդ կեսերից սկսած երևան եկան հայ աշխարհիկ օրենսդրական ակտեր կամ դրանց նախագծեր, որտեղ առանձնակի նշանակություն է տրվում մարդու իրավունքներին: Այսպես, օրինակ, մարդու իրավունքների սահմանադրական ամրագրման առաջին փորձերը կատարվել են հայոց առաջին սահմանադրության նախագծում Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում (1788 թ.):

Յուրացնելով և զարգացնելով հայ իրավաքաղաքական մտքի լավագույն ավանդույթները, Շ. Շահամիրյանը հայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որ հիմնավորեց հանրապետական կարգերի անհրաժեշտությունը և, ըստ այդմ էլ, հայոց պետականությունը պատկերացնում էր որպես հանրապետություն: Կառավարման հանրապետական ձևի անհրաժեշտությունը, նրա ակնհայտ առավելություններն ավատատիրական միապետական կարգերի նկատմամբ Շ. Շահամիրյանը փաստարկում է և՛ բնական իրավունքի տեսության դիրքերից, և՛ հայոց պատմության համակողմանի վերլուծության տեսանկյունից:

Շ. Շահամիրյանը հիմնավորում և արդարացնում է ազգային-ազատագրական պայքարը, օտարների լծից ազատագրվելը և հանրապետական կարգերի հաստատվելը:

«Որոշայթ փառացը» սկզբնավորեց հայ սահմանադրական միտքը և որոշակի ուղենիշ հանդիսացավ նրա հետագա զարգացման համար:

Гарник Сафарян

Доктор юридических наук, профессор,
Институт Философии, социологии и права НАН РА

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЫ

В настоящей статье подробно анализируются этапы развития правовой системы в древний и средневековый периоды истории Армении. Уделяется особое внимание каноническому праву, выделяя такие концепции права знаменитых армянских правоведов и философов, как Мхитар Гош и Шаамир Шаамирян, которые имели значительный вклад в развитие армянского правоведения.

Garnik Safaryan

Doctor of Law, Professor,
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

THE MAIN PRINCIPLES OF THE HISTORICAL DEVELOPMENT OF THE NATIONAL LEGAL SYSTEM

In the article given the detailed analyze of the stages of development of the legal system in the ancient and medieval period of the history of Armenia. Particular attention paid to canon law, also emphasizing concept of the right of famous Armenian legal scholars and philosophers like Mkhitar Gosh and Shaamir Shaamiryan, which had a significant contribution to the development of Armenian jurisprudence.

Լիլիթ Ղազանյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտքարտուղար

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՐԴ ԴԱՐՈՒՄ

«Անձի իրավական դրություն» տերմինը ծագել է լատիներեն «status»՝ դրություն, կարգավիճակ, վիճակ, դիրք բառից: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է մարդուն, անձին կամ քաղաքացուն: Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ անձի իրավական դրությունը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (նայած պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ:

Անձի իրավական դրությունը բարդ սոցիալական, իրավական նշանակություն ունեցող երևույթ է, որը տարբեր պատմական ժամանակաշրջաններում և հասարակական-տնտեսական ֆորմացիաներում ուներ տարբեր դրսևորումներ: Բավական է համեմատել ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական համայնակարգերը, հասարակության պատմական տիպերը, որպեսզի համոզվենք դրանում: «Իրավական դրություն» հասկացությունը համեմատաբար նոր է պետության և իրավունքի տեսություն գիտության մեջ: Մինչհեղափոխական շրջանից մինչև 20-րդ դարի 60-ական թթ. այն նույնացվում էր անձի իրավասույնության հետ: Միայն իրավական մտքի սրընթաց զարգացման ժամանակ (1970-1980թթ.) իրավական դրություն հասկացությունը ձևավորվեց որպես իրավագիտության առանցքային հիմնախնդիր, ստացավ լայն մշակում և ամրագրվեց օրենսդրու-

թյան մեջ: Այսպես, ԽՍՀՄ Սահմանադրության (1978թ.) ընդունման ժամանակ առաջին անգամ ներկայացվեց «անձի իրավունքներ» տերմինը, ինչպես նաև մեկնաբանվեց «անձի սահմանադրական կարգավիճակ» տերմինը: Այդ ժամանակաշրջանում անձի իրավական կարգավիճակի տարրերն էին համարվում իրավունակությունը, իրավաբանական պատասխանատվությունը, անձի օրինական շահերն ու դրանց պաշտպանության երաշխիքները: Հարկ է նշել, որ արդի պետության և իրավունքի տեսությունը՝ որպես գիտություն, ներկայացնում է անձի իրավական դրության (կարգավիճակի) հետևյալ կառուցվածքային տարրերը (հիմունքները). 1)մարդու հիմնական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների ամբողջությունը, 2)իրավասուբյեկտությունը, 3) անձի օրինական շահերը, 4) իրավաբանական պատասխանատվությունը, 5) իրավական սկզբունքները, որոնց վրա հիմնված է անձի իրավական դրությունը (կարգավիճակը): Վերջիններիս ձևավորման և օրենսդրական ամրագրման վրա հսկայական ազդեցություն են ունեցել ԽՍՀՄ փլուզումից հետո անցումային շրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացների առանձնահատկությունները, ձևավորվող նոր իրավական համակարգը: Նորանկախ Հայաստանի առջև ծառացել էր նոր պետականության, հասարակական համակարգի, ազատ շուկայական հարաբերությունների և տարաբնույթ խնդիրների հաղթահարման անհրաժեշտությունը: Ավելին, փոխվել է իրավական կարգավիճակի նյութական կողմը՝ սեփականության բազմաթիվ ձևերը, գործազրկությունն ու աշխատանքային շուկայի առաջացումը, կենսամակարդակի անտեսումը և այլ գործոններ: Հայտնի է, որ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը իր առաջին քայլերը սկսեց պետական իրավական համակարգն ամուր հիմքերի վրա հիմնելու փորձով, որի արդյունքն էր Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը (23.08.1990թ.): Այն հավատարիմ էր ազգային ակունքներին, հանդիսանում էր

սկզբունքների և նորմերի ամբողջություն, որոնց բնորոշ էին ներդաշնակությունն առաջադիմական իրավական լուծումներին, մարդու իրավունքների հիմնախնդրին, սահմանադրական զարգացումների միջազգային միտումներին: Այնուամենայնիվ, առկա օրենսդրական բացերը, պետական իշխանության մարմինների անկատարությունն ու կառավարման սխալները, մարդու իրավունքների ոտնահարումը, տնտեսական խոր ճգնաժամը և ի վերջո, Ղարաբաղյան պատերազմը նպաստեցին երկրում արժեհամակարգերի ձևախեղումների և այլ բացասական գործընթացների դրսևորմանը: Հետևաբար, 1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեծագույն առաքելությունը եղավ այն, որ վերջինս հայոց պետականության կայացմանն անշրջելի լիցք հաղորդելով, դարձավ երկրի սահմանադրական կայունությունը երաշխավորող հիմնական օրենք: Ակնհայտ է, որ Սահմանադրության ընդունումը նոր փուլ հանդիսացավ ժողովրդավարության հաստատման, սահմանադրական հիմունքների, մարդու իրավունքների և ազատությունների զարգացման և օրենսդրական ամրագրման գործընթացում: Հռչակվեցին միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները, որոնցից էին՝ իշխանության տարանջատումը ու հավասարակշռումը, մարդու իրավունքների, ազատությունների և արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի, գերակայության սկզբունքները: Այնուամենայնիվ, ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումները, օրենսդրական բացերի վերացման անհրաժեշտությունն ու եվրոպական ընտանիքին անդամակցելու ցանկությունը հանգեցրին ՀՀ Սահմանադրության փոփոխությանը: 2005թ.-ին փոփոխված ՀՀ Սահմանադրությունն ընդլայնեց մարդու իրավունքների և ազատությունների շրջանակը, կոնկրետացրեց դրանց իրացման միջոցները: Սահմանադրական ամրագրում ստացան երկքաղաքացիությունը, մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, արդարադատության խորհուրդը, Սահմա-

նադրական դատարան դիմելու անձանց իրավունքը և այլն: Ավելին, սահմանադրաիրավական բարեփոխման արդյունքում փոփոխվեց նաև ընթացիկ օրենսդրությունը՝ հստակեցնելով անձի իրավական դրության տարրերի իրացման առանձնահատկությունները: Այսպիսով, հիմնադրվել է պետության և անհատի փոխհարաբերությունների նոր հայեցակարգ, որտեղ մարդը, նրա իրավունքները, ազատությունը և իրավական դրությունը հանդիսանում են բարձրագույն արժեք: Հետևաբար, մարդու, քաղաքացու իրավական վիճակի հետ պետք է համաձայնեցվեր մեր երկրի ինչպես Հիմնական օրենքը, այնպես էլ ընթացիկ օրենսդրությունը: Հետևաբար, պետություն-անհատ փոխհարաբերությունում առաջին տեղը զբաղեցնում են անձի արժանապատվությունը, ազատությունը, անմեղության կանխավարկածը, մարդասիրության և ժողովրդավարական այլ սկզբունքներ: Սահմանադրությամբ ներառվել է անձի իրավունքների սահմանափակման շրջանակը, և գործում է «Թույլատրելի է այն ամենը, ինչը արգելված չէ օրենքով» սկզբունքը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում ընթացող իրավաքաղաքական զարգացումները 2015թ.-ին հանգեցրին Սահմանադրության նոր փոփոխությանը, որը ձգտում է լրացնել անձի իրավական դրությանն առնչվող բացերը, շեշտադրելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման առանձնահատկությունների հստակեցումը, դրանց համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին: Փոփոխված սահմանադրությունում նաև ընդգծվում է պետության, որպես անձի սոցիալական հավասարության երաշխավորի դերը:

Հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված չէ «անձի իրավական դրություն» եզրույթի իմաստը, սակայն ակնհայտ է, որ Սահմանադրության 2-րդ գլուխը (մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) ողողված է այդ գաղափարով: Թեև, «անձի իրավական դրություն» հասկացությունը դեռ չի ստացել հստակ օրենսդրական ամրագրում և մեկնաբանություն, այնուամենայնիվ, այդ

ուղղությամբ մինչև օրս տարվում են բուռն քննարկումներ պետական մակարդակով: Խնդիրը հանգում է ոչ թե «անձի իրավական դրություն» հասկացության պարզապես օրենսդրական ամրագրմանը, այլ սոցիալական համակարգի ձևավորմանը, որում անձի իրավական դրության տարրերն իրացվում են այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման, որտեղ մարդու իրավունքները և ազատությունները հանդիսանում են նորմատիվ բնույթի արժեքները և իրական կյանքի կանոն են դառնում:

Лилит Казанчян

Кандидат юридических наук,
Ученый секретарь института Философии,
социологии и права НАН РА

**ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ
ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ
СТАНОВЛЕНИЯ НОВЕЙШЕЙ АРМЯНСКОЙ
ГОСУДАРСТВЕННОСТИ**

Автор на основе изучения истории становления Третьей армянской республики, раскрывает особенности развития правового положения личности в контексте конституционно-правовых реформ. Вместе с тем, подчеркивается фундаментальное, социально-юридическое значение понятия прав и свобод человека в формировании правового положения личности в современном демократическом государстве.

Lilit Kazanchian
Candidate of Law,
Scientific Secretary of the Institute of Philosophy,
Sociology and Law NAS RA

**THE FEATURES OF INDIVIDUAL'S LEGAL STATUS IN
THE CONTEXT OF ESTABLISHMENT OF THE
CONTEMPRARY ARMENIAN STATEHOOD**

The author, based on the research of history of establishment of the Third Armenian Republic, discloses development features of the individual's legal status in the context of constitutional and legal reforms. The author also emphasizes the fundamental, socio-legal significance of the essence of human rights and freedoms, and its importance in the development of the legal status of an individual in a modern democratic state.

Արտյոմ Մեղրակյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Առաջին Հանրապետությունը երկար չգոյատևեց: Դրա հիմնական պատճառներից կարելի է նշել միջազգային նոր կարգի ձևավորման նախաշեմին այդ պետությունում բավարար քաղաքական, տնտեսական և իրավական հենքի բացակայությունը: Երկար չգոյատևեց նաև Երկրորդ Հանրապե-

տությունը: Լինելով Խորհրդային Միության «արբանյակներից» մեկը՝ այն չէր կարող շարունակել իր գոյատևումն այդ գերտերության փլուզումից հետո, հատկապես, որ առաջացավ նոր՝ Երրորդ Հանրապետություն ստեղծելու անհրաժեշտությունը: Թեև Առաջին և Երկրորդ Հանրապետությունները պատմական ժամանակահատվածի տեսանկյունից երկար չգոյատևեցին, անչափ կարևոր էր այն, որ հայկական պետականության պահպանման գործում էստաֆետի փոխանցումը մի հանրապետությունից մյուսին եղել է առանց ընդհատման: Այսինքն, ապահովված է եղել պետական համակարգի շարունակականությունը՝ անկախ այդ համակարգը ոչ կատարյալ կամ ոչ միանշանակ ընդունելի լինելու հանգամանքից: Ընդ որում, դա կարևոր է ինչպես նորանկախ Հայաստանի պետականաշինության ամրապնդման, այնպես էլ դրա անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հայաստանի Երրորդ Հանրապետությունում անկախության քսանհինգ տարիների ընթացքում բավականին կարևոր քայլեր են կատարվել (ազգային) անվտանգության ապահովման համար: Իսկ ի՞նչ կարելի է անել այդ ապահովումն առավել արդյունավետ դարձնելու համար:

1. Անհրաժեշտ է կատարելագործել ազգային անվտանգության մասին օրենսդրությունը: «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի ընդունմամբ դրվեց անկախ պետականության հաստատման «...գործընթացի սկիզբը»: Դրանով կատարվեց անվտանգության իրավական ապահովման առաջին քայլը: Այնուհետ կատարվեցին անվտանգության իրավական ապահովման հաջորդ քայլերը. ընդունվեցին Սահմանադրությունը և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ օրենքներն ու այլ ակտերը:

Այնուամենայնիվ, թեև սահմանադրական ապահովման դիտանկյունից ազգային անվտանգությունն ապահովված է գրեթե ամբողջությամբ, իսկ ենթաօրենսդրական (ռազմավարական-հայեցակարգային) տեսանկյունից՝ բավականաչափ, ապա նույնը

չի կարելի ասել օրենսդրական (օրենքական) ապահովման առումով: Այսօր անհրաժեշտ է ոլորտը կարգավորող միասնական-համակարգված օրենք, որով կամրագրվի «սահմանադրություն-օրենք-ենթաօրենսդրական ակտ» իրավական շղթան:

2. Անհրաժեշտ է ձևավորել իրավունքի վերաբերյալ անհրաժեշտ ընկալումը: Իրավունքը և անվտանգությունը սերտորեն փոխկապակցված են: Դրանք նաև նույնական են: Ընդ որում, եթե անվտանգությունն ապահովում է անհատի, հասարակության և պետության զարգացումը, ապա իրավունքը կարգավորում է այդ զարգացումը: Քանի որ անհատը, հասարակությունը և պետությունը միասնական են, հետևաբար իրավունքի ամբողջական և անհրաժեշտ ընկալման համար պետք է իրավունքը դիտարկել ոչ այնքան տարանջատվածության, որքան ամբողջականության հարթության վրա: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է, որ պետքի իրավունքն ընկալվի ոչ թե նրա շերտերի հիմքում գտնվող անհատի, հասարակության և պետության տարանջատվածության անկյունից (ինչպես արվել է իրավաբնական երեք հիմնական ուղղություններից յուրաքանչյուրով), այլ դրանց միասնականության մեջ՝ ամբողջականության հարթության վրա: Ազատ և միաժամանակ անվտանգ միջավայրում ապրելու համար կարևոր է, որպեսզի իրավունքի ծագման տարրերը (անհատականը, հասարակականը և պետականը) ընկալվեն երեքը մեկում՝ որպես առանձին տարրերից բաղկացած, բայց փոխկապակցված միասնություն: Իրավունքն առկա է և միշտ պետք է առկա լինի անհատական տարրի, հասարակական տարրի և պետական տարրի միաժամանակյա առկայությամբ, քանի որ այն հարկավոր է միայն երեք սուբյեկտի՝ անհատին, հասարակությանը և պետությանը, ընդ որում՝ ինչպես յուրաքանչյուրին առանձին վերցրած, այնպես էլ երեքին միասնության մեջ: Նույնը վերաբերում է նաև անվտանգությանը՝ որպես մի վիճակ, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր անհատի, հասարակության և պետության շահերի (ազգային շահերի) ապահովումը: Նման

մոտեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ առկա իրականությունից բխող անհրաժեշտություն: Ազատությունն այսօր առավել քան երբևէ պայմանավորված է անվտանգությամբ, իսկ անվտանգությունը՝ ազատությամբ, քանի որ ժամանակակից աշխարհում ազատությունը վտանգված է նոր՝ հաճախ միմյանցով պայմանավորված մարտահրավերներով: Նշված մոտեցման համատեքստում իրավունքը մեծապես փոխկապակցված է թվում անվտանգության հետ, քանի որ իրավունքը պայմանավորված է անվտանգության անհրաժեշտությամբ, իսկ անվտանգությունը՝ իրավունքի ուժով:

Այս առումով, «անհատի շահ-հասարակության շահ-պետության շահ» եռամիասնության կապը «իրավունք-անվտանգություն» երկմիասնության հետ ուղղակի է, իսկ դրա ամրությունն էլ կարող է երաշխավորել անհատի, հասարակության ու պետության զարգացումը:

3. Անհրաժեշտ է զարգացնել ազգային անվտանգության իրավունքը: Իրավունքի վերաբերյալ անհրաժեշտ ընկալման համար մեծապես կարող է նպաստել ազգային անվտանգության իրավունքը: Այդ իրավունքի դերը պայմանավորող առանձնահատկությունները պայմանավորում են նաև մյուս ճյուղերից դրա տարբերությունը:

«Ֆիլտր»-դերակատարում ունեցող այդ նոր համալիր իրավունքով կհստակեցվի անհատի, հասարակության և պետության՝ որպես անվտանգության օբյեկտների ու (միաժամանակ) սուբյեկտների անվտանգ ազատության և արդյունավետ փոխգործակցության չափը: Բացի դրանից, իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում կամրապնդվի անհրաժեշտ իրավաընկալումը, կզարգանա ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Միաժամանակ, «կրյուրեդացվի» հասարակական հարաբերությունների այն ամբողջությունը, որը ենթակա է կարգավորման «սնվող» իրավանորմերով, ինչն էլ կապահովի ազգային անվտանգության ոլորտում առաջացող հարաբերությունների կարգավորման արդյունավետությունը:

Артем Седракян
Кандидат юридических наук, доцент
Институт философии, социологии
и права НАН РА

**ЭФФЕКТИВНОСТЬ ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ
БЕЗОПАСНОСТИ В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ
АРМЕНИЯ**

Автор выделяет три необходимых фактора, которые могут гарантировать эффективность правового обеспечения безопасности в Третьей Республике Армения. Для этого прежде всего необходимо: совершенствовать законодательство о национальной безопасности, сформировать необходимое правовопонимание, разработать и совершенствовать право национальной безопасности.

Artyom Sedrakyan
Candidate of Law, Associate Professor
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

**EFFECTIVE LEGAL GROUNDWORK FOR ENSURING
SECURITY IN THE TIRD REPUBLIC OF ARMENIA**

The author has pointed out three necessary factors that may render an effective legal groundwork for ensuring security in the Third Republic of Armenia. The author is of the opinion that it is necessary: to improve the national security legislation; to shape the necessary understanding of law; to develop the national security law.

Արկադի Ակոպով
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն

**ՎՐԱՍՏԱՆ-ԹՈՒՐԲԻԱ-ԱՐԴԲԵՋԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

2003 թ. նոյեմբերի «Վարդերի հեղափոխության» արդյունքում Մ. Սահակաշվիլու իշխանության գալուց հետո Վրաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ սկսեց գերակայել թուրքալեզու հարևանների հետ հարաբերությունները սերտացնելու ձգտումը, որը նպատակ էր հետապնդում զբաղեցնել տարանցիկ դեր թուրք-ադրբեջանական հարաբերություններում, ինչպես նաև տարածաշրջանից կտրել Հարավային Կովկասում իր շահերն ունեցող Ռուսաստանի Դաշնությանը:

Հարավային Կովկասը ԽՍՀՄ փլուզումից հետո հայտնվեց մի իրավիճակում, որտեղ միմյանց էին բախվում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի շահերն ու արտաքին կողմնորոշման միտումները: Տարածաշրջանում սեփական ազդեցությունը պահելու կամ ձեռք բերելու հավակնություն էին ներկայացնում Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես նաև Թուրքիան, որը Հարավային Կովկասը դիտարկում է իբրև իր արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Թուրքիան և Վրաստանը փորձում են քայլեր ձեռնարկել Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու, ինչպես նաև տարածաշրջանում միակ ռազմավարական գործընկերոջից՝ Հայաստանից կտրելու ու մեկուսացնելու համար: Այս առումով հատուկ նշանակություն ունի Վրաստանի հայաբնակ Մամգիսե-Ջավախքի վարչական շրջանը, որտեղ Թուրքիան վարում է ժողովրդագրական պատ-

կերի ձևափոխմանը միտված քաղաքականություն՝ աջակցելով 1944 թ.-ից տեղահանված մեսիսեթցի թուրքերի վերադարձին Սամցխե-Ջավախք: Այն հեռանկարում կհանգեցնի Վրաստանի հարավում ամբողջական թուրքական միջանցքի ստեղծմանը: Արդյունքում՝ Սամցխե-Ջավախք և ադրբեջանաշատ բնակչությամբ Քվեմո Քարթլի վարչական շրջանները զուգահեռ գծով կմիացնեն միմյանց Ադրբեջանն ու Թուրքիան:

Առևտրի ոլորտում Թուրքիան ներկայումս համարվում է Վրաստանի թիվ մեկ գործընկերը: 2014 և 2015թթ. Վրաստանի արտաքին առևտրաշրջանառությունը Թուրքիայի հետ կազմել է 1,5-2 մլրդ դոլար, կամ Վրաստանի ամբողջ արտաքին առևտրի շուրջ 20%-ը: Թուրքական ամենամեծ ներդրումները կատարվել են Ռիզե-Փոթի օպտիկամանրաթելային մալուխի և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի նախագծերի իրականացման համար, որոնք ունեն ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական նշանակություն:

Էներգետիկ ոլորտում ևս առկա է սերտ համագործակցություն: Մասնավորապես ռազմավարական հսկայական նշանակություն ունի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատար խողովակաշարը, որը Կասպից ծովը կապում է Միջերկրական ծովին: Երեք երկրները միավորում է նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը: 2010թ. բարձրագույն ղեկավարների մակարդակով որոշվել է ստեղծել Ադրբեջան-Վրաստան միասնական էներգահամակարգ: 2012թ. հունիսի 26-ին Թուրքիայի և Ադրբեջանի էներգետիկայի նախարարները ստորագրել են 7-8 մլրդ արժողությամբ Տրանսանատոլիական (TANAP) նոր գազատարի կառուցման համաձայնագիր, որը ենթադրում է մինչև 2019 թ. լուծել ադրբեջանական բնական գազը «Շահ Դենիզ» հանքավայրից Վրաստանով, Թուրքիայով, Հունաստանով և Ալբանիայով Իտալիայի հարավ արտահանելու հարցը՝ միանալով նոր «Տրանսադրիատիկ» (TAP) նախագծին:

Առևտրատնտեսական բազմակողմանի հարաբերությունները հիմք են հանդիսանում նաև Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմական և քաղաքական համագործակցության զարգացման համար: 2010թ. Մ. Սահակաշվիլին շրջանառության մեջ դրեց Վրաստան-Ադրբեջան համադաշնության նախագիծը: Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան համագործակցության շրջանակներում ռազմավարական նշանակություն ունի երեք երկրների ԱԳՆ ղեկավարների 2012թ. հունիսի 8-ին Տրապիզոնում ստորագրած հռչակագիրը, ըստ որի կողմերը շարունակելու էին միջազգային ասպարեզում միմյանց թեկնածություններին աջակցելու քաղաքականությունը, խթանելու էին հարաբերությունների հետագա զարգացումը բոլոր ոլորտներում և այլն:

Թուրքիան, Վրաստանն ու Ադրբեջանը լուրջ քայլեր են ձեռնարկում նաև ռազմական ոլորտում՝ կազմակերպելով համատեղ զորավարություններ՝ միտված անվտանգության բարելավմանն ու փորձի փոխանակմանը, ինչպես նաև եռակողմ հանդիպումներ՝ պաշտպանության նախարարների մակարդակով: Հատկանշական է հատկապես 2000-ականների սկզբներից անցկացվող և ամենամյա դարձած Eternity (Անվերջություն) միջազգային զորավարությունը, որն անցկացվում է հերթականությամբ Թուրքիայում, Վրաստանում և Ադրբեջանում: Մասնավորապես, 2013թ. Բաքվում անցկացված զորավարությունների ժամանակ ուշադրության կենտրոնում են եղել հատկապես Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի պաշտպանությանը վերաբերող վարժանքները:

Թուրք-ադրբեջանական նմանօրինակ քաղաքականությունն ու դրա նկատմամբ Վրաստանի մոտեցումները թույլ են տալիս եզրակացնել, որ երկու թուրքական պետությունները փորձում են ֆինանսական և առևտրատնտեսական լծակներով իրենց աղեղի մեջ ներառելով Վրաստանը, փաստացի ցամաքային կամուրջ ստեղծել, ինչը, մասնավորապես, Սամցխե-Ջավախքում թուրքական տարրի գերակա դառնալու պայմաններում

կղաճնա խիստ հավանական՝ միաժամանակ լրջագույն խնդիրներ ստեղծելով և՛ Վրաստանի, և՛ Հայաստանի համար, քանի որ առաջինը կկանգնի հերթական տարածքը կորցնելու, իսկ երկրորդը՝ ամբողջությամբ իսլամական շրջափակման մեջ հայտնվելու վտանգի առջև:

Այս ամենը վտանգի տակ է դնում ՀՀ պետական ու ազգային անվտանգությունը, ինչի դեմն առնելու համար անհրաժեշտ է բոլոր հնարավոր ոլորտներում խորացնել Հայաստան-Վրաստան համագործակցությունը, Թբիլիսիում ավելացնել հայապահպանությանը միտված տարաբնույթ ծրագրերի ու միջոցառումների անցկացման հաճախականությունը, Ջավախքում իրականացնել սոցիալ-տնտեսական բնույթի ծրագրեր, ստեղծել աշխատատեղեր, ինչը կնպաստի սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների պատճառով մեծ թափ ստացած արտագաղթի տեմպերի թուլացմանը և ժողովրդագրական կազմի պահպանմանը: Հակառակ դեպքում ոչ հեռու ապագայում ՀՀ-ն կդատապարտվի հյուսիսում ևս ունենալ թուրքալեզու, իսլամադավան հարևան՝ դրանից բխող հետևանքներով:

Аркадий Акопов

Кандидат исторических наук,
Ширакский центр арменоведческих
исследований НАН РА

**ВЛИЯНИЕ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО
СОТРУДНИЧЕСТВА
ТУРЦИИ-ГРУЗИИ-АЗЕРБАЙДЖАНА НА
БЕЗОПАСНОСТЬ АРМЕНИИ**

С 2004 года во внешней политике Грузии начал доминировать протюркизм, имеющий цель вытеснить из Южного Кавказа Россию. В свою очередь Турция пытается поменять демографическую картину армянонаселенного района Грузии – Самцхе-Джавахети, под-

держивая переселение турков-месхетинцев в вышеупомянутый регион.

Интересы Грузии, Азербайджана и Турции объединяются не только нефтепроводом Баку-Тбилиси-Джейхан, газопроводом Баку-Тбилиси-Эрзурум, железной дорогой Баку-Тбилиси-Ахалкалаки-Карс, но и подписанной в 2012 г. Трабзонской декларацией по всестороннему сотрудничеству.

Такая обстановка представляет угрозу национальной и государственной безопасности Армении, которой грозит в ближайшем будущем на севере получить нового мусульманского тюркоязычного соседа.

Arkadi Akopov

Candidate of Historical Sciences,
Shirak Center of Armenian Studies NAS RA

THE INFLUENCE OF MILITARY-POLITICAL COOPERATION OF GEORGIA-TURKEY-AZERBAIJAN ON THE SECURITY OF ARMENIA

Under president Mikhail Saakashvili, pro-Turkism began to dominate in Georgia's foreign policy the aim of which was to remove Russia from the South Caucasus. In its turn Turkey is trying to change the demographic picture of the Armenian-populated region of Georgia - Samtskhe-Javakheti, supporting the resettlement of Meskhethian Turks in this region. Interests of Georgia, Azerbaijan and Turkey are connected with Baku-Tbilisi-Ceyhan oil pipeline, Baku-Tbilisi-Erzurum gas pipeline, Baku-Tbilisi-Akhalkalaki-Kars railway and Trabzon Declaration on all-round cooperation, signed in 2012.

This situation supposes a real threat to the national and state security of Armenia which is threatened in the near future in the north to obtain new Islamic and Turkish speaking neighbor.

**ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՅՈՑ «ԱՊԱԳԱՅԻ» ԽՆԴԻՐԸ**

Քրիստոնեական անցյալ ունեցող ժողովուրդների ժամանակակից սահմանադրություններն ուսումնասիրելով՝ գալիս ենք եզրակացության, որ շատ թույլ կապ կա դրանց ժամանակակից բովանդակության և նախկին մշակութային ձեռքբերումների ու քրիստոնեական աշխարհընկալման միջև: Խղճի ազատության, մարդու և քաղաքացու տարանջատման, պետության խիստ աշխարհիկացման, իշխանության բաժանման և այլ հասկացությունների ու լուսավորչական, ռացիոնալ-էմպիրիկ և լիբերալ փիլիսոփայական դպրոցների գաղափարների հիման վրա ստեղծված սահմանադրության մոդելը գործում է աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ մոդելի սահմանադրությունը, իրավամբ, անվանում են նաև «Արևմտյան մոդելի սահմանադրություն», քանզի դրա գաղափարական և ինստիտուցիոնալ կայացումն ու տարածումը սկսվել է հենց «արևմուտքից»:

Ինչու՞ այլևս չեն մատնանաշում «Արևմտյան մոդելի» սահմանադրության փիլիսոփայական բազայի խիստ սահմանափակությունը. օրինակ՝ այն չի ներառում քրիստոնեական անտրոպոլոգիան և հայրաբանական աշխարհընկալումը:

Ինչու՞ «Արևմտյան մոդելի» սահմանադրությունը, հռչակելով ազատություն և այլ հիմնարար արժեքներ, չի մեկնաբանում, թե ինչ է ազատությունը բովանդակային առումով, որի հետևանքով սկսած 18-րդ դարից եվրոպական շատ հասարակություններ ազատության էին ձգտում դասակարգերի վերացման միջոցով, իսկ այսօր ազատության տարընկալումների պատճառով հայտնվում են օրենքներ, որոնք մարդուն «ազատ» են հռչակում նաև բնությունից՝ թույլ տալով «ընտրել» սեփական սեռը:

Ինչու՞ է «Արևմտյան մոդելի» սահմանադրությունը հակադրում կամ բաժանում «մարդ» և «քաղաքացի» հասկացությունները. Այո՛ւ Ա.Մ. սահմանադրությունը մարդուն թույլ տալիս է չդառնալ քաղաքացի, սակայն այդ դեպքում ինստիտուցիոնալ աշխարհը իրավունքի տեսանկյունից անհասանելի է դառնում մարդու համար: Արդյոք մարդուն քաղաքացու մեջ տարրալուծելու վտանգ առկա չէ :

Ինչու՞ է «Արևմտյան մոդելի» սահմանադրությունը տալիս միայն անհրաժեշտի սահմանները և չի նշում նախընտրելի տեսլականներ, չէ՞ որ մարդկությունը խաղաղ համակեցության խնդիրներ ունի, իսկ անհրաժեշտի մեջ (լոկալ շահ) մարդկությունը բաժանվում և միայն նախընտրելիի (ընդհանուր կարիք) միջոցով միավորվում է:

Ինչու՞ է «Արևմտյան մոդելի» սահմանադրությունը անջատում աշխարհիկ և հոգևոր իշխանությունները, երբ մարդկային ինքնությունը հավասարապես երկուսի կարիքն էլ ունի, քանի որ մարդկային էությունը հոգեմարմնավոր է:

Վերը ասվածի կոնտեքստում քննելով ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումների անցկացումները՝ իրավացի տեսակետ է ստեղծվում, ըստ որի այդ բարեփոխումների պատճառը ոչ միայն կամ ոչ այդքան բուն մայր օրենքի բարեփոխումն է, այլ այդ գործընթացի միջոցով «Արևմտյան մոդելի» սահմանադրության լեգիտիմացումը հայոց մեջ, որպեսզի «այո»-ի ու «ոչ»-ի պայքարը վերաբերի լոկ ածանցյալ հարցերին և ոչ բուն մոդելին: Բացի իրավական փաստաթուղթ լինելուց սահմանադրությունը նաև քաղաքակրթական վեկտոր և որոշակի առումներով կեցության մոդուս որոշող և պայմանավորող լծակ է, ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերել դրա ներդրմանն ու արմատավորմանը: Հայտնի է, որ սահմանադրությունը, լինելով աշխարհիկության գլխավոր սիմվոլներից մեկը, որպես հիմնարար սկզբունք հայտարարում է իշխանության բաժանումը հոգևոր կառույցից (մեր պարագայում Հայ Առաքելական Սբ.

Եկեղեցուց) կամ օտարում է վերջինիս իշխանական սպեկտրից՝ ճանաչելով բոլոր կրոնական կազմակերպությունների կյանքի իրավունքը իր պաշտպանության ներքո. այս պարագան հիշելով հայացք նետենք հայկական ինքնությանն ու քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու փաստերին. ակնհայտ են խնդիրները... Քրիստոնեությունից, որպես ինստիտուցիոնալ բուրգի կառուցման գործում սկզբունք-անկյունաքարից հրաժարումը խիստ մտահոգիչ է «հայոց ապագայի» կոնտեքստում, քանի որ այս խնդիրը լուկ հայկական չէ, ապագայի տեսլականի վակուումը, գաղափարական դիլեման հոգևորի և նյութականի համադրման տեսանկյունից՝ համամարդկային է, իսկ հայ ժողովուրդը իր առաքելության առանցքում մշտապես դրել է հենց համամարդկային հարացուցային վեկտորների պահպանումն ու դավանումը, ինչով և արժանացել է տարբեր ժողովուրդների գանազան «ազդակներին» ու «վերաբերմունքին»:

Ժամանակակից Հունաստանի սահմանադրությունը ևս պահպանում է վերը ասվածի արձագանքները. որքան էլ պարադոքսալ թվա, աշխարհիկության և արևմուտքի հետհեղափոխական գաղափարների հաստատման գլխավոր սիմվոլ սահմանադրությունը, Հունաստանում սկսվում է հետևյալ տողերով. In the name of the Holy and Consubstantial and Indivisible Trinity. Գուցե նաև այս «վրիպակի» և ոչ միայն Հունաստանում առկա օբյեկտիվ խնդիրների պատճառով է, որ եվրոպական տերությունները հաճախ թիրախավորում են այս երկիրն ու ժողովրդին, որը չի ուզում հրաժարվել իր առաքելության առանցքներից և տրվել հոսքին...

Ռուս մեծ մտածող Կոնստանտին Լեոնտևը, տեսական-փիլիսոփայական վերլուծության ենթարկելով սահմանադրությունը, գալիս է ուշագրավ եզրակացության. "Чем искренне дарована конституция, чем строже выполняются ее параграфы правительством, тем хуже для будущего страны".

Մեփական մշակույթի լավագույն արժեքների բյուրեղաց-

ման միջոցով ՀՀ Սահմանադրության վերակարգավորումը «հայոց նախընտրելի ապագայի» ստեղծման յուրահատուկ հնարավորություն և լծակ է:

Вагаршак Матикян
Аспирант Армянского Государственного
Педагогического Университета им. Х. Абовяна

КОНСТИТУЦИЯ РА И ПРОБЛЕМА «БУДУЩЕГО» АРМЯНСКОГО НАРОДА

Проблематика воздействия конституции на разные структурно-идейные механизмы страны выходит за рамки чисто юридической дилеммы, поскольку прямым образом связана с вопросами бытия того или иного народа. Наблюдение сказанного приобретает особую важность в контексте вопроса «как поступить если история и идентичность народа напрямую связаны с христианством», поскольку известно, что конституция создавалась на основе философских течений, враждующих с христианством.

Vagharshak Matikyan
Phd student of Armenian State Pedagogical
University after Kh. Abovyan

CONSTITUTION OF RA AND THE PROBLEM OF "THE FUTURE" ARMENIAN PEOPLE

The issue of the impact of the Constitution on various structural and ideological mechanisms of the country goes beyond the purely legal dilemma as directly related to the questions of existence of people. Observation of the above is of particular importance in the context of the question "what to do if the history and identity of the people directly connected with Christianity," as it is known that the constitution was created on the basis of philosophical currents hostile to Christianity.

III. ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐՎԱ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Աննա Ասատրյան

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն

ԱՐԱՄ ՄԱԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2011), կոմպոզիտոր Արամ Մաթյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, մանկավարժական և կազմակերպական:

Ինչպես գործունեության խորհրդային շրջանում, բազմաժանր կոմպոզիտորը շարունակել է ստեղծագործել սիմֆոնիկ և կամերային ժանրերում: Սիմֆոնիստ կոմպոզիտորի նվաճումներից են «Համլետ» սիմֆոնիկ պոեմը՝ Շեքսպիրի համանուն ողբերգության մոտիվներով, և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Դրվագ կյանքից» վալսը՝ նվիրված Ռավելի հիշատակին:

Ա.Մաթյանի ուշադրության կենտրոնում է հայտնվում երաժշտական թատրոնը. 1997թ. ստեղծված «Լիլիթ» փոփ-օպերան բեմադրվել է 2003-ին, իսկ «Մանեկեն» մեկ գործողությամբ բալետը սպասում է իր բեմելին:

Երվանդ Ղազանչյանի բեմադրությամբ Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում 2012թ. սեպտեմբերի 28-ին բեմ բարձրացավ Ա.Մաթյանի «Մորզանի խնամին» երկու գործողությամբ մյուզիքլը՝ ըստ Ալ.Շիրվանզադեի համանուն պիեսի, որն արժանացավ «Արտավազդ» մրցանակին: Նույն թատրոնի հետ համագործակցության արդյունքում Ա.Մաթ-

յանը գրել է երաժշտություն «Ձեր աստվածը փողն է...» երկու գործողությամբ կատակերգության համար (հեղինակ՝ Գ.Սունդուկյան), որի պրեմիերան տեղի է ունեցել 2015թ. մարտի 25-ին:

Ա.Սաթյանի՝ օպերային ժանրին վերջին անդրադարձը «Փոքրիկ Ցախեսը» փոփ-օպերան է՝ գրված Հոֆմանի հեքիաթային գրոտեսկ-պատմվածքի (1819) հիման վրա, որից հատվածներ հնչել են տարբեր համերգների ժամանակ:

Ա.Սաթյանի հեղինակային համերգները տեղի են ունեցել Երևանում (1991, 1997, 2007, 2011) և ԱՄՆ-ում (2014թ. մարտի 15):

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ա.Սաթյանի ստեղծագործական դասարանն են ավարտել հայկական կոմպոզիտորական դպրոցի երիտասարդական թևի հեռանկարային ստեղծագործողներից շատերը, այդ թվում՝ Գևորգ Հովհաննիսյանը, Էդմոնդ Մակարյանը, Բելա Հովհաննիսյանը, ինչպես նաև Դավիթ Սաթյանը (Լոնդոն), Արթուր Սաթյանը (Բելրուֆի կոնսերվատորիայի պրոֆեսոր) և ուրիշներ:

1990-1994թթ. Ա.Սաթյանը Երևանի կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարն էր, 1994-1997թթ.՝ Հայաստանի հեռուստառադիոյի պետական վարչության երաժշտական ծրագրերի և երաժշտական խմբերի տնօրենը և գեղարվեստական ղեկավարը:

2013թ. հոկտեմբերի 27-ին Ա.Սաթյանն ընտրվել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ. նա ՍՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ էր 1970-ից: Նրա ղեկավարությամբ ՀԿՄ-ը ստանձնել է հայ ժամանակակից երաժշտության պրոպագանդման գործը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ա.Սաթյանի ջանքերով կազմակերպվել են Հայ ժամանակակից երաժշտության Առաջին (2014), Երկրորդ (2015) և Երրորդ «Պրեմիերա» (2016) փառատոները, Երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների փառատոները (2014, 2015), Հայ և ռուս երիտասարդ կոմպոզիտորների փոխադարձ համերգները: Կազմակերպվել են համերգաշարեր

ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և այլուր, այդ թվում՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին, ինչպես նաև Ալեքսանդր Աճեմյանին և Խաչատուր Ավետիսյանին նվիրված համերգները Բոստոնում: Իսկ Էդվարդ Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթները (2014, 2015, 2016), որոնց մասնակցում են ՀՀ, ԼՂՀ և Սփյուռքի 8-18 տարեկան պատանի ստեղծագործողները, նպատակ ունեն բացահայտելու պատանի տաղանդներին:

2013-ին Ա.Սաթյանը գրել է ՀՀ ԳԱԱ հիմնը: Հիմնի պրեմիերան տեղի ունեցավ 2013թ. հոկտեմբերի 15-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված հորեյանական հանդեսի ժամանակ: Կատարեցին՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի երիտասարդական պետական նվագախումբը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Զեքիջյանի ղեկավարությամբ: Հիմնն արժանացավ նրբաճաշակ ունկնդիրների ջերմ ընդունելությանը:

Ա.Սաթյանը 2014թ. փետրվարի 5-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Анна Асатрян

Доктор искусствоведения, профессор,
завеститель директора Института искусств НАН РА

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРАМА САТЯНА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ РА

Творческая деятельность председателя Союза композиторов
Армении (2013), Заслуженного деятеля искусств Армении (2011)

Арама Сатяна развивается по трем основным направлениям: творческому, педагогическому и организационному.

Творчество композитора охватывает почти все музыкальные жанры. Он пишет оперные, симфонические, камерные произведения, музыку для театральных постановок. Авторские концерты А. Сатяна состоялись в Ереване (1991, 1997, 2007, 2011) и США (15.03.2014).

Класс композиции профессора Ереванской государственной консерватории имени Комитаса А. Сатяна окончили многие из перспективных сочинителей музыки молодежного крыла армянской композиторской школы.

Под руководством А. Сатяна Союз композиторов Армении осуществляет пропаганду армянской современной музыки как в Армении (усилиями Союза в 2014, 2015 и 2016 годах были проведены фестивали армянской современной музыки), так и за рубежом (серии концертов в США, Франции, России и т.д.). Республиканские фестивали юных композиторов имени Эдуарда Мирзояна (2014, 2015, 2016) призваны выявить талантливых юношей и девушек от 8-ми до 18-ти лет из РА, НКР и армянской Диаспоры.

А. Сатян является автором гимна НАН РА (2013). Композитор избран членом ученого совета Института искусств НАН РА.

Anna Asatryan

Doctor of Arts, Professor

Deputy Director of the Institute of Arts NAS RA

ARAM SATYAN'S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA

The creative work of Aram Satyan, Chairman of Armenia Composers' Union (since 2013), Honored Artist of Armenia (2011), proceeds in three major spheres: creative, pedagogical and organizational.

The composer's oeuvre embraces almost all the musical genres. He

writes opera, symphony and chamber music, music for theater productions. Concerts of A. Satyan's own compositions were held in Yerevan (1991, 1997, 2007 and 2011) and in the USA (March 15, 2014).

Many of the promising musicians of the youth wing of Armenian school of composition are graduates of Professor A. Satyan's composition class at Yerevan Komitas State Conservatory.

Headed by A. Satyan, Armenia Composers' Union popularizes Armenian contemporary music both within the country (festivals of Armenian contemporary music were held in 2014, 2015 and 2016) and abroad (a series of concerts in the USA, France, Russia, etc.). Edward Mirzoyan National Festivals of Young Composers (2014, 2015 and 2016) are intended to discover composer talents among the youth aged 8 to 18, who come from the RA, the NKR, and the Armenian Diaspora.

A. Satyan wrote the anthem of the RA National Academy of Sciences (2013); the composer has been elected a member of the Scientific Council NAS RA Institute of Arts.

Suren Zolyan

Doctor of Philology, Professor

Institute of Philosophy, Sociology and Law of ANAS

THE POLITICAL SYMBOLISM OF THE THIRD REPUBLIC: STILL IN QUEST FOR IDENTITY

We intend to consider the current political symbolism of the Republic of Armenia and its connection with the ongoing political processes. Armenia's independence took place in a complex political and ideological context. At that time, the main political objectives and discourses were concentrated on a struggle for Karabakh and the fight against communism. It led to the situation where the creation of independent statehood was out of the main political discourse. Such discourses emerged only after gaining political independence, as if to justify radical changes that had already taken place. Meanwhile the

founding of an independent state assumes its ideological justification and background. Political processes have led to the creation of the new state; it was required to legitimize itself not only in the international political and legal arena, but also in the ideological aspect - by creating or restoring its identity as an obligatory addition and surplus to political and legal sovereignty. Independence was conceived of as a realization of people's right to independent statehood, expected for a long-term implementation of national identity, and – finally - as the possibility of complete political preservation and development of the nation. In the 90s, the officially adopted political discourses on national identity were introduced, along with a symbolic system for their representation (flag, anthem). New interpretations of history, new narratives and cults of heroes and martyrs were created or re-created. This process was accompanied by a very strong political and ideological competition between the three main discourses, interpreting in different ways the fact of independent statehood and representing it as:

- 1) an unprecedented new reality (the creation of the nation)
- 2) restoration of historical justice and return to the normal state of affairs, which was violated by the Bolsheviks (the restoration of the Republic of Armenia in 1918 – 1920)
- 3) raising the status of Armenia - its transformation from the semi-independent union republic into an independent state (hence the popular naming of modern Armenia as the Third Republic).

All three of these concepts, notwithstanding their inconsistency, were recognized by the state and society, creating a bizarre system of state symbols: the Republic of Armenia

Is the legal successor and continuer of Soviet Armenia;

inherited the state symbols of the Republic of 1918 – 1920; but at the same time

the main national holiday was recognized September 21 – Independence day to celebrate the day of the referendum of 1991, when, as it was stated by supporters of this trend, the Armenian people for the

first time became a political and civic nation.

Unfortunately, in the course of the further development, harmonious synthesis of these three concepts was not achieved. On the contrary, an archaistic primordial approach has prevailed more and more. Of course, the lack of adequate political strategy was doomed to be harmful for all the symbolic systems that are to be connected with it. At the same time, however, the opposite also is true: an exploitation of the already used symbols and myths without having the prospect for future is dangerous as it dilutes and wastes away the existing- very scarce now- political resources of the Armenian society. Thus, the primordial concept of the nation and identity, as well as the absence of the idea of nation-building and international cooperation negatively affects the capacity to suggest political projects, which would be in harmony with current challenges. In such case, there is no room for considering the nation as a political phenomenon; it can at best be understood as a cultural and historical entity and at worst, even as a biological phenomenon. Moreover, such conception causes the archaic reinterpretation of modern political institutions (president as head of the family, the State as a mother, elections as a festival, grandmother's parables as a basis for legislation, etc.). The current political symbolism of modern Armenia is becoming more formal and ritualized; in its essence it reminds of the processes of functioning of political symbols of the last years of the USSR. This can lead to the erosion of the concept of national identity and the very idea of an independent national statehood. Therefore, we consider it important to suggest an alternative approach based on our analyses of the existing politically and pragmatically motivated dynamic heterogeneous concepts of social solidarity and responsibility. Only as a result of such practices is it possible to expect the emergence of the political symbolism which will be adequate to the language of modern challenges and responses.

Սուրեն Զոլյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտ

**ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐԸ՝ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՓՆՏՐՏՈՒՔՆԵՐՈՒՄ**

Հայաստանի անկախացումը տեղի է ունեցել քաղաքական և գաղափարական բարդ իրավիճակում: 90-ականներին ձևավորվում են դիսկուրսներ և դրանց համապատասխանող պետական խորհրդանիշեր (զինանշան, օրհներգ), (վերա-) ստեղծվում են հերոսների և նահատակների պաշտամունքներ: Այս գործընթացը տեղի է ունենում քաղաքական և գաղափարական երեք հիմնական խոշոր դիսկուրսների միջև թեժ մրցակցության պայմաններում, անկախ պետականության ձեռքբերումը իմաստավորվում էր երեք տարբեր եղանակով («նոր» ազգի արարում, 1918-1920թթ. հանրապետության վերականգնում, հայոց պետականության բնականոն զարգացում): Ցավոք, այդ գաղափարների համատեղման փոխարեն վերջերս գերիշխող է դառնում ազգային ինքնության առասպելաբանական մեկնությունը՝ այն դիտարկվում է որպես հավիտենական և անփոփոխ երևույթ:

Сурен Золян
Доктор филологических наук, профессор
Институт философии, социологии и права НАН РА

**ПОЛИТИЧЕСКАЯ СИМВОЛИКА ТРЕТЬЕЙ
РЕСПУБЛИКИ: ВСЕ ЕЩЕ В ПОИСКАХ
ИДЕНТИЧНОСТИ**

Обретение Арменией независимости проходило в сложной политической и идеологической обстановке. В 90-ые годы соз-

даются дискурсы и вводится соответствующая государственная символика (герб, гимн), внедряются новые интерпретации истории, создаются и воссоздаются культы героев и мучеников. Этот процесс проходил в условиях жесткой политической и идеологической конкуренции между тремя основными дискурсами, по-разному интерпретирующими факт независимой государственности (создание «новой» нации, восстановление республики 1918 -1920 г.г., естественное развитие армянской государственности). К сожалению, вместо синтеза этих концепций произошел отход в сторону примордиалистского понимания национальной идентичности как вне-временного и самотождественного феномена.

Լիլիթ Մկրտչյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2005թթ.)

Կրթությունը մարդու անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է:

Մարդն առաջին հերթին կրթության և դրա արգասիքը հանդիսացող քաղաքակրթության արդյունք է: Մարդու զարգացման գործում առաջնահերթ կարևորություն ունի կրթական հայեցակետը, որի մեկնաբանման համար անհրաժեշտ է քննության առնել նոր ժամանակի մարդու ներդաշնակ զարգացման օրինաչափությունները, շարժիչ ուժերը, զարգացման գործընթացի կատա-

րելագործման վրա կրթության ու դաստիարակության ազդեցությունները:

Զարգացման գործընթացի շարժիչ ուժերը հասարակական պահանջմունքների, հետաքրքրությունների, ձգտումների, հնարավորությունների ու պայմանների հակադրամիասնությունն են: Անձի զարգացման գործում յուրահատուկ կարևորություն ունեն շարժառիթներն ու ներքին մղումները: Մարդը հասարակական միջավայրի ակտիվ գործիչ է, որ համապարփակ գործունեություն է ծավալում: Արտաքին ազդեցությունները ներգործելով մարդու գիտակցության ու զարգացման վրա՝ բեկվում են նրա ներքին էության մեջ ու համապատասխան արձագանք գտնում: Այդ պարագայում որոշակի դեր են խաղում կամքը, խառնվածքը, բնավորությունը, անհատական այլ հատկություններ: Անձի զարգացման շարժառիթները բազմազան են: Առանձնացվում են նյութական, հոգևոր ու հասարակական պահանջմունքները, դրդապատճառները, հետաքրքրությունները, համոզմունքները, ձրգտումները, գիտակցական կամ ենթագիտակցական մղումները: Մարդու գործունեությունը նպատակամետ բնույթ ունի: Նա ամենից առաջ գործում է ներքին պահանջմունքների թելադրանքով: Դրան նպաստում են համոզմունքները, ձգտումները, նպատակադրումը: Մարդու ձգտումները գոհացում ստանալու համար իրագործման ուղիներ են որոնում:

Հայաստանի անկախության հռչակումից հետո, տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, կարևորվում էր ժողովրդավարական և իրավական պետության կառուցումը, հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին ինտեգրվելը: Այս գերխնդիրը թելադրում էր անխուսափելի բարեփոխումներ հասարակական կյանքի մի շարք ոլորտներում: Մասնավորապես, Հայաստանի կրթական համակարգը պետք է դառնար մրցունակ և առաջատար զարգացող ոլորտ, ուր կառուցվածքային և բովանդակային բարեփոխումները անխուսափելի էին:

Лилит Мкртчян
Кандидат исторических наук, доцент
Ереванский Государственный Университет

**МОДЕРНИЗАЦИЯ ОБРАЗОВАНИЯ. ОБЩЕЕ
ОБРАЗОВАНИЕ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА
(1991-2005 ГГ.)**

Радикальные преобразования общественной жизни и политической жизни требуют потребности реформ образовательной системы. Образование - важный фактор в развитии человека. Оно создает широкие возможности и служит мерой человеческого интеллектуального и профессионального развития. Интеллектуальные и профессиональные требования людей и общества находятся в непрерывном развитии. Поэтому, образовательная система, которая стремится создавать и развивать человеческий капитал, также требует постоянного улучшения. Только в этом случае мы можем говорить об определенной гармонии образования и развития человека. После провозглашения независимости Армении, при условиях новых экономических и общественных отношений, были выдвинуты на первый план строительство демократического и юридического государства и процесс социально-экономической интеграции с глобальными тенденциями. Эта проблема потребовала неизбежных реформ во многих аспектах общественной жизни. В частности образовательная система Армении должна была стать конкурентоспособной и ведущей областью развития, где структурные и существенные реформы были неизбежны.

Lilit Mkrtchyan
Candidate of Historical Sciences, Associate Professor
Yerevan State University

**MODERNIZATION OF EDUCATION. THE PUBLIC
EDUCATION IN THE INDEPENDENT REPUBLIC OF
ARMENIA (1991-2005).**

Radical transformations of the social and political life require the necessity of reforms of educational system. Education is an important factor in human development. It creates wide opportunities and serves as a measure of human intellectual and professional development. Intellectual and professional requirements of individuals and society are in continuous development. Therefore, the educational system, that aims to create and develop the human capital, also requires permanent improvement. Only in this case we can talk about certain harmony of education and human development. After the proclamation of independence of Armenia, under the conditions of new economic and social relations, construction of democratic and legal state and the process of social and economic integration to global trends was highlighted. This challenge required the inevitable reforms in many aspects of social life. In particular, the educational system of Armenia had to become competitive and leading developing area, where structural and substantial reforms were inevitable.

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ

Ուսանողությունը՝ որպես հասարակության ուրույն սոցիալական խումբ և որպես երիտասարդական ենթամշակույթ, տարիների ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել:

20-րդ դարի 80-ական թվականներին ինտենսիվորեն կարևորվում էր բարձրագույն կրթության հետևանք հանդիսացող երիտասարդների հետագա նյութատեխնիկական ապահովվածությունը և բարեկեցությունը: Եթե 60-ականների ուսանողը հպարտ էր, որ ուսանող էր միայն այն բանի համար, որ դասվում է մտավորականների շարքը, ապա արդեն 80-ական թվականներին հասարակությունում ունեցած դիրքը որոշվում էր ոչ թե կրթությամբ, այլ նյութական բարեկեցությամբ: «Բարձրագույն կրթություն» ասելիս առաջին հերթին հասկանում էին նյութական ապահովվածության և տնտեսական բարեկեցության բարձր մակարդակ:

20-րդ դարի 90-ական թթ. մասնագիտությունների խորացող սոցիալական տարբերակման արդյունքում կառուցվեց, այսպես ասած, «մասնագիտությունների աստիճանակարգված մոդելը», որտեղ առաջին տեղերում էին «նոր մասնագիտությունները»՝ իրավաբան, տնտեսագետ, ֆինանսիստ, օտար լեզուների, ինֆորմատիկայի մասնագետ և այլն: Այս պայմաններում փլուզվում են խորհրդային ժառանգությամբ պայմանավորված գաղափարախոսական չափանիշները, որոնք բացի արտոնյալ սոցիալական կարգավիճակ և սիմվոլիկ հասարակական դիրք տալուց, այլևս ոչինչ չէին տալիս:

90-ական թթ. խորանում է ուսանողների սոցիալական բևեռվածությունը, ինչն ազդում է նաև հասարակական զարգաց-

ման անհամաչափության վրա: Դա պայմանավորվում է նրանով, որ շրջանների և գյուղերի երիտասարդ բնակիչների միայն փոքր մասին է հաջողվում ստանալ բարձրագույն կրթություն: Եվ, չնայած նրան, որ վերջիններիս մի մասը բուհն ավարտելուց հետո վերադառնում են իրենց բնակավայրեր, այնուամենայնիվ, որակյալ մասնագետները մնում են քաղաքում, իսկ մնացյալ կադրային ներուժը բավականին աղքատիկ է շրջանների զարգացումն ապահովելու համար:

90-ական թթ. ուսանողությունը, հայտնվելով տրանսֆորմացիոն և բեկումնային փոփոխությունների կիզակետում, բնական է, որ չէր կարող չկրել արժեքանորմատիվային համակարգի վերափոխման հետևանքները: Փոխվում է երիտասարդության վերաբերմունքը այնպիսի արժեքների նկատմամբ, ինչպիսիք են հատկապես ընտանիքը և պետությունը: Կտրուկ նվազում է ամուսնացած և երեխաներ ունեցող երիտասարդների տեսակարար կշիռը, իսկ պետության նկատմամբ ոչ այնքան դրական վերաբերմունքը՝ պայմանավորվում է մի շարք մասնագիտությունների պահանջարկի անբավարար մակարդակով:

Բարձրագույն կրթության վճարովի համակարգի ներդրումը ևս ազդեց երիտասարդության արժեքային ընկալումների վրա: Նրանք սկսեցին զգալ սոցիալական անարդարության և հասարակական կտրուկ շերտավորման հետևանքները: Արդյունքում աճեց այն ուսանողների տեսակարար կշիռը, ովքեր կրթությունը համատեղում էին լրացուցիչ աշխատանքի հետ: Այս միտումը դարձավ այնքան զանգվածային, որ մենք, ըստ էության, կարող ենք խոսել երիտասարդ ուսանողների կենսակերպի և կենսապայմանների փոփոխման մասին:

Հավանական է, որ լրացուցիչ աշխատանքը՝ ուսումից հետո, դառնում է ուսանողության երկրորդ հիմնական գործունեությունը: Ավելին, եթե 90-ականների սկզբին ուսանողները կատարում էին ժամանակավոր, պատահական աշխատանք, ապա

արդեն 90-ականների վերջին ուսանողները սկսեցին ուսումը համատեղել հարաբերականորեն մշտական աշխատանքի հետ:

Գլոբալիզացիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների հարաճուն զարգացման արդի պայմաններում, անշուշտ, չենք կարող անտեսել կրթական գործընթացների արդյունավետ կազմակերպման վրա վերջիններիս ազդեցությունը: Ժամանակակից ուսանողությունը մեծամասամբ շեշտադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների կառուցողական դերակատարությունը, ինչպես նաև համաշխարհային կրթական տարածություն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

Հասարակական-քաղաքական լայնամասշտաբ փոխակերպումների համատեքստում կարևորվում է նաև ուսանողության արժեհամակարգի փոփոխության հիմնահարցի դիտարկումը: Աստիճանաբար բարձրագույն կրթության վարկանիշի հարցը ձեռք բերեց զանգվածային բնույթ, որի հետևանքով շուկայում հայտնվեցին ոչ այնքան մեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններով շրջանավարտներ:

Գործնականում անհետանում է գիտելիքի ստացմամբ մոտիվացված բարձրագույն կրթության հայեցակարգը, փոխարենը մեծանում է կրթության մոտիվացիան՝ կապված նրա գործիքային ֆունկցիաների հետ՝ աշխատանք, հաջողություն, կարիերա: Բարձրագույն կրթության նկատմամբ հետաքրքրությունը պահպանվեց, ավելին, մեծացավ նրա դերակատարությունը ուսանողության արժեքային աստիճանակարգում: Միաժամանակ, աճում են բարձրագույն կրթության համակարգի դիսֆունկցիաները՝ կապված ուսանողների կողմից ստացած բարձրագույն կրթության և մասնագիտական պատրաստվածության անբավարարության հետ:

Վերախմաստավորվել են նաև գործատուների՝ երիտասարդ մասնագետների նկատմամբ պահանջները: Չնայած վերջին տարիների որոշակի բարելավման միտումներին, աշխատանքի շուկայում դեռևս առկա են պահանջարկի և առաջարկի միջև

ծավալային և կառուցվածքային անհամապատասխանություններ: Երկրում առկա գործազրկության ընդհանուր բարձր մակարդակը, հիմնականում առաջին անգամ աշխատանքի շուկա մուտք գործող անձանց համար, ավելի է բարդացնում եկամտաբեր աշխատանք գտնելու գործընթացը՝ զգալիորեն ավելացնելով երիտասարդների գործազրկության հարաբերական ռիսկը:

Сюзанна Егиазарян
Аспирант Института философии,
социологии и права НАН РА

АРМЯНСКОЕ СТУДЕНЧЕСТВО КАК ПОКОЛЕНИЕ НЕЗАВИСИМОСТИ

В данной статье подробно рассматривается студенчество как особая социальная группа и молодежная субкультура, описывается динамика ценностных изменений студентов на протяжении многих лет, а также их особенности как новое поколение независимости.

Syuzanna Yeghiazaryan
Phd student of the
Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

ARMENIAN STUDENTS AS A GENER OF INDEPENDANCE

This article introduces analyses of students as the particular social group and youth subculture, also the dynamics of their valueable changes over the years, and especially features of students as the generation of independence.

**ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ
ՔՄԱՆՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
(ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների
օրինակով)**

Երաժշտագետ-ֆոլկլորագետի բազմաոլորտ և բազմաբովանդակ գործունեության առանցքը, ինչպես հայտնի է, կազմում են ժողովրդական երաժշտության նմուշների հավաքչական աշխատանքները, հավաքագրված երաժշտական նյութի դասակարգումը, նոտագրումը, հրատարակումը և ուսումնասիրությունը:

Այս ոլորտներից կփորձենք ներկայացնել վերջին քսանհինգ տարիների ընթացքում հայ ժողովրդական երաժշտության ձայնագրյալ ժողովածուների հրատարակությունները, որոնք իրականացվել են հայ երաժշտական ֆոլկլորագիտության, մասնավորապես, երկու առավել հայտնի, արդեն երկար տարիներ անընդմեջ, եռանդուն, նաև արդյունավետ գործող կենտրոնների կողմից: Դրանք են՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ) ժողովրդական երաժշտության բաժինը և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը:

Այս կենտրոններում հրատարակության նախապատրաստվել և ապա, վերջին քսանհինգ տարիների ընթացքում թե՛ պետական հոգածությամբ, թե՛ տարբեր հովանավորների օգնությամբ լույս են տեսել հայ ժողովրդական երաժշտության շուրջ քառասուն տարբեր բովանդակության ձայնագրյալ ժողովածուներ:

Դրանցից որպես մեր հաղորդման խնդրո առարկա ընտրել ենք, մասնավորապես, ձայնագրյալ ժողովածուների երկու բազ-

մապրակ շարքեր, որոնք հետզհետե համալրվում են նոր պրակներով: Այդ շարքերն են՝ ԱԻ «Հայ ավանդական երաժշտություն» խորագրով մատենաշարը (տասներեք պրակ, լույս է տեսնում 2008 թվականից, գլխավոր խմբագիր՝ Կ. Խուդաբաշյան-Սարգսյան) և կոնսերվատորիայի «Հայ երգեր և նվագներ» խորագրով շարքը (տասներեք պրակ, լույս է տեսնում 1984 թվականից, գլխավոր խմբագիր՝ Ա. Փահլևանյան):

Պրակներում, մեծ մասամբ, հրատարակվել են անցյալում անտիպ նյութեր, հիմնականում հայ երաժշտական ֆոլկլորագիտության վերոհիշյալ կենտրոնների բազմահարուստ ձայնադարաններից, մասամբ և այլ պահոցներից: Հատկապես նշելի է ձայնադարաններում տասնյակ տարիներ պահպանված հայ երաժշտական ֆոլկլորագիտության դասականների՝ Սահակ Ամատունու, Ստեփան Դեմուրյանի, Ք. Կուշնարյանի, Արամ Քոչարյանի, նշանավոր ազգագրագետ-պարագետ Սրբուհի Լիսիցյանի արժեքավոր ձայնագրությունների լույս ընծայումը, որ հայ երաժշտագետ-ֆոլկլորագետների սերունդների բաղձալի երազանքներից էր:

Լայնածավալ է պրակներում զետեղված նմուշների մեղեդիական աշխարհագրությունը, որն ընդգրկում է հայոց թե՛ արևելյան, թե՛ արևմտյան ազգագրական շրջանները: Այս իմաստով շարքերը խիստ նպաստավոր են հայ երաժշտական ֆոլկլորագիտության կարևորագույն ոլորտի՝ ժողովրդական ստեղծագործության երաժշտական բարբառների ուսումնասիրության համար:

Շարքերում արտացոլված է նաև հայ ժողովրդական երաժշտության գրեթե ողջ բազմաժանր նկարագիրը. երգային և նվագարանային ճյուղերը և դրանց բազմապիսի տարատեսակները:

Խնդրո շարքերը հայ երաժշտական ֆոլկլորագիտության և, ընդհանուր առմամբ, հայրենի գիտության վերջին քսանհինգ տարիների աչքի ընկնող երևույթներից են: Միաժամանակ,

շարքերը համացանցում ընդգրկվելու դեպքում կարող են կայուն և արժանավոր տեղ գրավել միջազգային էթնոերաժշտագիտության բազմափարուստ ասպարեզում:

Анаит Багдасарян

Кандидат искусствоведения, доцент
Институт искусств НАН РА

**АРМЯНСКАЯ МУЗЫКАЛЬНАЯ ФОЛЬКЛОРИСТИКА
ЗА ПОСЛЕДНИЕ 25 ЛЕТ
(на примере нотированных сборников народной музыки)**

Предметом рассмотрения являются две изданные нотированные серии армянской народной музыки. Это – "Армянская традиционная музыка" (13 выпусков, НАН РА, Институт искусств) и "Армянские народные песни и наигрыши" (13 выпусков, Ереванская государственная консерватория им. Комитаса, кафедра армянской музыкальной фольклористики). В сериях, в основном опубликованы рукописные материалы. Охвачены различные этнографические районы Восточной и Западной Армении, отражено жанровое многообразие армянского музыкального фольклора.

Anahit Baghdasaryan

Candidate of Arts, Assistant professor
Institute of Art NAS RA

**ARMENIAN MUSICAL STUDY OF FOLKLORE OVER
THE PAST 25 YEARS
(by the example of notated collections of the folk music)**

The subject of review is two published notated series of the Armenian folk music: "Armenian traditional music" (13 volumes, NAS RA, Institute of Art) and "Armenian folk songs and tunes" (13 volumes,

Yerevan Komitas State conservatory, Department of the Armenian musical folklore). In the mentioned series, mainly handwritten materials are published. Various ethnographic regions of Eastern and Western Armenia are covered, a wide variety of genres of Armenian folk music is reflected.

Լիլիթ Արտեմյան

Արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ԼԵՎՈՆ ՉԱՌԻՇՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ, Հայկական երաժշտական համաժողովի նախագահ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Ալեքսանդրի Չաուշյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, հասարակական և մանկավարժական:

Ստեղծագործական գործունեություն

Ակտիվ ստեղծագործական գործունեության մեջ, որտեղ կոմպոզիտորը հավատարիմ է մնացել իրեն բնորոշ կոմպոզիտորական ուրույն գրելաոճին, գերակշռում են կամերային երաժշտության ժանրերը, այդ թվում՝ Լարային չորրորդ (1994), հինգերորդ (2012) և վեցերորդ (2015) կվարտետները, Տրիոն՝ դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար, Սոնատը մենակատար ջութակի համար (1997), «Երկխոսություն» պիեսը դաշնամուրի և ջութակի համար (2008), Սոնատը կլարնետի և դաշնամուրի համար (1996) և այլն:

Դաշնակահար կոմպոզիտորի ստեղծագործական հետա-

քրքրությունների կենտրոնում է շարունակում մնալ դաշնամուրային երաժշտությունը: Այս շրջանին են վերաբերում դաշնամուրային Երրորդ «Պատկերներ առանց ցուցահանդեսի» (2004) սոնատը և Երկրորդ սոնատի երկրորդ խմբագրությունը (2014), «Urbis et Orbis» (1997) և «Deja-vu» (2008) դաշնամուրային պիեսները: Ի դեպ «Պատկերներ առանց ցուցահանդեսի» ծրագրային դաշնամուրային Երրորդ սոնատը, որն արդեն ունի կատարողական հարուստ կենսագրություն և քանիցս կատարվել է հայ դաշնակահարների կողմից, բոլորովին վերջերս՝ Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպած՝ ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված Հայ ժամանակակից երաժշտության երրորդ՝ «Պրեմիերա» փառատոնի առաջին կամերային համերգի ժամանակ, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հնչեց մեր մեկնաբանությամբ:

Հասարակական գործունեություն

1994թ. Լ.Չաուշյանը հիմնադրել և առ այսօր ղեկավարում է Հայկական երաժշտական համաժողովը՝ հասարակական կազմակերպություն, որի ամենակարևոր նպատակը հայ ժամանակակից դասական երաժշտության զարգացումն ու տարածումն է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Համաժողովը բաղկացած է ինչպես կոմպոզիտորներից և երաժշտագետներից, այնպես էլ կատարողներից: Կազմավորման առաջին փուլում այն համախմբել և միավորել է երաժիշտ – համախոհների՝ կոմպոզիտորներ Լևոն Չաուշյանին, Մարտին Վարդազարյանին, Վահրամ Բաբայանին, Երվանդ Երկանյանին, Ռուբեն Մարգարյանին և երաժշտագետ Մարգարիտա Ռուխկյանին: Հետզհետե կազմակերպությունը համալրվել է նորանոր ստեղծագործող անհատներով:

Համաժողովը սկզբնավորման առաջին տարիներից առ այսօր ծավալվել է բուռն համերգային գործունեություն ոչ միայն Հայաստանում, այլև Բելգիայում (1999), Վրաստանում (2001), Հունգարիայում (2004), Բուլղարիայում (2009), ԱՄՆ-ում (2003),

Ռուսաստանում, մի կողմից՝ պրոպագանդելով հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները, մյուս կողմից՝ մշակութային երկխոսություն ստեղծելով վերոնշյալ երկրների ու հայ երաժիշտների միջև: Լ.Չաուշյանի ջանքերով թողարկվել է բացառապես հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների ձայնագրություններից բաղկացած 9 խտասալիկ: Համաժողովի գործունեության կարևորագույն ուղղություններից է ստեղծագործությունների լույս ընծայումը. հրատարակվել է ավելի քան 30 ժողովածու:

Մանկավարժական գործունեություն

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ամբիոնի պրոֆեսոր Լևոն Չաուշյանը զբաղվում է կադրերի պատրաստման գործով. նրա ստեղծագործական դասարանում են որպես կոմպոզիտորներ ձևավորվել հայ կոմպոզիտորական դպրոցի երիտասարդական թևը՝ ներկայացնող մի շարք ստեղծագործողներ (Արսեն Բաբաջանյան, Տիգրան Ասլանյան, Արփինե Կալինինա և ուրիշներ):

2016թ. հոբելյանական է նաև Լ.Չաուշյանի համար. մայիսի 10-ին լրանում է նրա ծննդյան 70-ամյա հոբելյանը: Շնորհավորում ենք կոմպոզիտորին՝ մաղթելով քաջ առողջություն և նորաճող ստեղծագործական ձեռքբերումներ:

Лилит Артемьян

Кандидат искусствоведения,

Институт искусств НАН РА

**ДЕЯТЕЛЬНОСТЬ ЛЕВОНА ЧАУШЯНА В ПЕРИОД
НЕЗАВИСИМОСТИ РА**

Деятельность композитора, пианиста, общественного деятеля, председателя Армянской музыкальной ассамблеи, профессора кафедры композиции Ереванской государственной консерватории имени Комитаса, Заслуженного деятеля искусств РА Левона

Чаушяна в период независимости РА развивалась в трех основных направлениях: творческом, общественном и педагогическом.

В 1994 г. Л. Чаушян основал Армянскую музыкальную ассамблею и по сей день руководит этой общественной организацией, имеющей целью развитие и распространение армянской современной классической музыки в Армении и за рубежом. Ассамблея организовала и провела гастрольные концерты в Армении, Бельгии, Грузии, Венгрии, Болгарии, США, России, выпустила 9 компактных дисков, опубликовала более 30 сборников.

Lilit Artemyan
Candidate of Arts
Institute of Arts NAS RA

LEVON CHAUSHYAN'S CAREER IN THE YEARS OF INDEPENDENCE OF RA

The career of the composer, pianist, public figure, President of the Armenian Music Assembly, Honored Figure of Arts of Armenia, Professor of the Chair of Composition at Yerevan Komitas State Conservatory, Levon Chaushyan evolved in three areas: creative work, public work and teaching.

In 1994, Prof. Chaushyan founded (and has been heading since) the non-governmental organization Armenian Music Assembly, whose aim is to promote contemporary Armenian classical music. The Assembly has organized and given guest concerts in Armenia, Belgium, Georgia, Hungary, Bulgaria, USA, Russia; issued 9 CDs; published over 30 collections.

Տաթևիկ Շախկույան
Արվեստագիտության թեկնածու,
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ.
ՔԱՌՈՐԴԱՐԱՆՑԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ**

Հայոց պետականության քառորդ դարի նշանակալից իրադարձություններից մեկը դարձավ հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, երաժշտագետ Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտի հիմնադրումը և գործունեության սկզբնավորումը: Անկախ Հայաստանի առաջին թանգարան-ինստիտուտի նպատակն է համակողմանիորեն հետազոտել և ներկայացնել Կոմիտասի կյանքն ու գործունեության տարբեր ոլորտները, հանրահռչակել նրա բազմակողմանի երաժշտական ժառանգությունը:

2013թ. մայիսի 30-ին, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկով որոշվեց կառուցել Կոմիտասի թանգարան-ինստիտուտ: 2015թ. հունվարի 29-ին կայացավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի պաշտոնական բացումը: Այն գտնվում է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգում և կառուցվել է նախկին մշակույթի պալատի հիման վրա: Վերջինս 1949թ. նախագծել է Ճարտարապետ Կորյուն Հակոբյանը, իսկ նորաստեղծ կառույցի ճարտարապետը Արթուր Մեսչյանն է: Ֆինանսական ծախսերը հոգացել են «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական և «Լույս» հիմնադրամները:

Կառույցն ունի մշտական և ժամանակավոր ցուցադրություններ, համերգասրահ, գրադարան: Մշտական ցուցադրության ութ սրահներն արտացոլում են Կոմիտասի կյանքի ուղին,

նրա կոմպոզիտորական, երաժշտագիտական, բանահավաքչական և կատարողական գործունեությունը: Յուցասրահներում հնչում է կոմպոզիտորի երաժշտությունը: Յուցադրության հեղինակը և համադրողը Վարդան Կարապետյանն է, ձևավորող նկարիչը՝ Ալբերտո Տոբեկկոն: Ծրագիրն իրականացրել է Թանգարանների միջազգային խորհրդի (ICOM) Հայաստանի ազգային կոմիտեն: Յուցադրության կազմակերպման համար թանգարանային առարկաներ են հանձնվել Եդիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի ազգային պատկերասրահի և Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներից: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հավաքածուն պարբերաբար համալրվում է նոր նմուշներով՝ աշխարհի տարբեր անկյուններից:

Ժամանակավոր ցուցադրության սրահում ներկայացվում են հայ մշակույթին ու հայ իրականությանն առնչվող տարբեր ցուցադրություններ:

Գիտահետազոտական ինստիտուտը նպատակ ունի համակարգված հետազոտելու Կոմիտասի կյանքը և գործունեությունը, հայ հոգևոր երաժշտության տարբեր ճյուղերի ու դպրոցների պատմական և տեսական խնդիրներ՝ ըստ Կոմիտասի գիտական մոտեցումների: Ստեղծվում է թվային բազա, որն ընդգրկում է Կոմիտասին և հայ երաժշտությանն առնչվող նյութեր:

Համերգասրահում պարբերաբար իրականացվում են համերգներ, գիտական դասախոսություններ ու հանդիպումներ թե՛ երաժշտագետների ու կոմպոզիտորների, թե՛ արվեստի այլ բնագավառների գործիչների հետ, ինչպես նաև զանազան կրթական ծրագրեր, որոնք միաված են հանրահռչակելու ինչպես Կոմիտասի ժառանգությունը, այնպես էլ առհասարակ հայ երաժշտությունն ու հայկական մշակույթը:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտն իր գոյության մեկուկես տարվա ընթացքում զգալի ներդրում է ունեցել հայ մշակույթի հետազոտության և հանրահռչակման ասպարեզում:

Բնական է, որ գիտական հաստատության համար մեկուկես տարին փոքր ժամանակահատված է՝ զգալի արդյունքներ գրանցելու համար: Սակայն արդեն իսկ ակնհայտ է, որ անկախ Հայաստանում հիմնադրված հաստատությունը կարևոր դեր է խաղալու թե՛ հայ իրականության մեջ, թե՛ նաև համաշխարհային հարթակներում Կոմիտասի և հայ երաժշտության հանրահռչակման ուղղությամբ:

Татевик Шахкулян
Кандидат искусствоведения,
Музей-институт Комитаса,
Институт искусств НАН РА

**МУЗЕЙ-ИНСТИТУТ КОМИТАСА:
ПЕРВЫЙ МУЗЕЙ ДВАДЦАТИПЯТИЛЕТНЕЙ
ГОСУДАРСТВЕННОСТИ**

Музей-институт Комитаса был основан в Ереване в январе 2015 г. и стал первым музеем независимой Армении. Он включает не только экспозиции постоянных и временных выставок, но и научный центр, целью которого является изучение жизни и творчества Комитаса, а также других отраслей Армянской музыки связанных с деятельностью Комитаса – в основном фольклор и средневековая музыка. Концертный зал музея-института предоставляет возможность пропагандирования наследия Комитаса и вообще Армянской музыки через концерты, научные лекции, разные образовательные программы. Очевидно, что это учреждение и в будущем продолжит привнести свой вклад в исследовании и распространении музыки Комитаса и армянской музыки в целом.

Tatevik Shakhkulyan
Candidate of Arts, Komitas Museum-Institute,
Institute of Arts NAS of RA

**KOMITAS MUSEUM-INSTITUTE
THE FIRST MUSEUM OF QUARTER-CENTURY STATE**

In January 2015, Komitas Museum-Institute was founded in Yerevan, which became the first museum in independent Armenia. This organization includes not only expositions of permanent and temporary exhibitions, but also research center, which has the purpose of exploring Komitas's life and activity, as well as other branches of Armenian music related to Komitas – mostly folklore and medieval music. The concert hall provides opportunity of propagandizing Komitas's heritage and Armenian music in general, through concerts, lectures, various types of educational programs. Evidently, this institution will in the future continue increasing its input in research and dissemination of Komitas and Armenian music.

Դավիթ Քերթմենյան
Հարտարապետության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

Ժամանակակից Հարտարապետությունը արդի Հարտարապետության նորագույն փուլն է: Այն ստեղծեց նոր որակ և արտահայտվեց Հարտարապետության բազմաթիվ ոլորտներում: Դրանցից են Հայաստանի անկախության տարիներին դրսևոր-

ված տրանսպորտային կառույցների վերափոխումների նոր զարգացումները:

Հայտնի է, որ 1990-ական թվականներին տեղի ունեցան միջազգային զարգացումներ: Այս ժամանակներում մեծ աշխուժացում նկատվեց երկրների առևտրական կապերի զարգացման մեջ: Ստեղծվեցին առևտրական շենքերի նոր տեսակներ, որոնք խրախուսեցին միջցամաքային համագործակցությունը: Վերջինի ապացույցները հայկական իրականությունում ոչ միայն անկախության տարիներին կառուցվող բազմաթիվ մոլերն են, այլև՝ ռեզիդենալ և ներքաղաքային ցանցի փոփոխությունները: Փաստորեն, Հայաստանում առևտրական կառույցների, ինչպես նաև տրանսպորտային համալիրների զարգացումները (Զվարթնոց օդանավակայանի ընդարձակումը, հայկական երկաթգծի ցանցի ընդարձակման ձգտումները) ոչ միայն նորաստեղծ հանրապետության կայացման ասպեկտներից են, այլ նաև տարածքային զարգացումների թելադրանքով միջազգային անհրաժեշտ միջոցառումներ: Վերջինները շղթայական ռեակցիայի օրինաչափությամբ իրենց արտացոլումը գտան տրանսպորտային համակառույցների և քաղաքների ու այլ բնակավայրերի կապը ապահովող քաղաքային և արտաքաղաքային ճանապարհաշինական ինֆրաստրուկտուրաների վերափոխումներում: Նշված և այլ հարցերի հետազոտումը գիտական նորույթ է, նրա մասնագիտական՝ միջավայրաստեղծ ուսումնասիրությունը տվյալ հաղորդման գիտական խնդիրն է, որ կատարվում է հայկական ժամանակակից ճարտարապետության համապատասխան օրինակների վերլուծությամբ: Դրանք են՝ նորակառույց էստակատները, մոլերը, օդանավակայանները, քաղաքային և արտաքաղաքային կամուրջներն ու կոմունիկացիոն աշտարակները, հրապարակները, պողոտաներն ու հետիոտն փողոցները, միջավայրակայուն ժամանցի վայրերը և թանգարանները:

Նշվածները նորություն բերեցին հայկական արդի ճարտարապետության մեջ: Դրանց տեսապատմական՝ քննական, ներ-

մուծումն ու համակարգումը անհետաձգելի անհրաժեշտություն է անկախության տարիների ճարտարապետության կայացման գործընթացում, որը տվյալ հաղորդման մեջ կատարվում է հայկական և միջազգային զուգահեռների համեմատական մեթոդով:

Կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ Հայաստանի անկախության տարիների ակնարկվող զարգացումների հետևյալ առանձնահատկությունները:

Երևանի Զվարթնոց և Ստեփանակերտի օդանավակայանները ճարտարապետականորեն թևակոխեցին բարձր տեխնոլոգիաների ասպարեզ: Բայց դեռևս նրանք համադրված չեն քաղաքային տրանսպորտի ցանցերին, ինչպեսին հանդիպում է Շառլ Դըգոլի օդանավակայանի «ինտերշեյնջ մոդուլի» կամ Լիոն-Սատուլաս օդանավակայանի TGV կայարանի օրինակներում և այլն: Նշելու հանգամանք է, որ տվյալ առաջադեմ լուծումը Հայաստանում իր օրինակներն ունի խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված Սասունցի Դավիթ մետրոյի և երկաթգծի կայարանի, ինչպես նաև վերջերս կառուցված Երիտասարդական ու Ռոսսիա մոլերի օրինակներում:

Իրենց պրոֆեսիոնալ լուծումներով ուշագրավ են Երևանի ճանապարհային ցանցի անկախության տարիների բազմամակարդակ վերակառուցումները, ինչպես նաև վերգետնյա ու ստորգետնյա բազմաթիվ անցումները, որոնք գերազանցապես իրականացվեցին երկաթբետոնե ճարտարապետությամբ:

Ուշադրության են արժանի քաղաքային տարածքներում քաղաքաշինական վերակառուցումներով իրականացված նոր հրապարակները, որոնք տրանսպորտային երթևեկը թեթևացնելով հանդերձ, ունեցան հետաքրքիր անսամբլային դրսևորումներ: Անկախության տարիների հրապարակները մեծամասամբ նախորդ ժամանակաշրջանից ժառանգված համալիրների վերակառուցումներ են (Գյումրի, Ստեփանակերտ, Շուշի, Երևանի Ստեփան Շահումյանի անվան հրապարակը): Նորակառույց

հրապարակների թվում են Երևանի նոր քաղաքապետարանի և Մպիտակ քաղաքի հրապարակները:

Անկախության ժամանակաշրջանի ճարտարապետական իրադարձություններ են Հյուսիսային և Գլխավոր պողոտաների կառուցապատումները: Կարևոր են նաև քաղաքային տարածքում հետիոտն արահետների ստեղծումը, որոնք նոր երանգ ավելացրին մայրաքաղաքի կառուցապատմանը:

Սակավ են քաղաքային և պերիֆերիալ այգեպատման օրինակները: Այնուամենայնիվ, նրանք անկախության տարիներին ունեցան երկու կարևոր նվաճումներ հանձինս Պողոսյան պարտեզների և Կասկադ-Քաֆեսջյան թանգարանային համալիրի:

Давид Кертменджян
Доктор архитектуры, профессор
Институт искусств НАН РА

НОВЫЕ РАЗВИТИЯ В СОВРЕМЕННОЙ АРХИТЕКТУРЕ АРМЕНИИ ПЕРИОДА НЕЗАВИСИМОСТИ

В последствии исторических события 1990-ых годов, происходил мировое оживление торговых связей и формировались новые типы торговых зданий, которые поддерживали этот международный тренд. Очевидным доказательством этого оживления являлись как строительство разнообразных торговых комплексов, так и планировочные изменения в структуре городов Армении периода независимости. Примерами этого процесса служат транспортные комплексы, транспортные инфраструктуры, площади, новые променады и пешеходные улицы, разные парки и т.п.. Представленная тема новая и актуальная. Целью и задачами данной работы являются выявление и анализ выше указанных зданий и городских зон. Работа выполнена методом сопоставления архитектурных параллелей.

David Kertmenjian
Doctor of Architecture, Professor
Institute of Arts NAS RA

NEW DEVELOPMENTS OF ARMENIAN MODERN ARCHITECTURE FROM INDEPENDENCE PERIOD

Following the historical evidences from 1990-ies, it is fact that there was notable rise in international commercial connections. However created new types of trade buildings which backed the intercontinental indicated cooperation. The vital evidences of the matter not only are the generously built malls, but also the alterations performed in the planning networks of the Armenian reality nowadays. However as a chain of successive reactions this process reflected in construction activities of Armenia from independence period, including the transportation complexes and transportation infrastructures either in urban or regional territories. The presented issue is new. The research of its environmental value is very urgent and is the main problem and objective of this study which conducts the analysis of contemporary instances, such as: airports, squares, promenades and pedestrian streets, sustainable urban and peripheral parks etc.

Арсен Амбарцумов
Кандидат искусствоведения,
Институт искусств НАН РА

АРМЯНСКИЙ КИНЕМАТОГРАФ. МОДЕЛЬ РАЗВИТИЯ

Свобода – это величайшее благо, данное человеку. Но при определенных обстоятельствах человек должен завоевывать ее вновь. В жизни всегда необходимо доказывать, что ты достоин свободы и независимости, которые имеешь, как умением воевать,

так и экономическими, политическими и другими сферами общественной жизни и деятельности. Не является исключением и искусство, и киноискусство в частности. Учитывая сложившуюся ситуацию в армянском кино, в этой статье мы попытаемся наметить модель развития национального кинематографа.

Какой кинематограф мы имеем сейчас? С одной стороны, это полнометражные фильмы и сериалы, в которых показана та или иная бытовая ситуация, часто в натуралистической интерпретации.

С другой стороны, это попытки снимать фильмы, рассчитанные на узкий круг зрителя. Так сказать, артхаузное кино, которое в то же время не выдерживают критики.

Новое время диктует новые законы. Невозможно и неправильно оставаться в тени от мирового кинопроцесса, так долго переживая упадок.

Модель есть теоретическая система, служащая выявлению особенностей изучаемого объекта (фильма).

Говоря об особенностях модели как структуры изучаемого объекта, становится очевидным, что моделирование есть научный метод, используемый в познании, в частности, в выявлении признаков исследуемого объекта (фильма), или же явления. Что в свою очередь есть следствие того, что метод моделирования может быть применен в любой науке, и в киноведении (как науке о кино) в том числе.

Модель есть аналог изучаемого объекта. Это такая форма организации материала, которая делает исследуемый объект наиболее доступным для обозрения. Она имеет четко выстроенную структуру, отражающую основные параметры в строении объекта, в данном случае фильма. Такой подход преследует определенную цель: подчеркнуть особенность взаимодействия частей и целого, обеспечивающих развитие данной структуры. Что, в свою очередь, предполагает строение динамической системы, способной к определенным видоизменениям. "...модель – всегда некоторое конк-

ретное построение ... доступное для обозрения и практического действия”.

В кино это предполагает а) использование конкретных произведений, как аналогов для создания теоретической модели, б) связь компонентов фильма на уровне семантических единиц, в) единство всех частей произведения, обеспечивающих ему целостность.

Существуют ли прецеденты использования моделей в искусстве? Да, существуют. Еще Аристотель в своей “Поэтике” отмечал, что искусство создается путем подражания. “Сочинение эпоса, трагедий, а также комедий и дифирамбов, равно как и большая часть авлетики с кифаристикой, - все это в целом не что иное, как подражания...”

Действительность здесь предстает для художника некой моделью, на основе которой он и строит свое произведение. Эта мысль была развита Ю. Лотманом в его книге “Структура художественного текста”. “Идея в искусстве всегда модель, ибо она воссоздает образ действительности”.

В. Шкловский выделял произведения великих писателей и драматургов, написанных на основе новелл и мифов. “Шекспир не создавал сюжетов, он брал их и переосмысливал. Его великие драмы являлись разрушением, переосмысливанием прежде существующих драм и новелл”.

Цель, преследуемая нами, – поднять уровень снимаемых в Армении фильмов на более высокую ступень. И в этом плане фильмы американских режиссеров представляются нам идеальной моделью для развития национальной кинематографии. Бинарная основа американских фильмов, выраженная в их строении, является основным фактором, обеспечивающим фильму успех.

Американское кино внационально. Национальное своеобразие, колорит создает именно режиссер, снимающий фильм. “Крестный отец” Копполы – фильм, снятый в Америке, но фильм об итальянской семье с ее устоями и традициями. И таких примеров

можно привести предостаточно. Американское кино в этом плане более свободно. Идеологию создает сам художник. Но, имея при этом определенную наиболее приемлемую конструкцию, фильм с одной стороны понятен каждому зрителю, с другой стороны является произведением искусства.

Подчеркнем: нас интересуют существенные признаки в строении подобных произведений, а не формальная сторона вопроса (когда в фильме рассчитано, что произойдет через 20 или 30 минут после его начала).

Выявление семантических единиц позволит определить значение выразительных средств, используемых режиссером (плана, ракурса, цвета, музыки и т.д.), что в свою очередь даст возможность выделить композиционные особенности анализируемых фильмов. Все это приведет к созданию “потребительского” или же “воспринимаемого фильма”.

Արսեն Համբարձումով

Արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈՂԵԼԸ

Մեր օրերում հայկական կինեմատոգրաֆը դժվար ժամանակներ է ապրում: Հանրապետությունում նկարահանվում են ֆիլմեր, սակայն նրանց որակը հեռու է բարձր լինելուց: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ այս հոդվածում մենք կանդրադառնանք ազգային կինեմատոգրաֆի զարգացման մոդելին: Հոդվածի հիմքում ընկած են ամերիկյան արտադրության ֆիլմեր, որոնք երկակի բնույթ են կրում, ինչը կհանգեցնի «սպառողական» կամ «ընկալվող» ֆիլմի ի հայտ գալուն:

ARMENIAN CINEMATOGRAPHY. DEVELOPMENT MODEL

Nowadays Armenian cinematography suffers hard times. Generally, films are shot in the republic but their level is far from being high. Taking into account the actual situation we'll talk about the development of the national cinematography model in the current article. Some American films which are binary by themselves will be taken as a base leading to the show up of a "consumer" or "perceivable" film.

Հասմիկ Հարությունյան

Արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Ավանդական երաժշտության՝ հիմնականում ժողովրդական ստեղծագործության գլխավոր նպատակները վեր են գեղարվեստական ոլորտներից, թեև իրականացվում են նախ և առաջ գեղարվեստական ճանապարհներով, ինչը կասկածից դուրս է:

Ի մի բերելով ժողովրդական երաժշտական ստեղծագործության բազմաթիվ մասնավոր կոչումները՝ գալիս ենք այն եզրակացության, որ նրա գերագույն գործառույթը մարդկայնության վերարտադրությունն է մարդու մեջ: Ոչ թե առհասարակ վերացական մարդկայնությունը, այլ բավական կոնկրետ, պատմա-

կանոններն տվյալ մշակութային ավանդույթով նախորոշվածը, որին այսպես թե այնպես պետք է հաղորդակցվի յուրաքանչյուր ձևավորվող անհատականություն: Այսպիսով, կարելի է պնդել, որ ժողովրդական երգը, ինչպես առհասարակ ժողովրդական ստեղծագործությունը, ապրում և գործառնում է գրեթե օրգանական բնության օրենքներով: Ուրեմն, որպես «կենդանի օրգանիզմ», ժողովրդական երգը գոյակցում է արտաքին երևույթների որոշ տարրերի հետ, դրանց յուրացման շնորհիվ պահպանելով ստեղծագործության հորինվածքի ողնուցը կամ հենքը:

Ժամանակը շատ բարդ ու ազդու գործոն է ավանդական, ոչ նյութական մշակույթի ցանկացած դրսևորման, առավել ևս ժողովրդական երգի գոյատևման և պահպանման գործում:

Ժողովրդական երգի կենսատու միջավայրի փոփոխման և մշակութային էկոլոգիային սպառնացող որոշ հիմնախնդիրների համատեքստում փորձել ենք դիտարկել Շիրակի մի շարք գյուղական համայնքներում «ապրող» երգային բանահյուսության առանձնահատուկ դրսևորումները:

Պատմական, աշխարհաքաղաքական իրողությունների բերումով XIXդ. կեսին – XXդ. սկզբին Շիրակը դարձավ ազգային վառ դիմագիծ կրող արևմտահայության մի զգալի հատվածի նոր հանգրվանը, որտեղ հնարավոր եղավ անդառնալի կորստից փրկել և պահպանել էթնիկ մշակույթի՝ ազգագրության և բանահյուսության հարուստ ժառանգությունը: Վերջինիս ուսումնասիրությունը խորհրդային տարիներից հայ գիտական մտքի տիրույթում է և այսօր էլ որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ արևմտահայության հոսքը դեպի Շիրակի տարածաշրջան իր հետ բերել է մշակութային յուրահատուկ վառ գծեր: Հայրենագրկված արևմտահայության էթնիկ ինքնության կարևորագույն տարրերը դարերի հոլովույթում ձևավորվել և զարգացել էին նաև ժողովրդական երգերի մեջ: Արտահայտչական անսահմանափակ հնարավորություններ ունեցող և ժանրային որոշակի համակարգի մեջ զարգացող այս

արվեստը հատկապես գյուղական միջավայրում նաև տեղային ավանդույթի բացառիկ կրողն է: Բանավոր ավանդված ժողովրդական երգը համարվում է հոգևոր ժառանգություն, պատմական հիշողություն, ինչպես նաև գեղարվեստական մտածողության տեսակ, որը ցանկացած պահի կարող է նորովի կերպավորվել:

Ժողովրդական երգերի մի մեծ խումբը պետք է դիտել որպես նախորդ սերունդներից հաջորդին փոխանցված ժառանգություն: Հետևաբար, այս երգերը մեծ մասամբ ապրում ու գոյատևում են որպես հիշողություն: Սրանով է պայմանավորվում երգերի ժանրային համակարգի փոխակերպված պատկերը. պահպանվել են ընտրովի, նախասիրված ժանրերը: Իր ժանրային կենսունակությամբ բացառիկ տեղ է գրավում պարերգի ժանրը: Հայ բազմադարյա մշակություն մեծ է եղել ժողովրդական գեղեկական պարերգերի երաժշտական, պարային ու բանաստեղծական արվեստի նշանակությունը՝ որպես ժողովրդի արվեստի ամենահարազատ, ամենահուսալի ու կենարար էլակետային ակունք: Շիրակի տարբեր համայնքներում այն այսօր էլ հանդիպում է խաղ, խանա, թաղալո, մանի անվանումներով: Տարածված են ինչպես կրկնատողերով, կրկնակներով, այնպես էլ առանց կրկնությունների խաղիկները՝ պարզ մեղեդային հորինվածքներով: Դրանց որոշ նմուշներ առանձնացել են տարբեր ծիսակարգերից և ապրում են ինքնուրույն կյանքով: Կարևոր արտահայտչականություն ունեն շեշտված վանկերի համաչափ և ոչ համաչափ հարաբերակցությունները: Ժանրի կենսունակությունը պայմանավորված է նախ կրկնակների ու կրկնատողերի բանաձևված բաղադրիչների առկայությամբ, ապա նաև բովանդակային բազմազանությամբ: Այս է պատճառը, որ պարերգի ժանրին են միահյուսվել նաև ծիսական և կենցաղային տարբեր իրավիճակների երգեր: Փոքրիկ խաղիկների կողքին պահպանվել են նաև ծանր պարերգերի՝ գովընդների, եզակի նմուշներ: Բազմազան են նաև ծիսական երգերը: Դրանց մեջ գերակշռում են

հարսանեկան և Համբարձման տոնի երգերը: Վիպական երգերի շրջանակը սահմանափակվում է աշուղական սիրավեպերի, ինչպես նաև առանձին անհատ աշուղների երգերի շրջանակով: Թեև սակավաթիվ, սակայն երգաստեղծության կենդանի ավանդույթով ստեղծված երգերի նմուշներ հանդիպում են: Դրանք, անշուշտ, անհատ երգասացների տաղանդի արգասիքն է: Կարևոր է այն, որ այդ երգերը, արարվելով համայնքային միկրոմիջավայրի մեջ, կատարվում են որպես ավանդական դասական նմուշներ: Այս առումով բացառիկ տեղ են գրավում օրորներն ու ողբերգերը, որոնց ժանրային առանձնահատկությունները հնարավորություն են տալիս ասացողին ազատորեն ստեղծագործելու և անկաշկանդ շարադրելու երաժշտաբանաստեղծական հորինվածքը՝ ըստ տվյալ պահին ունեցած ապրումների և զգայական վիճակի:

Ժողովրդական երաժշտության մյուս ժանրերի նման, ավանդական պարը ևս կրել է գործառության և զեղազիտական նոր որակներ:

Асмик Арутюнян

Кандидат искусствоведения,
Ширакский центр арменоведческих
исследований НАН РА

СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ ТРАДИЦИОННОЙ МУЗЫКИ ШИРАКА

В разных сельских общинах Ширака и ныне проживают представители поколений армян–переселенцев (1850-1915 гг.) из Западной Армении, которые продолжают сохранять уникальные образцы музыкального фольклора своих предков. Это разные жанры песенной и инструментальной музыки. В статье представлены жанровые и типологические особенности образцов современного песенного фольклора Ширака, присущие живой музыкальной традиции выходцев из Муша и Алашкерта. Благодаря сохранению

этого уникального наследства, продолжают развиваться живительные традиции песнетворчества фольклорной классики.

Hasmik Harutyunyan

Candidate of Arts

Shirak Center of Armenian Studies NAS RA

MODERN MANIFESTATIONS OF SHIRAK'S TRADITION MUSIC

In different rural communities of Shirak region nowadays live representatives of the Armenain generation who have immigrated from Western Armenia and bear unique musical specimen. They are folk and national multi-genre song types and musical instrumental works. In the article we have touched upon 100 folk songs compiled from the folkloristic material organized in about 20 communities of Shirak region in 2015 March-April, that not only give us common notion of the song tradition of our compatriots migrated from Moush and Alashkert, in 2015, but they also certify that the tradition of folk song creativity is alive and coexists next to the very different modern cultural manifestations.

Նարինե Սահակյան

Արվեստագիտության թեկնածու,

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

ՂԱԶԱՐՈՍ ՄԱՐՅԱՆԻ՝ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Զեկուցման մեջ ներկայացվում է անկախ Հայաստանի առաջին տասնամյակի երաժշտական մշակույթը, գեղարվեստական մտածողության միտումները, հայ կոմպոզիտորների՝

հիշյալ շրջանի ստեղծագործական հետաքրքրությունների առանցքը, երաժշտական լեքսիկան: Քննվում են Ղ.Սարյանի՝ XX դարի վերջին տասնամյակում գրված «Երեք պոստյուդ», «Պասակալիա», «Andante և Presto» երկերը, ստեղծագործություններ, որոնք ժամանակի արձագանքն էին, 1990-ականների իրականության՝ նորանկախ պետության, Արցախյան հերոսամարտի և արվեստագետի անձնական ողբերգությամբ պայմանավորված ապրումների արտացոլումը:

Տարիներ շարունակ Հայաստանը ինքնիշխան, ազատ ու անկախ տեսնելու երազանքն ունեցած և դրա իրագործումը կարծես տեսած Ղ.Սարյանի մտքերն ու զգացումներն իրենց դրսևորումը գտան հեղինակի «Երեք պոստյուդ» դաշնամուրային շարքում: Այդ մասին կարելի է դատել անգամ ըստ նախնական մտահղացման պոստյուդներին տրված վերնագրերից՝ «Հոգու հարություն», «Կեցության իմաստություն» և «Հավատ և ապագա»: Պոստյուդներին բնորոշ է երաժշտական նոր լեքսիկայի և ազգային լադահարմոնիկ մտածողության բնորոշ ինտոնացիոն որոշակի դաշտի սինթեզը, որ Սարյան-կոմպոզիտորի ստեղծագործական ոճի կարևոր գծերից մեկն է:

1994-ին ստեղծվեց XX դարի երկրորդ կեսի հայ երաժշտության, թերևս, ամենաողբերգական և, միևնույն ժամանակ, լուսավոր ստեղծագործություններից մեկը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Պասակալիան», որի հիմքում կորստի ցավի տառապանքում մկրտված հոգու ասելիքն է, ողբերգության հաղթահարման կենսափիլիսոփայությունը: Այս երկում միավորվում են սերիական տեխնիկան և նոր դասական պարզությունը, խաչվում են ողբերգական զգացմունքային խտացված լարումը, ներփակ քնարականությունը, ներքին զսպվածությունը:

1997-ին է վերաբերում հայ երաժշտամշակույթի ամենացայտուն ստեղծագործություններից մեկի՝ ջութակի և կամերային նվագախմբի համար գրված «Andante և Presto» ստեղծագործության ծնունդը: Այս երկը, լինելով Ղ.Սարյանի վերջին արա-

րումը՝ տարբեր շերտերում իր մեջ սինթեզում է հեղինակի ստեղծագործական վերջին շրջանի երկերի բովանդակային, ձևառուցողական, թեմատիկ, երաժշտալեքսիկական ձևամասնիկներ ու կարծես ամբողջացնում կոմպոզիտորի ողջ ստեղծագործական ուղին ու միաժամանակ նոր լեզվաոճական ճանապարհ նախանշում հայ կոմպոզիտորական արվեստի հետագա ընթացքի համար:

Զեկուցման մեջ արժևորվում են 1990-ականների երաժշտամշակութային ձեռքբերումները և դրանց ուրվագծած ուղիները հայ երաժշտության հետագա զարգացման համապատկերում:

Нарине Саакян

Кандидат искусствоведения,
Ереванская Государственная Консерватория им. Комитаса

ПРОИЗВЕДЕНИЯ 1990-Х ГОДОВ ЛАЗАРЯ САРЬЯНА В КОНТЕКСТЕ ТОГО ВРЕМЕНИ

В докладе рассматривается музыкальная культура Республики Армения в период первого десятилетия ее независимости – тенденции художественно-эстетического мышления, музыкальной лексики, круг тематических интересов армянских композиторов. Анализируются «Три постлюдии», «Passacaglia», «Andante и Presto» Л.Сарьяна. Сделана попытка аксиологического анализа достижений музыкальной культуры 1990-х годов и намеченных в этот период тенденций дальнейшего развития армянской культуры.

Narine Sahakyan
Candidate of Arts,
Yerevan State Conservatory (komitas)

GHAZAROS SARYAN'S WOKS OF 1990-S IN THE CONTEXT OF THAT PERIOD

The report presents the musical culture, trends of the artistic notions, the musical-lexical system of independent Armenia's first decade, the Armenian composers' creative approaches of the mentioned period. The following compositions of Ghazaros Saryan are being studied: "Three Postludes», «Passacaglia», «Andante and Presto». Music-cultural achievements and the directions they outlined for further development of the Armenian musical culture.

Արուսյակ Պետրոսյան
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՕՏԱՆ ԴՈՒՐՅԱՆ

Հայ դիրիժորական արվեստն ունեցել է մի շարք երևելի անհատականություններ: Բավական է հիշատակել Կոնստանտին Սարաջևի, Ալեքսանդր Մելիք-Փաշանի, Միքայել Թավրիզյանի, Սուրեն Չարեքյանի, Միքայել Մալունցյանի, Դավիթ Խանջյանի և էլի շատ նշանավոր դիրիժորների անուններ, որպեսզի վստահորեն ընդգծվի մեզանում արվեստի այդ բնագավառի մակարդակն ու հեղինակությունը:

Սակայն, ցավոք, հանգամանքների բերումով հիշյալ արվեստագետները չկարողացան երևալ եվրոպական ու ամերիկյան բեմերում և ստիպված էին գործունեության շրջանակները սահմանափակել «երկաթե վարագույրի» այս կողմում:

Համատարած «խավարի» տարիներին Արևմուտքում ճա-

նաչվելը գրեթե անհնար էր ու կապված էր անհաղթահարելի բարդությունների հետ: Հատ ու կենտ համարձակներից մեկը, որ կարողացավ գտնել ազատության փշոտ ճանապարհը, Օհան Դուրյանն էր՝ մեր ժամանակների մեծաշնորհ դիրիժորներից մեկը:

Նրա կյանքն ու գործունեությունը ճշմարիտ արվեստին ծառայելու օրինակ են, ամբողջատիրական ժամանակների դառնությունը ճաշակած մտավորականի ճակատագիր:

Երուսաղեմում ծնված, եվրոպական կրթություն ստացած երաժիշտը առաջին անգամ 35 տարեկանում հանգրվանեց Հայաստանում, իր երազների երկրում: Շատ շուտով այստեղ նա արժանանում է ճանաչման, տարբեր տարիներ ղեկավարում է ֆիլհարմոնիկ, հեռուստառադիոկոմիտեի և օպերային թատրոնի նվագախմբերը: Օ. Դուրյանի գերխնդիրը հայ հեղինակների պրոպագանդումն էր, նրանց ստեղծագործությունների ձայնագրումը: 1962-69 թթ. հայաստանյան աշխատանքները համատեղում է Լայպցիգի «Գևանդհաուզ» նվագախմբի, ինչպես նաև օպերային թատրոնի դիրիժորի պարտականությունների հետ: 1974-ին, շնչահեղձ լինելով խորհրդային համակարգի մթնոլորտում, նա հեռանում է հայրենիքից:

Մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ հաղթահարել արհեստական դժվարություններն ու ղեկավարեց աշխարհի առաջավոր գրեթե բոլոր նվագախմբերը, հազարավոր համերգներ, 100-ից ավելի օպերային ներկայացումներ է ունեցել՝ արժանանալով Արևմուտքի խստաբարո քննադատների ամենաբարձր գնահատականներին:

Սիմֆոնիկ և օպերային բնագավառներում լիարժեք գործելու հանգամանքն է, որ ընդգծում է Օ. Դուրյանի համառ աշխատասիրությունը, կամքն ու եռանդը, նպատակին ձգտելու հետևողականությունը: Մեծաքանակ այս երկացանկը անգիր սովորելը, առանց պարտիտուրի մեկնաբանելը մոդայիկ ձև չէ, այլ ասելիքին մինչև վերջ նվիրվելու, կատարվող գործի հանդեպ

զսպող կապանքները դեն նետելու միջոց:

Օ. Դուրյանի համար չկար ավելի մեծ երջանկություն, քան ապրել ու ստեղծագործել հայրենիքում և 1991 թվականին մշակույթի նախարարի առաջարկով 70-ամյա արվեստագետը վերադառնում է Հայաստան: Այստեղ նա գլխավորեց տարիներ առաջ իր իսկ ստեղծած Հայաստանի հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբը, միաժամանակ լինելով ազգային օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր:

Որո՞նք են դուրյանական մեկնաբանության առանձնահատկությունները: Օ.Դուրյանը, ինքը լինելով երաժշտական հետաքրքիր ստեղծագործությունների հեղինակ՝ սիմֆոնիկ սյուիտներ, կոնցերտներ, ծրագրային սիմֆոնիաներ, ռոմանսներ, ավելի քան մյուս դիրիժորները, կարողանում է ընթերցվող-մեկնաբանվող երկում գտնել իմաստավորող շեշտը, մեղեդային ու ռիթմիկ պատկերները: Տարբեր դարաշրջաններին պատկանող գործերը մեկնաբանելիս նա ձգտում է հարազատ մնալ հեղինակին:

Ոգեղեն ինքնադրսևորումը Հայրենիքում հատկապես արտահայտիչ էր. «Արամ Խաչատրյան-90» հորեյլանական համերգաշար, Բրամսի 160-ին նվիրված հանդիսություն, փայլուն պրեմիերաների շարք՝ Ա. Տիգրանյանի «Անուշ», Գ. Դոնիցետիի «Պոդիկտոսը» օպերաները, Լ. Ճգնավորյանի «Օթելլո» բալետը, Բեթհովենյան համերգաշարը, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ամենամյա համերգները, նրա հեղինակային ստեղծագործությունների ելույթները Վանաձորում, Արցախում, Գյումրիում, բարեգործական գործունեությունը: Ինչպես միշտ, Դուրյանի կյանքի ողջ իմաստն ու հետաքրքրությունների շրջանակը միայն ու միայն երաժշտությունն էր:

XX դարում հայ դիրիժորների փայլուն համաստեղությունը վկայում է հայ արվեստի առաջնակարգ լինելու փաստը, իսկ Օհան Դուրյանի գործունեությունը Հայաստանում ավելի լայն թափ հաղորդեց ազգային դիրիժորական արվեստի զարգացմանը:

ОГАН ДУРЯН

Выходец из армянской диаспоры Оган Дурян получил блестящее европейское профессиональное образование. Его мечтой в течение всей жизни была возможность жить и творить на исторической родине предков - в Армении. Часто не по своей воле, он работал и жил на Западе, где был достаточно востребован. Его высокий профессионализм, удивительная память и энергия давали ему возможность на европейском, американском и африканском континентах руководить лучшими оркестрами и оперными труппами. Произведения армянских композиторов исполнялись им с особой любовью и блеском.

С начала 1990-х годов Оган Дурян остался в Армении до конца своей жизни и несмотря на преклонные годы находился в творческом горении, реализовав множество юбилейных программ, оперных премьер, авторских выступлений из собственных сочинений, благотворительных мероприятий и фондовых записей. Оган Дурян может по праву считаться одним из представителей блестящей когорты армянских дирижеров, которые составили славу отечественного исполнительского искусства.

Arusyak Petrosyan
Institute of arts NAS RA

OHAN DURYAN

A Diasporan Armenian, Ohan Duryan completed his professional studies in Europe.

His lifetime dream was to live and create in Armenia – his ancestors' historical homeland. Often not to his own will, he lived and

worked in the West, where he was rather popular. Thanks to his high professionalism, amazing memory and vitality, he enjoyed the opportunity to conduct the best orchestras and operatic troupes in the European, American and African continents. The oeuvre by Armenian composers was performed by him with special love and splendor.

From the early 1990s, Ohan Duryan lived in Armenia until the end of his days. His advanced years notwithstanding, the artist was full of enthusiasm to create, and he did so. He staged opera premiere performances, conducted jubilee programs, concerts of his own compositions, benevolent events and fund recordings. Ohan Duryan can rightly stand among the representatives of the brilliant cohort of conductors, who made the glory of Armenian performing art.

Կարինե Բազեյան

Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոն

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Ասեղնագործությունը հայ ժողովրդի կիրառական-գեղա-
գարդման արվեստի հինավուրց ու հարուստ բնագավառներից
մեկն է, որը հարատևել է մինչ օրս: Որպես մշակութային երևույթ
այն կրել է բազում փոփոխություններ՝ պայմանավորված տար-
բեր դարաշրջանների քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշա-
կութային իրավիճակով, տվյալ ժամանակաշրջանի բնակչության
հոգևոր ու նյութական պահանջմունքների մակարդակով, աշ-
խարհայեցողությամբ, ճաշակով և այլ գործոններով:

Այսօր ասեղնագործությունն այլևս զանգվածային բնույթ չի
կրում, չնայած դրանով զբաղվողների թիվը փոքր չէ: Ոմանց հա-

մար ասեղնագործությունը ապրուստի միջոց է, ոմանց համար՝ ինքնարտահայտման, իսկ մյուսներն այն համարում են ժամանցի միջոց: Բոլոր դեպքերում հենց նրանք են ձևավորում հայկական ասեղնագործության արդի համալիրը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում տեխնիկատեխնոլոգիական, առարկայական (կիրառական), գեղագարդման և այլ առումներով: Ներկայացնենք դրանք առանձին-առանձին՝ ավանդական (XIX դարի) ասեղնագործության համեմատությամբ:

Ժամանակակից ասեղնագործ վարպետները հիմնականում պահպանել են նախկինում տարածված կարատեսակները, սակայն առավել գործածական են համեմատաբար հեշտ կարերը՝ հարթակարն ու խաչկարը: Դրանց զուգահեռ վարպետ ասեղնագործուհիները տիրապետում են հայկական ավանդական մյուս կարատեսակներին՝ Վանի, Այնթապի, Սվազի, Քիլիսի կարերին ու դրանց կատարման հմտություններին: Վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը Մարաշի գաղտնակարի նկատմամբ, ինչը դասավանդվում է նաև ձեռագործի խմբակներում և համամասնորեն տարածվում է ողջ հանրապետությունում:

Բավականին փոխվել են ասեղնագործության կիրառման ոլորտները. եթե նախկինում դա ուղղված է եղել հագուստի գեղագարդմանն ու բնակարանի ներքին հարդարմանը, կազմել հարսնացուի օժիտի կարևոր բաղադրիչը, ապա մեր օրերում այն առավելապես հուշանվերային գործառույթ ունի (եթե դա արվում է վաճառքի համար) կամ զուտ դեկորատիվ բնույթ՝ որպես անհատ ստեղծագործողի ինքնարտահայտման ձև (սովորաբար արված ոչ վաճառքի համար): Շուկայի համար արվող ասեղնագործ իրերն իրենց հերթին մեծ բազմազանություն են ցուցաբերում՝ կապված գնորդների պահանջարկի, նորաձևության, մատչելիության և այլ խնդիրների լուծման հետ: Այսօր կարելի է տեսնել ասեղնագործության կիրառության ոչ ավանդական ձևեր, ինչպես օրինակ՝ զարդեր, աքսեսուարներ, փոքրածավալ տարբեր հուշանվերներ և այլն:

Արդի ասեղնագործությունը մեծ բազմազանություն է դրսևորում հատկապես գեղագարդման տեսանկյունից: Պահպանելով ավանդական ասեղնակարերը՝ ժամանակակից ասեղնագործ վարպետները շատ հաճախ ստեղծագործաբար են մոտենում զարդանախշերի ընտրության, զարդահամալիրի կառուցման, գունային հարաբերությունների ընտրության և այլ հարցերին: Պետք է նշել, որ այս առումով հստակ տարանջատվում է երկու մոտեցում. հայկական ազգային զարդարվեստին բնորոշ պատկերների, նախշերի, թեմաների, մոտիվների ուղղակի կրկնություն կամ պատճենում և ամբողջությամբ ինքնուրույն, անհատական գեղարվեստական լուծում՝ ինչպես ավանդական, այնպես էլ զուտ արդիական-մոդեռնիստական ոճերով:

Հարկ է ընդգծել այն փաստը, որ արդի ասեղնագործության մեջ երկու դեպքում էլ մեծ կարևորություն է տրվում ազգային խորհրդանիշներին, որոնք ներկայացվում են բազում տարբերակներով: Ընդ որում դրանք ոչ միայն ավանդական ասեղնագործական դպրոցներին բնորոշ առանձին պատկերներ կամ նախշեր են, այլև գորգերից, կարպետներից, խաչքարային արվեստից, մանրանկարչությունից վերցված զարդաձևեր ու կոմպոզիցիաներ, որոնք իրենց մեջ կրում են վաղնջագույն ժամանակներից եկող ազգային ինքնության գաղափարներ: Դրանց միջոցով ասեղնագործ վարպետներն ընդգծում են իրենց աշխատանքների էթնիկ պատկանելությունը, գնորդին կամ դիտողին ծանոթացնում հայկական ավանդական ասեղնագործական դպրոցներին բնորոշ զարդանախշերի ու զարդահամալիրների հետ՝ մոռացումից փրկելով վաղուց գործածությունից դուրս եկած ձեռագործի ողջ հարստությունը: Նման բանվածքները՝ որպես հայկականության կրողներ, դառնում են էթնիկ նշան. այսինքն դրանց միջոցով ոչ միայն մենք ենք ճանաչում մեզ, այլև ներկայանում ենք ողջ աշխարհին որպես հինավուրց ու հարուստ մշակույթ ունեցող ազգի:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է ասել, որ ասեղնագործությունը ժամանակակից հայ արվեստի արժեքավոր այն բնագավառներից մեկն է, որը պահպանելով ու շարունակելով ազգային ավանդույթները, միաժամանակ ներկայանում է նորովի՝ արդիական մեկնաբանություններով ու լուծումներով:

Карине Базеян

Кандидат исторических наук,
Ширакский центр арменоведческих
исследований НАН РА

О СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ВЫШИВКЕ

В докладе мы попытались в общих чертах охарактеризовать современную армянскую вышивку и определить ее место и роль в современной культуре. Проведён сравнительный анализ между современной вышивкой и традиционной ручной работой с учётом их технических, прикладных, орнаментальных особенностей.

Karine Bazeyan

Candidate of Historical Sciences,
Shirak Center of Armenian Studies NAS RA

ABOUT ARMENIAN CONTEMPORARY EMBROIDERY

The article tries to describe, in general terms, Armenian contemporary embroidery and define its place and role in contemporary culture.

A [comparative analysis](#) of contemporary and traditional embroidery has been conducted, considering their technical, applied and ornamental features.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐՎԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Գևորգ Պողոսյան Հայաստանի Հանրապետության 25 տարին	3
Աշոտ Մելքոնյան Հայոց պետականության զարգացման փուլերը	9
Էդիկ Մինասյան Հայաստանի անկախ հանրապետության քսանհինգամ- յա ուղին	13
Լևոն Շիրինյան Աշխարհակառույցը XXI դարում	20
Юрий Гаспарян, Гоар Мкоян Взаимосвязь интеллектуальной, экономической, полити- ческой и властвующей элиты в деле совершенствования де- мократии в современной Армении	23
Էդվարդ Կյուրեղյան Աշխարհայացքային ինքնակրթությունը՝ որպես հայոց պետականության ամրապնդման գործոն	26
Հարություն Մարության Ղարաբաղյան շարժումը (1988-1990) և Հայաստանի եր- րորդ հանրապետության ձեկավորումը	30

Մանուկ Հարությունյան Քաղաքական օտարումը և նրա հաղթահարման ուղի- ները /Հայաստանի օրինակով/	37
Հենրիկ Արրահամյան ՀՀ անկախությունը և հասարակական - քաղաքական կյանքի ակտիվացման առաջին քայլերը 1980-1990-ական թվականներին	43
Էմիլ Օրդուխանյան Ինտեգրման գործընթացները և ժողովրդավարության մարտահրավերները հետխորհրդային երկրներում	48
Հայկ Սուքիասյան Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը հետխորհրդային բազմակազմ հասարակություններում	52
Գուրգեն Սիմոնյան Ուժեղ պետության կայացումը ազգային շահի արդիա- կանացման համատեքստում	55
Владимир Осипов Политика республики армения по достижению гендер- ного равенства: эволюция и перспективы	58
Ирина Аракелян Миграция населения Армении в постсоветский период....	63
Քնարիկ Պետրոսյան Հայաստանի երրորդ հանրապետությունը և հայրենիք- սփյուռք առնչությունները	68

Մարինե Գևորգյան Հողի սեփականաշնորհման խնդիրները Հայաստանի եր- րորդ հանրապետությունում 1991-2000 թթ.	72
Կարեն Մկրտչյան Իրանի հայ համայնքի աջակցությունը նորանկախ Հա- յաստանի Հանրապետությանը	77
Անահիտ Զիջյան, Ռոմիկ Քոչարյան Պետությունը և սոցիալականորեն նշանակալի կարիքը ..	79
Արտաշես Բոյաջյան Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական փոփոխություն- ները XX դ. վերջին և XXI դ. սկզբին	84
Ներսես Քոչարյան Հայաստանում կրոնական իրավիճակի որոշ առանձնա- հատկությունները	87
II. ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25 ՏԱՐՎԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ	
Արմինե Զախարյան Ազգաբնակչության կենսամակարդակի բարելավման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում	92
Կարեն Սարգսյան Կայուն տնտեսական աճի արդի հիմնախնդիրները ՀՀ-ում	98

Քրիստինե Բաղդասարյան Հարկային բարեփոխումներ, ստվերային տնտեսություն և տնտեսական զարգացում	103
Գառնիկ Սաֆարյան Ազգային իրավական համակարգի պատմական զար- գացման հիմնական ուղենիշները	107
Լիլիթ Ղազանջյան Անձի իրավական դրության առանձնահատկությունները հայոց նորագույն պետականության քառորդ դարում	111
Արտյոմ Սեդրակյան Հայաստանի երրորդ հանրապետությունում անվտան- գության իրավական ապահովման արդյունավետու- թյունը	116
Արկադի Ակոպով Վրաստան-Թուրքիա-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցության ազդեցությունը Հայաստանի ան- վտանգության վրա	121
Վաղարշակ Մատիկյան ՀՀ սահմանադրությունը եվ հայոց «ապագայի» խնդիրը ..	126

III. ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ 25
ՏԱՐՎԱ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Աննա Ասատրյան

Արամ Սաթյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում	130
Suren Zolyan The political symbolism of the third republic: still in quest for identity	134
Լիլիթ Մկրտչյան Կրթության արդիականացում. հանրակրթությունը ՀՀ անկախության տարիներին (1991-2005թթ.)	138
Սյուզաննա Եղիազարյան Հայ ուսանողները որպես անկախության սերունդ	142
Անահիտ Բաղդասարյան Հայ երաժշտական ֆոլկլորագիտությունը վերջին քսան- հինգ տարիների ընթացքում (ժողովրդական երաժշտու- թյան ձայնագրյալ ժողովածուների օրինակով)	146
Լիլիթ Արտեմյան Լևոն Չաուշյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում	149
Տաթևիկ Շախկուլյան Կոմիտասի թանգարան-ինստիտուտ. քառորդդարյա պե- տության առաջին թանգարանը	153
Դավիթ Քերթմենջյան Հայկական արդի ճարտարապետության նոր զարգա- ցումները անկախության ժամանակաշրջանում	156
Арсен Амбарцумов	

Армянский кинематограф. модель	160
Հասմիկ Հարությունյան Ավանդական երաժշտության արդի դրսևորումները Շիրակում	164
Նարինե Սահակյան Ղազարոս Սարյանի՝ 1990-ականների ստեղծագործությունները ժամանակի համատեքստում	168
Արուսյակ Պետրոսյան Օհան Դուրյան	171
Կարինե Բազեյան Ժամանակակից հայկական ասեղնագործության շուրջ ...	175

**ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔԱՌՈՐԴ ԴԱՐԸ**

Գիտաժողովի զեկուցումների դրույթներ

2016թ. հուլիսի 15

**Տեխնիկական խմբագիրներ – իր.գիտ.թեկ. Լ.Ղազանչյան,
Ն.Սաֆարյան**

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 698
Ստորագրված է տպագրության՝ 15.06.2016թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 11.75 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24